




# ԶՄԻԱԾԻՆ

1978  
Լ.Ք.



№ 146



ԼԵ  
ՏԱՐԻ



# ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԱԹՈՌՈՒՅ  
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Չգրասրահ - Արագածոտնի միջին

1978



ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ**

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ  
 ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՐԼՈ  
 ԿՈՆՖԱՆԼՈՆԻԵՐԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԱՐԴԻՆԱԼԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Վատիկան—Հռոմ

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, անխառն զգացումներով մասնակցում է ձեր մեծ եկեղեցու սուգին և աղոթում, որ հանգուցյալ Պողոս Զ Սրբազան Պապի հոգին, բարին Աստված քաղցրությամբ ընդունի հավիտեանական լույսերի ափին և սուրբ պահի նրա հիշատակը, որ մեր փոթորկալից ժամանակների մարդկության վիշտը իր սրտում և Քրիստոսի խաչը իր ուսերին սուած աշխարհին տևապես բաշխեց սեր և հույս, խաղաղություն և հաճություն ի մարդիկ:

Սուրբ Էջմիածնից օրհնություն Պողոս Զ Պապի քրիստոսանվեր վաստակին:

**Վ Ա Ջ Գ Ե Ն Ա**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

10 օգոստոս 1978 թ.



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ  
ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ  
Ա ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻՆ**

**Վատիկան—Հոտ**

Ուրախ արտով շնորհավորում ենք Ձերդ Սրբության ընտրությունը իբրև Գերագույն Պետ Հոռմեական կաթոլիկ մեծ եկեղեցու, ընտրություն, որով մի նոր էջ է բացվում Հոռմի առաքելական սուրբ Աթոռի մոտ երկհազարամյա պատմության մատյանում:

Մաղթում ենք, որ Տերը Ձեզ պարզևի կենաց երկար տարիներ ու մշտա-նորոգ ներշնչումներ, որպեսզի փառավորեք ձեր սուրբ եկեղեցին աստվա-ծահաճո նորանոր իրագործումներով և Ձեր նախորդների ճանապարհով դառնաք մի առաքյալ աշխարհի խաղաղության և բոլոր ազգությունների համերաշխ գործակցության:

Քրիստոնյա Հայաստանից և սուրբ Էջմիածնից ընդունեցեք եղբայրա-կան հարգալից սիրո Մեր ողջույնը:

Աստուծո սուրբ Հոգին թող մնա Ձեզ միշտ առաջնորդող լույս: Ամեն:

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,

30 օգոստոս 1978 թ.

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա ՊԱՊԻ  
ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ Ի  
ՊԱՏԱՍԽԱՆ ՆՐԱ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԻ**

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ**

**Ս. Էմիածին**

Խորապես զգացված ենք Մեր անձի նկատմամբ Ձերդ Սրբության ար-տահայտած զգացմունքների համար այն պահին, երբ Տերը վստահում է Մեզ այս ծանր առաքելությունը՝ ի ծառայություն Իր եկեղեցու:

Հայտնում ենք Ձեզ Մեր շնորհակալությունը և վստահեցնում, որ Մեր կամքն է՝ անվարան առաջ ընթանալ այն ճանապարհով, որը մեզ պետք է տանի մեր եկեղեցիների միջև ամբողջական հաղորդության վերհաստատ-մանը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

**ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Ա**

Վատիկան,

9 սեպտեմբեր 1978 թ.





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ  
 ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.  
 ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ  
 ՀԵՌԱԳՐԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՏԱԾԱՏ  
 ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՈՒՐՖԱԼՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ա. Էջմիածին

Խորապես վշտացած ենք հայտնելու Ձերդ Սրբության Լիբանանի մեր  
 առաջնորդ սիրեցյալ Տաճատ արքեպիսկոպոս Ուրֆայանի հանկարծամահ  
 լինելը: Թաղման արարողությունը կատարվելու է շաբաթ, սեպտեմբերի 9-ի  
 կեսօրվան:

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

Աթոռակից կաթողիկոս

Բեյրութ,

7 սեպտեմբեր 1978 թ.

\*  
\* \*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ  
 ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս

Խոր վշտով կարդացինք Ձեր հեռագիրը Տաճատ արքեպիսկոպոսի  
 վախճանման մասին: Սրտանց կաղոթենք հանգուցյալ սրբազանի հոգիին  
 համար, որ երկար տարիներ ծառայեց մեր սուրբ եկեղեցիին և Ձեր Աթո-  
 ուին օրինակելի անձնվիրությամբ, սիրված ու հարգված ժողովուրդի կողմե:  
 Թող Աստված խաղաղությամբ ընդունի անոր բարի հոգին և արժանի  
 ընեն երկնից արքայության:

Կիրակի, 10 սեպտեմբերին, հանդիսավոր հոգեհանգիստ Մայր տաճա-  
 րին մեջ՝ Մեր նախագահությամբ:

**ՎԱԶԳԵՆ Ա.**


ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

8 սեպտեմբեր 1978 թ.







ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.-Ի  
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆՑ ԴԱՀԼԻԾՈՒՄ  
(Ժընև, 21 հունիս, 1978)

Տիրոջ ողորմութեամբ և Ձեր հրաւերով ուրախ սրտով կու գանք, Մեր երկրորդ պաշտօնական այցելութիւնը տալու Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կեդրոնին, զոր մերն ալ կը նկատենք, քանի որ Հայաստանեայց եկեղեցին անդամներէն մէկն է այս միջեկեղեցական կազմակերպութեան: Այս պահուս Մենք շատ ուրախ ենք որ Մեր կողքին կը գրուանրին մեր եկեղեցոյ բարձրաստիճան ծանօթ հոգևորականներ Սովետական Հայաստանէն, Երոպայէն և Ամերիկայէն, իրենց գլուխը ունենալով Երուսաղէմի հայոց սուրբ Աթոռի գահակալ տ. Եղիշէ պատրիարք Տերտերեան:

Հայ եկեղեցին քրիստոնէական քոյր եկեղեցիներու հանդէպ իր միշտ լայնախոհ ու յարգալիր վերաբերումով, Էկումենիկ ոգի կրող եկեղեցիներէն մին հանդիսացած է, գոնէ վերջին հարիւր տարիներու ընթացքին: Այդպէս է որ երբ առաջին համաշխարհային պատերազմէն յետոյ, առաջին փորձերը կ'ըլլային Էկումենիկ շարժում մը ստեղծելու, հայ եկեղեցին իր համակրութիւնը և համամտութիւնը դրսևորած է և փափաքած իր մասնակցութիւնը բերելու: Յայտնի է որ 1937-ին, Էտենայուրիի համագումարին Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Խորէն Ա Մուրաթէկեան, յանուն ս. Էջմիածնի, ուղարկած է երկու ներկայացուցիչներ յանձինս՝ Մատթէոս Ինճէեան և Յուսիկ Չոհրապեան արքեպիսկոպոսներու, առաջինը Մանչեստրի հայոց հոգևոր առաջնորդ, երկրորդը՝ Ռումանիոյ հայոց թեմակալ առաջնորդ:

Հայ եկեղեցոյ Էկումենիկ ոգին յստակ կերպով արտայայտողներէն մին եղած է նաև անցեալ դարու վերջերուն Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարք և յայտնի պատմաբան՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, որ իր «Հայ եկեղեցին» գործին մէջ հետևեալ վկայութիւնը կը բերէ՝

«Հայ եկեղեցին միաբանութիւնը հասկցաւ միշտ բառին ճիշտ ու սեղմ նշանակութեամբ: Նա միաբանութիւն ըսելով ուզեց ունենալ եկեղեցիներու միջև հոգևորական հաղորդակցութիւն, փոխադարձ յարաբերութիւն, իրարու դիրքին հանդէպ յարգանք, և իւրաքանչիւրին համար իւր շրջանակին և սահ-



մաններում մեջ ազատություն և ամենուրեք վրայ տիրապետող քրիստոնեական սուրբ սերը: Նա երբեք չուզեց հանդուրժել, որ միաբանությունը տիրապետության փոխուի և մարդոբուսության վերածուի» («Հայ եկեղեցի», Կ. Պոլիս, 1912, էջ 64):

Այսպիսով, Օրմանեան պատրիարք հայ առաքելական եկեղեցույ մեծագույն դեմքերէն մին, արդի էկումենիզմի ռաբիվիրաներէն մին կը հանդիսանայ արդարօրէն:

Եւ այսօր ալ մեր սուրբ եկեղեցին, այս ոգիով և այս մտածելակերպով է որ կը մասնակցի գործուն կերպով Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին: Եւ ինչպէս ամէն պատմական եկեղեցի, նաև Հայաստանեայց առաքելական եկեղեցին, իր գլուխն ունենալով Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, կը մասնակցի էկումենիկ շարժումին, իր հետ բերելով իր հաւատքի և առաքելականութեան վկայութիւնը, իր դասաւարանական մտածելակերպը, մօտ երկու հազար տարիներու իր պատմական փորձը, իր հոգևոր գրականութեան ու կրօնական արուեստներու գանձարանը, իր նուիրապետական կարգն ու ինքնագլուխ դրոյթիւնը և վերջապէս իր ազգային նկարագիրն ու հոգեբանութիւնը:

Մենք երբեք չենք մտածեր վեճի առարկայ դարձնել մեր քոյր եկեղեցիներու դասաւարանական դիրքերը, ու եղբայրօրէն կը յարգենք զանոնք:

Եկեղեցիներու միութիւն ըսելով, մեր դարաշրջանին, Մենք կը հասկընանք ուրեմն, սիրոյ յարաբերութիւններու զարգացում և եղբայրական գործակցութիւն եկեղեցիներու միջև, ի խնդիր Քրիստոսի Աւետարանի լոյսի հետզհետէ առաւել ճառագայթումին, ի խնդիր Քրիստոսի Աւետարանի սիրոյ և խաղաղութեան ոգիի արմատատրման մարդկանց հոգիներուն և ժողովուրդներու կեանքին մէջ, ամէն մէկ եկեղեցի պահպանելով իր դասաւարանական մտածելակերպը, իր ասանդութիւնները և ինքնագլուխ դեկավարութիւնը:

Միջեկեղեցական կեանքէն, մանաւանդ իսպառ պէտք է վերանան անհանդուրժող ոգին, մէկը միւսին ուղղափառութիւնը խնդրոյ առարկայ դարձնելու այլևս ծամանակալիւրէպ յակնութիւնները, դասաւարանական բացայայտ կամ թաքուն գործունէութիւնը, այս բոլորը հանդիսանալով հակաէկումենիկ դրսևորումներ, որոնք կ'արգելակեն ու կը պղտորեն իրաւ էկումենիկ յարաբերութեանց զարգացումները: Կը խորհիմք, թէ ոչ մէկ առանձին եկեղեցի ունենալու չէ մենաշնորհը «արքայութեան բանալիներու»:

Հայ եկեղեցին կը դասանի եկեղեցիներու միութիւնը՝ սուրբ Գիրքը և սուրբ ասանդութիւնները ընդունելով իբրև հաստատուն հիմք, և պատմականօրէն ծնունդ առած ու զարգացած քրիստոնեական բոլոր եկեղեցիները՝ իբրև մէկ կենդանի մարմին, որու գլուխը կը գտնուի Ինքը մեր Տէրը և Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Բոլոր մեր եկեղեցիները միևնոյն խորհրդաւոր մարմնի անդամներն են: Չմոռանք երբեք Պօղոս առաքելի խօսքը՝ «Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք, հաւատովն ի Քրիստոս: Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք, ..., զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս» (Գաղ. Գ 26—27):

Բոլոր պատմականօրէն զարգացած եկեղեցիներու բազմադարեան կրօնական փորձով ու արժէքներով առարկայացած արտայայտութիւնները կը կազմեն այն համաքրիստոնեական տիեզերական գանձարանը, որ իր ամբողջութեամբ միայն, իր այլազանութեամբ ու բազմերանգութեամբ, նուազիկ երբեմն իր հակասութիւններով, լիութեամբ կ'արտացոլէ տիեզերքը



Աստուծոյ խօսքին և կը ճառագայթէ փառքը Քրիստոսի լոյսին, մտածումի տարբեր ձևերով, զգացումի տարբեր երանգներով, տարբեր լեզուներով, տարբեր դաշնաւորումներով:

Հայաստանեայց եկեղեցին, իբրև աշխարհի հնագոյն եկեղեցիներէն մին, իբրև առաքելական ծագում ունեցող և 4-րդ դարուն պետական եկեղեցի հռչակուած եկեղեցի ս. Էջմիածնի իր կեդրոնով, և իբրև եկեղեցի որ մօտ երկու հազար տարիներէ ի վեր վառ պահած է Քրիստոսի լոյսը Արևելքի սահմաններուն վրայ, յաճախ իր ժողովուրդի մարմնոյն նահատակութեան գնով, որ իր քրիստոնէական հաւատքը և առաքելութիւնը արտայայտած և քիչեղացուցած է ստեղծագործօրէն ինքնատիպ իրագործումներով, չի կրնար այսօր տարբեր մտածում և վերաբերում ունենալ Էկումենիկ հարցերու առնչութեամբ: Տակաւին 5-րդ դարու մեր պատմիչներէն՝ Եղիշէ վարդապետ կը գրէր իբրև պատասխան պարսից Յազկերտ արքային, թէ՛ մենք հայերս քրիստոնէութիւնը ընդունած ենք ոչ զգետտի մը նման, այլ ան դարձած է մեր մարմնի գոյնը, որ կարելի չէ փոխել մինչև վախճանը աշխարհի:

Էկումենիկ շարժումը Մենք կ'ըմբռնենք նաև իբրև շարժում մը որ պետք է սերտօրէն առնչուի արդի աշխարհը յուզող հարցերուն հետ, ստանց հակադրուելու գիտութեանց նուաճումներու ընթացքին և ընկերային-քաղաքական արդիական զարգացումներուն: Մեր համոզումով, ոչ միայն պետք չէ հակադրուիլ արդի գիտութեան յայտնաբերած ճշմարտութիւններուն և ժողովուրդներու զանգուածներու ընկերային-քաղաքական խմորումներուն և որոնումներուն, այլ պետք է մօտենալ անոնց, այդ հարցերուն, այդ զարգացող երևոյթներուն՝ բարի կամքով և յաւատեալութեամբ, Քրիստոսի Աւետարանի լոյսով մեր նպաստը բերելու համար ի խնդիր անելի արդար, անելի ազատ ու անելի խաղաղ աշխարհի մը կառուցման: Մենք կը հաւատանք թէ Քրիստոս Իր Աւետարանով կրնայ նոր խօսք ըսել արդի և սուրբագայ մարդկութեան: Քրիստոսի Աւետարանը սխալ է մենաշնորհը նկատել մէկ կամ միւս դասակարգին, մէկ կամ միւս դարաշրջանին:

Քրիստոնէական հաւատքի և ընկերվարական մտածողութեան դիրքերու միջև Մենք կը կարծենք թէ հնարատր է հասարակաց գետին գտնել և գործակցութիւն գոյացնել՝ մարդու հանդէպ՝ սիրոյ և մարդու իրաւունքներու հանդէպ յարգանքի հիմքերու վրայ: Որովհետև անժխտելի է նաև ընկերվարական մտածողութեան հումանիզմը:

Արդի աշխարհի անջև ծառայող ամենահրատաւ ու ամենակենսական հարցը, անշուշտ մեր երկրագունդի վրայ ազգութիւններու խաղաղ գոյակցութեան հրամայականն է: Ահաւասիկ գերազանցօրէն համաքրիստոնէական մտահոգութիւն մը, գործունէութեան լայն դաշտ մը: Այդօրէլ ու գործել աշխարհի խաղաղութեան պահպանման համար, մարդկութեան հանդէպ սեպտիկ պարտականութիւնն է բոլոր եկեղեցիներուն, բոլոր քրիստոնէաներուն: Ատոմական ուժերու սանձազերծման մեր դարաշրջանին այլևս կարելի չէ քրիստոնէայ ըլլալ ու անվերապահօրէն չգործել խաղաղութեան դատին յայթանակին համար:

Մեր բոլորիս վրայ, համայն մարդկութեան վրայ, դամոկլեան սուրի նման կախումն է պատնացող՝ հարցը՝ ո՞վ դաշինք պիտի կնքէ հիվէական ուժերուն հետ, պատերազմի մահասփիւռ ոգի՞ն, թէ խաղաղ ու արդար աշխատանքի իտէալը ի խնդիր բոլոր մարդկանց բարօրութեան: Այդ դաշինքի կնքումը որոշելու հարցի մէջ, ստատելապէս Քրիստոսի եկեղեցին է որ առաջին քաջ նետողը պետք է ըլլայ, ճեղքելով բոլոր մշուշները իր Աւե-



տարանի լոյսով: Վառնգի կրօնական մարդու կնքած դաշինքը Աստուծոյ հետ՝ կենաց և խաղաղութեան դաշինք է:

Արդ, Մեր իղձն ու Մեր հրաւերն է որ բոլոր քրիստոնէական եկեղեցիներու և բոլոր կրօններու սեպուհ պարտքը ըլլայ մէկտեղուիլ ու եղբայրանալ միասնաբար աղօթելու, քարոզելու և գործելու համար յանուն աշխարհի խաղաղութեան, ընդդէմ սպառազինութիւններու, ընդդէմ ամէն տեսակի ասոմական կամ նեոտրոնեան ռոմբերու պատրաստման, ընդդէմ նուաճողական քաղաքական ձգտումներու, ընդդէմ ազգամիջեան թշնամութիւններու արծարծման, ընդդէմ ժողովուրդներու ազատ ինքնորոշման կաշկանդման, ընդդէմ ազգային փոքրամասնութեանց նկատմամբ գործադրուող արգելակումներու և հալածանքներու՝ կրօնական, կրթական, մշակութային և ընկերային գետնի վրայ: Եւ եթէ Մենք այսօր այսքան ծանրօրէն մտահոգուած կը խօսինք պատերազմ-խաղաղութիւն հարցի շուրջ, պատճառներէն մին այն անհատ որբերգութիւններն են, որոնք կեանքի բաժինը եղած են մեր եկեղեցիին ու ժողովուրդին անցեալ պատերազմներու ընթացքին:

Մեր հետաւոր անցեալէն յիշենք միայն 11-րդ դարու հայ պատմիչ Արիստակէս վարդապետ Լաստիվերտցիի դառն խօսքերը՝

«Ոչ մէկ օր չհանդիպեցանք խաղաղութեան և դիրքութեանց, այլ մեր ժամանակի բոլոր օրերը լեցուն եղան խռովութիւններով ու տառապանքներով»: Յիշենք նաև մեր ժողովուրդի՝ 1915-ի ցեղասպանութեան ողբերգութիւնը, երբ բնաջնջուեցաւ Արևմտեան Հայաստանի ամբողջ ազգաբնակչութիւնը: Մենք չենք կամենար որ այլևս կրկնուին նման ողբերգութիւններ ոչ մէկ ատեն և ոչ մէկ տեղ աշխարհի վրայ:

Մենք քաջ գիտենք թէ նաև Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը այս գիտակցութեամբ կը ծառայէ իր գործունէութիւնը:

Կը վստահեցնենք Ձեզ թէ մեր եկեղեցին համակրանքով կը վերաբերի Խորհուրդի գործունէութեան և սպասրաստ է բերելու իր աջակցութիւնը ձեր բոլոր աշխատանքներուն, որոնց կը հետևինք մեծ ուշադրութեամբ: Կը կամենայինք Մեր սրտագին շնորհատրանքը յայտնել այստեղ գլխաւոր քարտուղար տոքթ. Ֆիլիպ Փոթըրին, այն ճիշդ ուղղութեան համար զոր որդեգրած է Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը և որ այնքան յստակօրէն արտայայտուեցաւ Նայրոպիի Հինգերորդ Համաժողովին. այն է՝ Աւետարանի վկայութիւնը և մեր հաւատքի դասանութիւնը տանիլ դէպի աշխարհի անտեսուած շրջանները՝ խիզախ համերաշխութեամբ մը բոլոր անոնց հետ, որոնք կը պայքարին արդարութեան և ազատութեան համար, ընդդէմ բռնութեան և ճնշումներու, ընդդէմ պատերազմի:

Համբերութեամբ, քաջութեամբ և լաւատեսութեամբ պէտք է հերոսական ճիգեր ի գործ դնել, մեր ժամանակներուն յարափոփոխ ընկերային, քաղաքական իրավիճակներու զարգացման ճանապարհին յայտնաբերելու նորանոր հնարատրութիւններ և ուղիներ, իրագործիչ ուժականութիւն դարձ-




նելու համար մեր հոգևոր առաքելութիւնը, Քրիստոսի լոյսով, Քրիստոսի սիրով, Քրիստոսի փրկութեան անտիսով:


«Քանզի կենդանի է Բանն Աստուծոյ և ազդող և հատու քան զանձնայն սուր երկասյրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգոյ և օրից և ուղղոց. և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից» (Եբր. Դ 12):

Արդ, սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս, յանուն հայ առաքելական եկեղեցոյ և յանուն համայն հայ հաւատացեալ ժողովուրդի որ ի Սովետական Հայաստան և որ ի սփիտս աշխարհի, մեր պատուիրակութեան անդամ Մեր եղբայրներու հետ միատեղ Ձեզի կը բերենք մեր յարգալիր ողջոյնը և բարի մաղթանքները որ Տէրը զՁեզ միշտ մնայ օգնական և մարտակից Ձեր սուրբ առաքելութեան ճանապարհի վրայ:

«Այլ Աստուած յուսով լի արասցէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առանելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:







ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏՈՐ ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻ  
ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ ԺԸՆԵՎՈՒՄ,  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆՑ ԴԱՀԼԻԾՈՒՄ  
(Ժընն, 21 հունիս, 1978)

Ձերդ Սրբություն,

Անձնապես մեծ ուրախություն է ինձ համար ընդունել Ձեզ այստեղ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի այս կենտրոնում: Այստեղ Դուք Ձեր տանն եք, որովհետև, իբրև գերագույն հոգևոր պետը Հայաստանյայց առաքելական եկեղեցու, որը 1962 թվականից ի վեր անդամ է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, այս տունը, որ Դուք առաջին անգամ այցելել եք 1967 թվականի հուլիսին, նույնպես Ձերն է:

Մենք ուրախ ենք նաև այս առթիվ ողջունելու Աերկայությունը մեր մեջ ձեր եկեղեցու բազմաթիվ բարձրաստիճան հոգևորականների, որոնք եկել են Սովետական Հայաստանից, Եվրոպայից և Հյուսիսային Ամերիկայից, ողջունելու մասնավորապես Աերկայությունը Երուսաղեմի հայոց պատրիարք, Նորին ամենապատվություն տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի:

Մենք առանձնահատուկ հարգանք ունենք Հայաստանյայց առաքելական եկեղեցու նկատմամբ: Գիտենք, որ հայ ժողովրդի մեջ Ավետարանը քարոզվեց սուրբ Թադեոս և սուրբ Բարթողիմեոս առաքյալների և մարտիրոսների կողմից: Սակայն այն մեծ անունը, որ անբաժանելիորեն կապված է հայ եկեղեցու պատմությանը, սուրբ Գրիգոր Լուսավորչի անունն է. արդարև՝ մի սուրբ և Աերջնչյալ մարդ, որը, Յ-րդ դարի վերջերին, քաջությունն ունեցավ վկայելու իր հավատքը Տրդատ Գ թագավորի արքունական շրջանակում: Թագավորն իր պալատն ընդունեց սուրբ Գրիգորին, ինչպես նաև այն բարեպաշտ կանանց, որոնք իրենց հավատքի բարի վկայությունն էին տվել: Ի վերջո թագավորն ընդունեց քրիստոնեական հավատքը և իր կնոջ աջակցությամբ, որն արդեն քրիստոնյա էր, օրինակելի եռանդով աշխատեց, որպեսզի Ավետարանը քարոզվի ամբողջ իր ժողովրդի մեջ: 301 թվականին հայ ժողովուրդը դարձավ աշխարհում առաջին քրիստոնյա ազգը:

Նույն թվականին սուրբ Գրիգորն ունեցավ Միաձին Որդու տեսիլքը.



Քրիստոս, ոսկի մուրճը ձեռքին, իջնում էր երկնքից և խփում գետնին, Արարատ լեռան դիմաց: Այնտեղ է, որ սուրբ Գրիգորը կառուցեց Էջմիածնի Մայր տաճարը: «Էջմիածին» բառը նշանակում է «Միածին, Որդու էջքը» այն՝ վայր, որտեղ սուրբ Գրիգորը հաստատեց իր Աթոռը՝ որպես Հայաստանյայց եկեղեցու առաջին Պատրիարք-կաթողիկոս: Եթե չեմ սխալվում, Ձերդ Սրբությունը սուրբ Գրիգոր Լուսավորչի 130-րդ հաջորդն է:

Ինչ որ ամենից ավելի ինձ տպավորում է հայ մարդկանց մեջ, դա այն է, որ նրանք մինչև իրենց էության ամենահետին բջիջները արտակարգ կերպով ներթափանցված են քրիստոնեական հավատքով: Այս տեսակետից հատկանշական է 5-րդ դարի հայ պատմիչներից մեկի այն վկայությունը, թե քրիստոնեական հավատքը փոխ առնված մի զգեստ չէ հայերի համար, այլ այն նրանց էության մասն է կազմում, ինչպես նրանց մարմնի գույնը, որ հնարավոր չէ փոխել մինչև աշխարհի վախճանը: Հայ լինել՝ նշանակում է լինել քրիստոնյա:

Հայ ժողովուրդը շատ է տառապել դարերի ընթացքում: Եվ սակայն բազում փորձությունների, հալածանքների և նույնիսկ ջարդերի ժամանակ նա կարողացել է անհախտ պահել իր հավատքը: Հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշեն ասել է. «Յայսմ հաատոց ոչ որ կարէ բաժանել զմեզ»:

Հայ առաքելական եկեղեցու պատմությունը մարտիրոսագրություն է, հավատքի վկայություն՝ մինչև մահ: Այսպիսի մի հավատարմություն քրիստոնեական հավատքի հանդեպ, գրեթե ամբողջ երկու հազարամյակ, ներշնչման անսպառ աղբյուր է աշխարհի բոլոր քրիստոնյաների համար:

Մենք մեծապես երախտապարտ ենք հայ եկեղեցուն՝ Էկումենիկ շարժմանը նրա բերած ստեղծագործ նպաստի համար: Նրա ծիսական, գեղարվեստական, իմացական և հոգևոր հարուստ ավանդությունները ուշադրություն են գրավել աշխարհում ամենուրեք, որտեղ կա ու գործում է հայկական մի եկեղեցի:

Ես ուզում եմ նաև մեր ջերմ երախտագիտությունը հայտնել Ձեզ այն հետաքրքրության համար, որ Ձերդ Սրբությունը ցուցաբերել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեության նկատմամբ: Մենք շատ ուրախ ենք այն եղբայրական հարաբերությունների համար, որ ունեցել ենք Ձերդ Սրբության և սուրբ Էջմիածնի հետ: Իմ նախորդները՝ դոկտ. Վիսերտ Հուֆթը, որը մեզ հետ է այստեղ, ինչպես նաև դոկտ. Բլեյկը և այլ պաշտոնակիցներ այցելել են Ձեզ Էջմիածնում: 1962 թվականից ի վեր ձեր եկեղեցին մասնակցել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի աշխատանքներին, և մենք մեծապես օգտվել ենք մեր կազմակերպությանը հայերի բերած արժեքավոր նպաստից: Ես ինքս հույս ունեմ այցելելու Ձեզ սուրբ Էջմիածնում առաջիկա հոկտեմբերին:

Այստեղ ես կցանկանայի նաև համատոտակի նշել մի քանի կարևոր կետեր, որոնք վերաբերում են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ մյուս եկեղեցիների հետ հայ առաքելական եկեղեցու ունեցած հարաբերություններին: Այսօր Էկումենիկ շարժման ոլորտում շատ ենք խոսում աշխարհի տարբեր ժողովուրդների ստեղծած մշակույթների շուրջ համաշխարհային դիալոգների մասին: Մենք ընդունում ենք, որ քրիստոնեական հավատքը պետք է մարմնավորվի և վավերականորեն արտահայտվի յուրաքանչյուր մշակույթի մեջ: Արդ՝ հայերի կենդանի փորձառությունը ներշնչման սթանդեյթի մի օրինակ է մեզ բոլորիս համար: Հայերի մոտ հավատքըն ու մշակույթը արդյունավետ հարաբերության մեջ են սուրբ Հոգու հո-



վանավորության տակ: Հայերը դրսևորել են նույնպես յուրահատուկ մի ոգի՝ հոգևոր կյանքը չբաժանել բնավ իմացական և մշակութային կյանքից: Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքը՝ Միածին Որդու Էջքը հայկական հողի վրա, դարեր շարունակ լուսավորել է հայ ժողովրդի ողջ կյանքը: Աշխարհում նրանք հռչակված են կյանքի բոլոր բնագավառներում իրենց քերած նախատի համար: Հայերը, ինչպես նշեցի քիչ առաջ, բնագում փորձություններ են տեսել դարերի ընթացքում: Բայց յուրաքանչյուր ճգնաժամ մի առիթ է հանդիսացել նրանց՝ ոգեկոչելու սուրբ Հոգու լույսը, Աստուծո՞ հոտի մեջ, եկեղեցու ավանդությունների մեջ, որպեսզի վերանորոգվեն կյանքում և եկեղեցու վկայության մեջ: Դրանում է գաղտնիքը հայ ժողովրդի զարմահալի վերածննդի, ամենուր, որ հանդիպում ենք նրան:

Հույս ունենք, որ Ձերդ Սրբության, «ինչպես՝ և ձեր եկեղեցու» մյուս բարձրաստիճան հոգևորականների այս այցելությունը թանկագին մի առիթ կլինի խորացնելու և սերտացնելու Էջմիածնի կաթողիկոսության մասնակցությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գործունեությանը՝ Է՛լ ավելի առաջ մղելու համար պաշտամունքի և ի Քրիստոս հասարակաց կյանքի մեջ արտահայտված տեսանելի միությունը՝ խարսխված մեկ հավատքի և ի հաղորդության եղող մեկ հասարակության վրա, Է՛լ ավելի առաջ ընթացալու համար դեպի այդ միությունը, որպեսզի «աշխարհը հավատա»:

Թող Աստված օրհնի Ձերդ Սրբությունը և իր փառքի գործությամբ ըստ ամենայնի գորացնի Ձեզ հարատևության և համբերության մեջ բոլոր փորձությունների դեմ և թող պարզևի Ձեզ շնորհն ու ուրախությունը՝ առաջնորդելու, ինչպես բարի հովիվը, Ձեր աշխարհապիտոս հոտը:





# Քույր Եկեղեցիներ



## Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպիսկոպոսի և սուրբ Սարգիս ու սուրբ Պետրոս եկեղեցիների վարչությանց հրավերով, սույն թվականի հունիսի 9-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը ժամանեց Լոնդոն՝ ընկերակցությամբ Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանի և Ռուսաստանի ու Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանի:

Լոնդոնի օդանավակայանում Հայոց Հայրապետը ջերմորեն դիմավորվեց Լոնդոնի հայ եկեղեցական և աշխարհական պաշտոնական անձնավորությանց, ինչպես նաև Քենթրբերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչների կողմից:

Լոնդոնում, ի պատիվ Նորին Սրբության, երեք օրերի ընթացքում կազմակերպվեցին հանդիսություններ՝ Քենթրբերիի արքեպիսկոպոսի հոգևորականությանը և Քենթրբերիի կողմից, Լամբեթ սլավատում, Լոնդոնի եպիսկոպոսի հոգևորականությանը և Քենթրբերիի կողմից՝ ա. Պողոս Մայր տաճարում, և ս. Ալբանի եպիսկոպոսի հոգևորականությանը և Քենթրբերիի կողմից՝ ս. Ալբանի պատմական տաճարում և Լորդերի պալատում:

Հունիսի 11-ին, կիրակի օրը, Նորին Սրբությունը Լոնդոնի հայոց ս. Պետրոս եկեղեցում հավատացյալների խումբ բազմության ներկայության մատուցեց սուրբ պատարագ և քարոզեց, տալով Իր հայրապետական օրհնությունն ու պատգամը Անգլիայի ողջ հայությանը:

Հունիսի 13-ին, երեքշաբթի օրը, Հայոց Հայրապետը, ի ներկայության բազմաթիվ հայ և անգլիացի անձնավորությանց, բացումը կատարեց Լոն-



դրնում վերջերս հիմնված «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի վարչական կենտրոնի:

Վեհափառ Հայրապետի այցելության առթիվ Լոնդոնում տեղի ունեցան նաև համալսարանի պաշտոնական ընդունելություններ և Սարգիս և Կ. Պետրոս եկեղեցիների եկեղեցական մարմինների, ինչպես նաև Հ. Բ. Ը. Միության և «Թեքեյան» մշակութային միության կողմից:

Հունիսի 18-ին, կիրակի օրը, Լոնդոնի և Սարգիս եկեղեցում պատարագ մատուցեց Կ. Սրբեն եպիսկոպոս Բերքերյանը: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց ժողովրդին:

Հունիսի 20-ին Հայոց Հայրապետը հրաժեշտ տալով Լոնդոնի հայությանը՝ լավագույն տպավորություններով մեկնեց Ժընև, հրավերովը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի:

Հայոց Հայրապետի Ժընև այցելության առիթով հայ եկեղեցու պատվիրակության կազմում էին՝ Երուսաղեմի հայոց ամենապատիվ Կ. Եղիշե սրբազան պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Կ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Կ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Կ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ Կ. Ծահե արքեպիսկոպոս Աճեմյանը, Մայր Աթոռի դիվանապետ Կ. Արսեն եպիսկոպոս Բերքերյանը, Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխանորդ Կ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Կ. Պարզև Ծահրազյանը:

Հայոց Հայրապետին ողջունելու և բարի գալուստ մաղթելու համար Ժընևի օրհանավակայան էին ծամանել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավար աշխատողները՝ գլխավորությամբ դոկտ. Ֆիլիպ Փոթըրի, Ժընևում Միավորված ազգերի մոտ սովետական մնայուն ներկայացուցչության պատասխանատու անդամներ, Զվիցերահայ ընկերակցության, Ժընևի եկեղեցական վարչության, Վեհափառ Հայրապետի ընդունելության հանձնաժողովի ղեկավար անդամներն ու պաշտոնական այլ անձինք:

Հունիսի 21-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան, Հայոց Հայրապետի նախագահությամբ, ԵՀԽ-ի կենտրոնի մատուտում տեղի ունեցավ Արևազալի հայկական արարողությունը, ապա նույն կենտրոնի խորհրդածրոյվների մեծ դահլիճում կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում ճառեր փոխանակեցին Հայոց Հայրապետը և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարը:

Նույն օրը ԵՀԽ-ի կենտրոնում տեղի ունեցավ խորհրդակցություն Հայոց Հայրապետի գլխավորությամբ հայ եկեղեցու պատվիրակության և ԵՀԽ-ի կենտրոնի պատասխանատու ղեկավարների միջև:

Հետևյալ օրը, հունիսի 22-ին, Հայոց Հայրապետը, առաջնորդությամբ ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի և մասնակցությամբ Իր շքախմբի անդամների, պաշտոնական այցելություն տվեց Ժընևի Կանտոնին և քաղաքային իշխանությանը: Այս առթիվ ճառեր փոխանակվեցին Հայոց Հայրապետի և Ժընևի պետական խորհրդի փոխնախագահ Ժակ Վեռնեի միջև:

Ժընևում, ի պատիվ Հայոց Հայրապետի և նրա շքախմբի անդամների, տեղի ունեցան պաշտոնական մի շարք ընդունելություններ, ԵՀԽ-ի, Կ. Պոլ-



մի տիեզերական պատրիարքության, Շամբեզի օրթոդոքս կենտրոնի, Բոդոքականաց ազգային եկեղեցու, Միավորված ազգերի մտ ՍՍՀՄ մնայուն ներկայացուցչության, Զվիցերահայ ընկերակցության և հայ առաքելական եկեղեցու օժանդակ Տիկնանց վարչության կողմից:

Հունիսի 25-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը պատարագ մատուցեց Ժրննի հայոց ս. Հակոբ եկեղեցում և բաշխեց Իր ողջույններն ու օրհնությունները ավելի քան հազար ներկա հավատացյալների, որոնք այս առթիվ Ժրնն էին ժամանել Ֆրանսիայից, Իտալիայից, Ավստրիայից, Անգլիայից, Արևմտյան Գերմանիայից, Թուրքիայից, Պարսկաստանից և այլ երկրներից:

Հայոց Հայրապետը Ժրննում հանդիպում ունեցավ Զվիցերիայի հայ երիտասարդության հետ, ուր ջերմորեն հյուրասիրվեց Իր հոգևոր զավակների կողմից:

Հունիսի 27-ին, չորեքշաբթի օրը, Հայոց Հայրապետը հրաժեշտ տվեց Ժրննում Եկեղեցիների համաշխարհային խորհրդին և Զվիցերիայի հայ համայնքին ու անմոռաց տպավորություններով վերադարձավ Մայր Աթոռ:

Հայոց Հայրապետը Ժրնն Իր այցելության առիթով ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դուկտ. Ֆիլիպ Փոթըրին հրավիրեց այցելել Մայր Աթոռ ս. Էջմիածին սույն թվականի հոկտեմբերի 7-ին: Սույն հրավերը դուկտ. Փոթըրն ընդունեց սիրով:

Հայոց Հայրապետի սույն ուղևորությունը Լոնդոն և Ժրնն հանդիսացավ երկու համայնքների հայության համար հոգևոր մխիթարության և ազգային հպարտության բացառիկ մի առիթ, ինչպես նաև ամրապնդեց եղբայրական հարաբերությունները անգլիկան եկեղեցու հոգևոր պետի, բարձրաստիճան հոգևորականության, այլև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ղեկավարության հետ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ

Ս. Էջմիածին,  
5 հուլիս 1978 թ.







ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԹՐԱԵՐԻԻ ԱՐԻԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԴՈԿՏ. ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆ





## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ


Հայոց Հայրապետը Իր արտասահմանյան տասնմեկերորդ ուղևորության ընթացքում, սույն թվականի հունիսի 9-ից մինչև հունիսի 27-ը, հովվապետական այցելությանը եղավ Լոնդոնում և ժընևում՝ անձամբ տանելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Իր Սրբության օրհնությունները, մանավանդ անգլիահայ և շվեյցարահայ հավատացյալ ժողովրդին:

Անգլիա կատարած Իր ուղևորության ժամանակ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը և Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի թեմի հայոց առաջնորդական տեղապահ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

### ԺԱՄԱՆՈՒՄ ԼՈՆԴՈՆ

Հունիսի 9-ին Հայոց Հայրապետը Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպիսկոպոսի և Լոնդոնի հայոց ս. Սարգիս և ս. Պետրոս եկեղեցիների համայնքային վարչությանց հրավերով ժամանեց Լոնդոն:

Օրանավակայանում Հայոց Հայրապետին ջերմորեն դիմավորեցին Լոնդոնի հայ եկեղեցական և աշխարհական պաշտոնական անձնավորություններ՝ գլխավորությամբ Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպս. Պոզապայանի, Մայր Աթոռի միաբան տ. Պսակ արքեպ. Թումայանը, հանուն Քենթրբերիի արքեպիսկոպոսի՝ արքեպիսկոպոսարանի արտաքին հարաբերությունների վարիչ հայր Մայքլ Մուրը, հանուն Լոնդոնի եպիսկոպոս Ջերալդ Էլիսոնի՝ Քեննեթ Հաուել եպիսկոպոսը, և Անգլիայում Սուվետական Միության դեսպանության առաջին քարտուղար Լեոնիդ Նիկերեմկոն:





Ռոջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվեց օրանավակայանի պատվավոր հյուրերի դահլիճ, ուր Նորին Սրբությանը դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին տ. Վիգեն, տ. Պսակ վարդապետները և լոնդոնահայ համայնքի զանազան ազգային միությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Հայոց Հայրապետը և Քեմբրիջի արքեպիսկոպոսը. կողքին՝ տ. Արսեն եպս. Բերբերյանը

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվեց Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցի, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով: Եկեղեցու շրջափակում և տաճարում հավաքված անգլիահայ հավատացյալների հոծ բազմությունը ջերմորեն ողջունեց Հայոց Հայրապետին:

Եկեղեցական արարողությունից հետո Հայոց Հայրապետը Իր ողջունը և օրհնությունները բաշխեց բոլոր ներկաներին՝ գոհություն մատուցելով նաև Աստծուն, որ կրկին անգամ թանկագին պատեհությունը շնորհեց իրեն՝ այցելելու Մեծ Բրիտանիա՝ լոնդոնահայ Իր հոգևոր գավակներին բերելու համար ս. Էջմիածնի օրհնությունը և մայր հայրենիքի շունչն ու բույրը:

Հանուն լոնդոնահայության Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթեց Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպս. Պոզապալյանը՝ խորին շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ լոնդոնահայությանը կրկին տված Իր օրհնաբեր այցելության համար:

Այնուհետև Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հովվատանը գաղութի բոլոր ներկայացուցիչները հանդիպում ունեցան Հայոց Հայրապետի հետ և աջակց-համբույրով ստացան նաև Նրա օրհնությունը:



## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԱՄԲԵԹ ՊԱԼԱՏ

Հայոց Հայրապետի Լոնդոնում գտնված օրերին Նորին Սրբությունը հունիսի 10-ին, շաբաթ օրը, հյուրը եղավ Քենթրբերիի արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի, Լամբեթ պալատում:

Արքեպիսկոպոսարանի ջրամուտքի առաջ Հայոց Հայրապետին դիմավորեց և ողջունեց դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ արքեպիսկոպոսը՝ շրջապատված անգլիկան եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներով:



Հայոց Հայրապետը և Քենթրբերիի արքեպիսկոպոսը Լամբեթ պալատի առաջ

Ընդունելության դահլիճում երկու հոգևոր պետերի և նրանց շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ սրտագին և մտերիմ խոսակցություն:

Քենթրբերիի արքեպիսկոպոսը, ի պատիվ Հայոց Հայրապետի, տվեց ճաշկերույթ, որին ներկա եղան տ. Պսակ, տ. Ներսես, տ. Արսեն սրբազանները, տ. Տիրան վարդապետը, պրն. Գևորգ Բյուրքճյանը, Քենթրբերիի արքեպիսկոպոսի հարգելի տիկինը, Քենզինգթոնի Ռոնալդ Գուդչայլդ եպիսկոպոսը, հայր Մայքլ Մուրը, Դեյվիդ Հարտինգ վարդապետը և պաշտոնական այլ անձնավորություններ:

Ընդունելության ժամանակ երկու հովվապետները փոխանակեցին ողջույնի ու բարիգալատյան խոսքեր և հուշանվերներ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԲԱՐՈՋ  
ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 11-ին, կիրակի օրը, Հայոց Հայրապետը ս. պատարագ մատուցեց Լոնդոնի հայոց ս. Պետրոս եկեղեցում:



Տաճարը լիքն էր հայ հավատացյալներով: Հայկական սուրբ պատարագին ներկա էին նաև Քեհնթրթերիի արքեպիսկոպոսի ներկայացուցիչները՝ տ. Ռոնալդ Գուդչայլդ եպիսկոպոսը, Լոնդոնի հույն օրթոդոքս եկեղեցու կողմից՝ տ. Տիմոթեոս եպիսկոպոսը, ռուս պրավոսլավ եկեղեցու կողմից՝ տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսը, ինչպես նաև Քեհնգիմգթոնի քաղաքապետ պրն. Մուսթի Գրուֆթոնը:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը արտասանեց մի ոգեշունչ քարոզ Լոնդոնի հայ համայնքին տված հովվապետական Իր սույն այցելության նորախ առիթով՝ բաշխելով Իր ողջույններն ու օրհնությունները: Այս ողջույնի սրտագին խոսք ուղղեց տաճարում ներկա քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներին, որոնք եկել էին բաժանելու այդ օրը Լոնդոնի հայության հոգևոր ուրախությունը, ինչպես նաև քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներին, որոնք եկել էին մեծարելու և պատվելու Հայոց Հայրապետին:

Հավարտ ս. պատարագի լոնդոնահայ համայնքը «Նվարդ Կյուլպենկյան» դահլիճում ճաշկերույթով պատվեց Հայոց Հայրապետին, քույր եկեղեցիների և քաղաքային իշխանությանց բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Ընդունելության ժամանակ, որին ներկա էին նաև լոնդոնահայ համայնքի ներկայացուցիչներ, ճառեր փոխանակեցին Հայոց Հայրապետը, տ. Ռոնալդ Գուդչայլդ եպիսկոպոսը և տ. Ներսես եպիսկոպոսը:

#### ՀԱՆԴԻՊՈՒԾ ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Հայոց Հայրապետը «Նվարդ Կյուլպենկյան» դահլիճում հանդիպում ունեցավ լոնդոնահայ երիտասարդության հետ:

Չափազանց հուզիչ էր պահը, երբ հայ երիտասարդները սիրով և հարգանքով լի, բարի ծայրերով դիմավորեցին Հայոց Հայրապետին՝ հայտնելով իրենց հոգեկան խորունկ ուրախությունը, որ Նորին Սրբությունը Իր այնքան ծանրաբեռնված այցելության ծրագրի մեջ առաջին իսկ առիթով պատենություն էր ստեղծել հանդիպելու Իր երիտասարդ հոգևոր զավակներին՝ մի պահ ապրելու համար նրանց ուրախություններով և բաժանելու համար միաժամանակ նրանց մտահոգությունները, որոնք թելադրված են սիյուռքի ծանր պայմաններում հայ ապրելու և հայ մնալու վճռականությամբ:

Այդ մտահոգությունների և ցանկությունների պերճախոս վկայությունն էր, հանուն լոնդոնահայ երիտասարդների, օրհորդ Քյոշկերյանի՝ Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Հայրապետ,

Հայ երիտասարդաց միության վարչության և անոր երիտասարդ անդամներու անունով կուգամ համբուրել Ձեր սուրբ Աջը և ողջույնի ջերմ խոսքերովս Ձեզի մաղթել բարի գալուստ:

Ձեր եկեղեցական ու ազգային շինարար աշխատանքը բախտը տվավ մեզի ևս, մոտեն տեսնելու Ձեր սուրբ անձը, ոգևորվելու և խանդավառվելու Ձեր ազգօգուտ և եկեղեցանկեր գործունեություններուն շարանեն: Ու նույն այդ բարի ոգիեն ներշնչված՝ մենք ևս լծված ենք մեր ազգին ու եկեղեցիին համար անշահախնդրորեն ծառայելու աշխատանքին:

Այս ոգիով առաջնորդված, Հայ երիտասարդաց միությունը, Լոնդոնի



համայնակույ ու դժվարին պայմաններում մեջ իսկ, գիտակից քայլերով կաշխատի հայ սփյուռքի գոյատևման պայքարին բերելու իր լուման:

Եթե մեր միությունը չի կազմակերպեր գրական ու մշակութային ձեռնարկներ, զանազ ձգելով ավելի ձեռնհաս միություններու, կկազմակերպե սակայն ընկերային հավաքույթներ՝ միշտ ալ հայ ցեղին հատուկ բարոյական ըմբռնումի պարկեշտ մակարդակի վրա: Կկազմակերպենք մարզական հավաքույթներ, ակումբային պտույտներ, ինչպես նաև ասուլիսներ, ուր հայ ազգին դարավոր բարքերն ու ավանդությունները գործնականապես կփոխանցենք օտար ակերու վրա ծնած ու հասակ առած մեր նոր սերունդին:

Ցավալի է, որ լեզվական որոշ տեղատվություններ արձանագրվեցան լոնդոնահայ երիտասարդներու մեջ, սակայն մեր ոգին ո՛չ մեկ պարտություն չէ կրած ցարդ: Մեր սիրտերը նույնքան ջերմորեն կբաբախեն մեր մայր հայրենիքին ու մեր հավատքի կեդրոն սուրբ Էջմիածնի համար, որքան ունէ հայու սիրտը երբևիցե բաբախած ըլլա:

Որքան ուրախ և հպարտ ենք, որ մեր ազնվական Վեհափառ Հայրապետը ընդունեց լսել Հայ երիտասարդաց այս միության բարի գալուստի և բարի մաղթանքներու խոսքը: Եվ ես անձնապես որքան երջանիկ եմ, որ ինձի տրվեցավ բացառիկ այս բախտը, թարգմանը հանդիսանալու հավատավոր մեր երիտասարդության զգացումներուն:

Վեհափառ Հայր, բարի եկած եք Լոնդոն:

Թող Ձեր բոլոր ծրագիրները իրականանան առանց դժվարությանց:

Երկար ու առողջ ապրի Հայոց Հայրապետը»:

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ**

Նույն օրը, ժամը 20-ին, «Ռոյալ Գարդըն» հյուրանոցում տեղի ունեցավ համայնքային մեծ ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Սույն ընդունելություն-ճաշկերույթը կազմակերպվել էր ս. Սարգիս եկեղեցու խնամակալության և ս. Պետրոս եկեղեցու համայնքային խորհրդի կողմից:

Ընդունելության սեղանը ղեկավարում էր լոնդոնահայ ծանոթ մտավորական Առատուր Կյուզելյանը:

Ընդունելության ընթացքում Հայոց Հայրապետին ուղղված ողջույնի արտագին խոսքեր ասացին Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպիսկոպոսը, ս. Սարգիս եկեղեցու խնամակալության պատվո նախագահ և Մայր Աթոռի բարերար Սարգիս Քյուրքճյանը, լոնդոնահայ համայնքային և եկեղեցական խորհրդի նախագահ Հայկ Աբաջյանը, ծանոթ ազգային Գևորգ Թահթան, Հ. Բ. Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի անունից՝ Կարո Գրիգորյանը, լոնդոնահայ մի շարք ազգային կազմակերպությունների անունից՝ Անդրանիկ Ծուլիքյանը, Ալֆրեդ Կրասկյանը, Հարություն Այվազյանը, Նորայր Խոլոպյանը, Գևորգ Չորպաճյանը, տիկին Ռիտա Չարչյանը («Անահիտ» տիկնանց միություն), Հակոբ Մանուկյանը, Ժիրայր Ազիրյանը և ուրիշներ:

Հանդիսության ոգևորությունը իրենց երգերով, արտասանություններով և նվագով ավելացնում էին սփյուռքահայ ծանոթ երգիչ-արվեստագետ Խաչատուր Փիլիկյանը, ասմունքող Սոնիկ Չափղազյանը, դաշնակահարուհի



Նարինե Հարությունյանը, երաժիշտ-կոմպոզիտոր Լորիս Ծգնավորյանը, Հայկազ Ռշտունին և ուրիշներ:

Հնդումեղությունն անցավ ջերմ ու հայրենասիրական մթնոլորտում: Այս առթիվ Հայոց Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշաններով զարդարեց կրծքերը տիար Հայկ Գալուստյանի և տիար Թովմաս Թովմասյանի, իրանահայ երկու նախկին պատվական ազգայիններ, որոնք դարձել են գործուն մասնակիցները լոնդոնահայ համայնքի եկեղեցական, կրթական և մշակութային կյանքի՝ իրենց արտեռանդն բարերարություններով:

Հայրապետական սույն բարձր գնահատությունը արտագին և խանդավառ ծափողջույններով դիմավորվեց բոլոր ներկաների կողմից՝ որպես «հարկա հարկավորաց և պատիվս արժանավորաց»:

Համայնքային այս ճաշկերույթն ավարտվեց Հայոց Հայրապետի օրհնության և գնահատության խոսքով:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ

Հունիսի 12-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը նախ այցելեց անգլիկան եկեղեցու հրատարակությանց խրմբագրություն, որը կոչվում է «Քրիստոնեական գիտության տարածման ընկերություն»:

Հայոց Հայրապետի և սույն ընկերության ղեկավար բարձրաստիճան ութ անձնավորությունների միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց ընկերության գործունեության մասին՝ ի նպաստ քրիստոնեական մշակույթի տարածման ողջ աշխարհում:

Հանդիպումից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն և հուշանվերների փոխանակում:

Սույն օրը, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Լորդերի պալատ, որտեղ Նորին Սրբությանը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Լորդերի պալատի տ. Ռոբերտ Ռանսի եպիսկոպոսը, որը Հայոց Հայրապետին ծանոթացրեց Լորդերի պալատի հարկաբաժիններին:

Ժամը 14.30-ին, ի պատիվ Հայոց Հայրապետի, Լորդերի պալատի եպիսկոպոսը և Լորդերի պալատի նախագահը կազմակերպեցին ճաշկերույթ, որից հետո Լորդերի պալատի նախագահը հրավիրեց Հայոց Հայրապետին ներկա լինելու Լորդերի պալատի միստին:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ Ս. ՊՈՂՈՍ ԱՆԳԼԻԿԱՆ ՏԱՃԱՐ

Սույն օրը, երեկոյան ժամը 16-ին, Լոնդոնի եպիսկոպոս Ջերալդ Էլիտոնը ս. Պողոս տաճարի շքամուտքի առաջ եկեղեցական թափորով դիմավորեց Հայոց Հայրապետին և Նրա շքախմբի անդամներին ու նրանց առաջնորդեց տաճարից ներս, ուր տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն:

Այնուհետև տաճարի լուսարարապետը, խոսք առնելով, ներկաներին հայտնեց այն մասին, որ Ամենայն Հայոց Հայրապետը հյուրն է անգլիկան եկեղեցու: Ապա Լոնդոնի սրբազան եպիսկոպոսը անձամբ հրավիրեց Հայոց Հայրապետին այցելել տաճարի զանազան մասեր և ծանոթանալ տաճարի պատմությանն ու նրա ճարտարապետական կառուցվածքին:



Ժամը 16.40-ին Լոնդոնի եպիսկոպոսը թեյասեղանով պատվեց Հայոց Հայրապետին ու Նրա շքախմբի անդամներին և ապա նրանց առաջնորդեց Նիկիական ակումբ, ուր ժամը 17-ին Հայոց Հայրապետի պատվին կազմակերպվել էր մեծ ընդունելություն:



Հայոց Հայրապետը Լոնդոնում, անգլիական եկեղեցու «Քրիստոնեական գիտության տարածման ընկերության» խմբագրությունում

### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԻԿԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Հայոց Հայրապետի պատվին սույն ընդունելությունը Քենթթերիի արքեպիսկոպոսի անունից կազմակերպել էր Լոնդոնի Ջերալդ Էլիսոն եպիսկոպոսը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ընկերակցում էին տ. Պսակ, տ. Արսեն, տ. Ներսես սրբազանները, տ. Տիրան վարդապետը, պրն. Սարգիս Քյուրքճյանը և Գևորգ ու Հովհաննես Քյուրքճյան եղբայրները:

Լոնդոնի եպիսկոպոսի կողմից Հայոց Հայրապետի պատվին տրված այս ճաշկերույթին ներկա էին նաև անգլիական եկեղեցու ականավոր բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև պետական պատասխանատու անձնավորություններ:

Ճաշկերույթն անցավ Էլուսենիկ ոգով և խանդավառ մթնոլորտում:

Լոնդոնի եպիսկոպոսը, որ 1976 թվականի աշնանը Մայր Աթոռում Քենթթերիի արքեպիսկոպոսի հետ Հայոց Հայրապետի հրավերով ներկա էր եղել սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսություններին, իր անմոռաց տպավորությունները հաղորդեց ներկաներին սուրբ Էջմիածնում այդ առթիվ կազմակերպված



եկեղեցական արարողությունների և այլ հանդիսությունների մասին՝ բացառիկ ջերմ արտահայտություններ ունենալով նաև հայ ժողովրդի կենդանի հավատքի և Հայոց Հայրապետի անձնավորության մասին, որպես մեր օրերի քրիստոնեական եկեղեցու մեծ հոգևոր առաջնորդներից մեկի:

Ընդունելության ժամանակ պատասխան ճառով հանդես եկավ Հայոց Հայրապետը՝ Իր շնորհակալությունը հայտնելով Լոնդոնի եպիսկոպոսին այս ջերմ, երբայրական ընդունելության համար՝ շեշտելով հայ և անգլիկական քույր եկեղեցիների սերտ համագործակցությունը Էկումենիկ ոգով՝ ի նպաստ քրիստոնեական եկեղեցիների ի Քրիստոս սիրո միության, աշխարհի խաղաղության և ժողովուրդների համերաշխության և բարեկամության:

Նիկիական ակումբում կազմակերպված սույն ընդունելությունը մի փառավոր էջ ևս ավելացրեց հայ և անգլիկական եկեղեցիների դարավոր բարեկամության պատմության վրա:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻՆՈՂԻՆ

Հունիսի 13-ին, երեքշաբթի օրը, ժամը 12.30-ին, Հայոց Հայրապետը Իր ջրախմբի անդամներով այցելություն սվեց անգլիկան եկեղեցու սուրբ Սինոդին («Հառու օֆ չըրչս»):

Սինոդի շենքում Հայոց Հայրապետը հանդիպում ունեցավ Սինոդի քարտուղարության պատասխանատու անդամների հետ և նրանց առաջնորդությամբ ծանոթացավ Սինոդի շենքի զանազան հարկաբաժիններին և այնտեղ կատարվող աշխատանքներին:

Ժամը 13-ին Սինոդի քարտուղարությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, սվեց ճաշկերույթ, որի ընթացքում ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետը և Սինոդի գլխավոր քարտուղար դոկտ. Դերեկ Փաթթինսոնը:

### ԲԱՑՈՒՄ ԼՈՆԴՈՆԻ «ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ


Հունիսի 13-ին, երեկոյան ժամը 18-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ և հանդիսավոր իրադրության մեջ, հայ և օտար արվեստագետների, մտավորականների և խումբ բազմության ներկայությամբ, կատարվեց պաշտոնական բացումը Լոնդոնի հայոց «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի վարչական կենտրոնի, որը գտնվում է Լոնդոնի կենտրոնական լավագույն շրջաններից մեկի՝ Քենզինգթոնի մեջ: Այն չորս հարկանի մի գեղեցիկ կառույց է:

Հայկական երաժշտական սույն ինստիտուտի հիմնադրումը հայ ժողովուրդը պարտական է տաղանդավոր երաժիշտ-կոմպոզիտոր, պարսկահայ, այժմ լոնդոնաբնակ Լորիս Շզնավորյանի և նրա գաղափարակից ու գործակից ընկերների անկտորում հավատքի և անսպառ եռանդի:

Սույն կենտրոնի հիմնական նպատակն է՝ հայ հոգևոր և դասական երաժշտական արվեստի պրոպագանդումն ու տարածումը Անգլիայում և Արևմտյան Եվրոպայի լայն շրջանակներում: Ամենայն մասամբ այս ինստիտուտը արժանի է երաժշտասեր հայ ժողովրդի բարոյական և նյութական քաջակերության:

Դեռևս անցյալ տարվա փետրվարին, երբ Լորիս Շզնավորյանն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, Հայոց Հայրապետը ծանոթացավ





Ս. ԱԼԲԱՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ. ԱՆԳԼԻԱ



տույն ինստիտուտի ապագա ծրագրերին և հանձն առավ նրա պատվո հովանավորությունը և Իր հայրապետական օրհնությունը տվեց 20 փետրվար 1977 թվակիր սրբատառ Իր կոնդակով:

Այդ զգացումներով է, որ Հայոց Հայրապետը բարեհաճեց Լոնդոն տված Իր այցելության օրերին անձամբ կատարել ինստիտուտի շենքի պաշտոնական բացումը՝ բերելով Իր օրհնությունն ու բարեմաղթությունը գործի գլուխ կանգնած մի խումբ խանդավառ երաժշտաներ հայ երիտասարդների, որոնք սիրում են հայ երգարվեստը և աշխատում են այն ծանոթացնել հայ շրջանակներից դուրս:

«Հայ երաժշտական ինստիտուտ»-ի շենքը ձեռք է բերվել շնորհիվ պարսկահայ ծանոթ բարերար պրն. Թովմաս Թովմասյանի և այլ պարսկահայ արվեստաներ ազգայինների նյութական և բարոյական քաջալերանքի:

Բացման արարողության ավարտին Հայոց Հայրապետը Իր բարձր գնահատանքին և օրհնությանը արժանացնելով երաժշտագետ պրն. Լորիս Եզնավորյանի վաստակը՝ նրա կուրծքը զարդարեց Իր իսկ նախաձեռնությամբ վերջերս Մայր Աթոռում պատրաստված ոսկե մեդալով, որը կոչվում է «Ս. Սահակ—ս. Մեսրոպ» շքանշան:

Սույն շքանշանը Վեհափառ Հայրապետի կողմից սահմանված է շնորհվելու հայ մշակույթին նվիրված վաստակաշատ գործիչներին՝ ի նշան և ի գնահատումն նրանց բազմամյա մշակութային ծառայությունների:

Երաժիշտ-կոմպոզիտոր Լորիս Եզնավորյանն էր, որ առաջինը արժանացավ վերոհիշյալ շքանշանով պարգևատրվելու պատվին:

«Հայ երաժշտական ինստիտուտ»-ի պաշտոնական բացումից հետո Վեհափառ Հայրապետն այցելեց ինստիտուտի շենքի տարբեր սենյակներ և որպես հիշատակ ինստիտուտի խնամակալությանը հանձնեց Մայր Աթոռում պատրաստված մարմարյա մի գեղեցիկ խաչքար:

Ավելի ուշ ինստիտուտի խնամակալությունը Հայոց Հայրապետին պատվեց մի մեծ ընդունելությամբ:

Այս առթիվ Լորիս Եզնավորյանը հանդես եկավ Վեհափառ Հայրապետին ողղյալ երախտագիտական ջերմ խոսքով՝ զեկուցելով նաև ինստիտուտի հիմնադրման և նրա ապագա գործունեության ծրագրերի մասին:

#### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Հունիսի 15-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Արսեն, տ. Ներսես եպիսկոպոսների և տ. Տիրան վարդապետի, քաղաքավարական այցելություն տվեց Մեծ Բրիտանիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան Ն. Մ. Լունկովին:

Հայոց Հայրապետի և մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց:

#### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՐԲ ԱԼԲԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Լոնդոնից դուրս գտնվող սուրբ Ալբանի եկեղեցի՝ ողեկցությամբ տ. Արսեն, տ. Ներսես եպիսկոպոսների և տ. Տիրան վարդապետի:


Եկեղեցու մուտքի առաջ Հայոց Հայրապետին դիմավորեց և բարի գա-



լուստ մաղթեց ս. Ալբանի եկեղեցու և Լորդերի պալատի եպիսկոպոս դոկտ. Ռոբերտ Ռանսին, որը և առաջնորդեց Նորին Սրբությանը դեպի եկեղեցի, ուր Հայոց Հայրապետն արտասանեց մի կարճ աղոթք:

Այնուհետև տեղի ունեցավ հատուկ մի արարողություն սուրբ Ալբանի շիրմի մոտ:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետը առաջնորդվեց հյուրերի ընդունման դահլիճ, որտեղ տեղի ունեցավ ջերմ գրույց Նորին Սրբության և սուրբ Ալբանի վանքի միաբանության անդամների միջև:



Հայոց Հայրապետը Լոնդոնի ս. Պետրոս համայնքային եկեղեցու վարչական խորհրդի անդամների հետ

Այստեղ, հանուն տեղի փոքրաթիվ հայ համայնքի, Հայոց Հայրապետի այցելությունը հայերեն սրտառույց մի ուղերձով ողջունեց Անահիտ Քինգը:

Հյուրասիրությունից և նվերների փոխանակությունից հետո Վեհափառ Հայրապետը լավագույն տպավորություններով հրաժեշտ տվեց սուրբ Ալբան վանքին և վերադարձավ Լոնդոն:

#### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ

Նույն օրը, ժամը 21-ին, «Նվարդ Կյուպենկյան» դահլիճում Լոնդոնի «Վահան Թեքեյան մշակութային միություն»-ը ընդունելություն էր կազմակերպել ի պատիվ Հայոց Հայրապետի:

Դահլիճի մուտքի առաջ Վեհափառ Հայրապետը ծափողջույններով դիմավորվեց «Վահան Թեքեյան մշակութային միության» վարչության անդամների և համակիրների կողմից և առաջնորդվեց դահլիճ:



Այս առթիվ գործադրության դրվեց գեղարվեստական մի ծրագիր:

Հանուն Միության վարչության և համակիրների, բարիգալստյան ջերմ խոսք առաց Մանվել Քյոշկերյանը՝ համառոտակի ներկայացնելով նաև լոնդոնահայ կյանքում «Վահան Թեքեյան մշակութային միության» կատարած կրթական-մշակութային կարևոր դերը՝ Լոնդոնի «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի, Հ. Բ. Ը. Միության ազգային վարժարանների կողքին նաև 165 աշակերտներից բաղկացած նորահաստատ «Գևորգ Թահթա» վարժարանի կազմակերպման գործում բերած նրա օգտակար նպաստը:

Ընդունելության ավարտին Հայոց Հայրապետը տվեց Իր պատգամը՝ թելադրելով անասան մնալ պատենշի վրա, արթուն պահել հայ հոգին, անաղարտ՝ հավատարմությունը դեպի մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և դեպի վերածնված մեր մայր հայրենիքը:

#### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵՎԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Հունիսի 17-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Հայոց Հայրապետը հյուրանոցի Իր հարկաբաժնում հանդիպում ունեցավ Լոնդոնի հայոց երկրորդ եկեղեցու՝ սուրբ Պետրոսի համայնքային խորհրդի անդամների հետ:

Այս առթիվ Հայոց Հայրապետը հանգամանորեն հետաքրքրվեց ս. Պետրոս եկեղեցու համայնքային-եկեղեցական կյանքով, ինչպես նաև կարևոր թելադրություններ արեց համայնքային կանոնադրության վերջնական խմբագրման առնչությամբ:

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը լոնդոնահայ ծանոթ ազգային և Մայր Աթոռի բարերար պրն. Գևորգ Թահթայի տանը բարեհաճեց օրհնել նրա սեղանի աղն ու հացը:

#### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ԼՈՆԴՈՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Լոնդոնի Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղը իր հարկի տակ սրտագին հյուրասիրությամբ պատվեց Հայոց Հայրապետին:

Հայոց Հայրապետի մուտքը սրահ ջերմորեն դիմավորվեց դահլիճում հավաքված բոլոր հրավիրյալների ուրախ և խանդավառ արտահայտություններով: Հայոց Հայրապետը տեղ գրավեց պատվո սեղանի շուրջ՝ շրջապատված սրբազաններով, վարդապետներով և լոնդոնահայ համայնքի ծանոթ ազգային դեմքերով:

Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը ողջունեց Հ. Բ. Ը. Միության Լոնդոնի մասնաճյուղի նախագահ և Մայր Աթոռի բարերար պրն. Հարություն Մութաֆյանը հետևյալ գեղեցիկ ուղերձով.

«Վեհափառ Տեր,

Մեծ պատիվ և աննախընթաց առանձնաշնորհ մըն է ինձի համար Ձեզ ողջունել ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ի Լոնդոնի Մասնաճյուղին կողմե, ու մեր որդիական սերն ու ս. Էջմիածնի հանդեպ մեր անվերապահ հավատարմության զգացումները ներկայացնել այստեղ այս հանդիսավոր պահուն: Ապա կփափաքիմք Ձեզ տեղյակ պահել այն աշխատանքներում մասին, որոնք



կկատարվին իր կողմե մեր մշակույթին, ազգային ինքնության և ավանդու-  
թյանց պահպանման համար:

Վեհափառ Տեր, քսաներեք տարիներ առաջ հայ ժողովուրդը հաստատ  
հանդուրժումով և խորունկ հավատքով Ձեզ կոչեց Ձեր բարձր պաշտոնին, և  
Դուք այնքան հիանալիորեն արդարացուցիչ ազգովին Ձեր վրա դրված  
հույսերը՝ դառնալով մեր ժամանակներու ամենամեծ կաթողիկոսներեն մին:  
Ս. Էջմիածինը նախքան Ձեր ընտրությունը քիչերու կողմե միայն լաված  
անուն մը, այսօր, այսինքն Ձեր ընտրութենեն հետո, միջազգային և միջե-  
կեղեցական առումով դարձած է հանրածանոթ և ամենուն կողմե հարգված  
անուն մը: Իսկ ազգային և եկեղեցական տեսակետեն՝ Ձեր ընտրությամբ  
ս. Էջմիածինը ոչ միայն պայծառացավ ու շենցավ, այլ նաև կարելիություն-  
ներ ստեղծեց, որպեսզի իր զավակները հայրենիք և ս. Էջմիածին ուխտի  
գալով ներշնչվին հայկականությամբ և ամրապնդեն իրենց կապը մայր երկ-  
րի իրենց եղբայրներուն հետ: Այդ երջանիկ հարաբերության ոսկի կամուր-  
ջը հանդիսացավ Ձեր բարձր և ազնիվ անձնավորությունը: Հպարտ ենք  
Ձեզմով, Վեհափառ Տեր, ու Ձեր անունը ոսկի տառերով պիտի արձանա-  
գրվի մեր պատմության մեջ:

Լոնդոնի մեջ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ը առաջին անգամն է, որ Ձերդ Սուրբ  
Օծությունը կհյուրընկալե, ու մենք երջանիկ ենք այսօր արժանացած ըլ-  
լալով Ձեր հյուրընկալը ըլլալու մեծ պատվին:

Իբրև փոքր համայնք մը լրջորեն կգիտակցինք մեր սոցև գտնվող բազ-  
մազան հարցերու գոյության, որոնց լուծումը անհրաժեշտորեն պետք է  
գտնվի, եթե կփափաքինք վերապրիլ իբրև ազգային արժեքավոր ամբողջա-  
կանություն մը: Կխորհիմ, որ մեր գաղութը բախտավոր է, որ եկեղեցին  
հետո ունի նաև ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ի նման կազմակերպություն մը, որ  
գլուխ պիտի կանգնի այդ խնդիրները լուծելու ծանր աշխատանքին՝ դժվա-  
րին ժամանակներու մեջ:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ը աճող և տևալեա հառաջդիմող ուժ մըն է ի խըն-  
դիր և ի գործադրություն այն բազմաթիվ պարտականությանց, որոնք մեր  
սոցև կան հայ ժողովուրդի բարվույն համար՝ աշխարհի որ կողմն ալ գտնվի  
ան:

Մեր եկեղեցին, որ կեդրոնական սյունն է և պահապանը մեր ազգային  
միության և արժեքներու, միշտ կրնա վստահիլ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ի ան-  
վերապահ բարոյական օժանդակության և համագործակցության Անգլիո  
մեջ թե այլուր:

Ուրախ եմ ըսելու, որ մեր վերջին չորս տարիներու վճռակամ և նվիր-  
յալ աշխատանքը սկսած է արդեն իր պտուղը տալ: Ջոր օրինակ, բացի  
կրթաթոշակներ տալե արժանավոր ուսանողներու,—որոնց շարքին անգլիա-  
կան աստվածաբանական հաստատություններու մեջ ուսանող քանի մը  
հոգևորականներ սորք Էջմիածնեն,—մեր Սահակ-Մեսրոպ վարժարանը  
հայերենի դասընթացքներ կազմակերպած է տասը տարիներե ի վեր մեծ  
հաջողությամբ. ու ասով քաջալերված՝ ներկայիս կջանանք այս աշխատան-  
քը ավելի ընդարձակել ոչ միայն երթևեկը ապահովելով դասի եկող փոք-  
րիկներուն, այլ նաև դասարաններ բանալ մերձակայքը այն վայրերուն, որ  
մեր ժողովուրդը կապրի: Գիտենք, որ ասիկա վերջին լուծումը չէ մեզ մտա-  
տանջող խնդրույն. ուշ կամ կանուխ, պիտի ստիպվինք անգլո-հայ ամեն-  
օրյա վարժարան մը բանալ: Այս հարցը միշտ մեր միտքին մեջ է ու մեր



աշխատանքի ներկա փորձառական շրջանը ապագային մեզ պիտի առաջ-  
նորդե այդ ճիշտ որոշումին:

Վեհափառ Տեր, մեծ ճիգ կթափենք ավելցնելու համար մեր անդամնե-  
րուն թիվը, թափանցելով մեր համայնքին բոլոր խավերը, այս կերպով մեր  
շուրջը համախմբելու համար բոլոր անոնք, որոնք համամիտ են մեզի ու  
պատրաստ՝ մեզի միանալու, հետաքրքրություն ստեղծելու համար դեպի  
մեր ժառանգությունը, մշակույթն ու ազգային ինքնությունը:

Այս դժվարին պարտականությունը հանձն առած է շատ կարող Են-  
թահանձնախումբ մը՝ վերջերս նշանակված: ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ-ի անդամ-  
ներուն թիվը, որ քանի մը տարի առաջ 120 հոգի էր միայն, ներկայիս այդ  
թիվին երեք անգամն է ան ու վստահ ենք, որ այս թիվը շուտով պիտի  
կրկնապատկվի ըլլալու համար 600: Այս թիվին վրա ավելցնելով համա-  
կիրներու թիվը՝ կունենանք պատկառելի թիվ մը անդամներու և համակիր-  
ներու:

Այս կերպով և՛ մեր Տիկնանց օժանդակ հանձնախումբին, և՛ Մշակութա-  
յին հանձնախումբին կողմէ կազմակերպված ձեռնարկներուն շնորհիվ, ըն-  
կերային, մշակութային և գեղարվեստական մարզերու մեջ, ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
կան-ի Լոնդոնի մասնաճյուղը կհուսա շոշափելի և կարևոր նպաստ մը բե-  
րել հայ կյանքի բարգավաճման համար Լոնդոնի մեջ:

Տիարք և Տիկնայք, պատիվն ունիմ բաժակ առաջարկելու և կխնդրեմ,  
որ լեցնեք Ձեր բաժակները և հուղընկայս խմեք Նորին Սուրբ Օծություն Տեր  
Տեր Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսին արևշատության,  
առողջության և երջանկության համար»:

Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունեց նաև, հանուն Հ. Բ. Ը.  
Միության Լոնդոնի մասնաճյուղի օժանդակ տիկնանց մարմնի, Սևան Գրի-  
գորյանը սրտագին բարեմաղթություններով և որդիական անկեղծ զգացում-  
ներով:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայու-  
թյունը ողջունեցին նաև տ. Ներսես եպիսկոպոսը, պր. պր. Արթին Գալայճ-  
յանը և Կարպիս Եսայանը:

Ընդունելության ընթացքում գործադրության դրվեց երգերից և հայրե-  
նաշունչ արտասանություններից կազմված ամփոփ մի գեղարվեստական  
ծրագիր, որը կրկնապատկեց օրվա հանդիսության ուրախությունն ու խան-  
դավատությունը:

Ընդունելության ավարտին հանդես եկավ Հայոց Հայրապետը օրհնու-  
թյան խոսքով և պատգամով, մի անգամ ևս վեր հանեց Հ. Բ. Ը. Միության  
կատարած նախախնամական առաքելությունը մանավանդ սիշուքի կյան-  
քի պայմաններում, եկեղեցասիրական, հայրենասիրական, կրթական, մշա-  
կութային բնագավառներում:

Այս առթիվ Հայոց Հայրապետը սուրբ Գրիգոր Լուսավորչի Ա կարգի  
սղամանդակոտ շքանշաններով զարդարեց կրծքերը լոնդոնահայ ծանոթ  
երկու պատվական ազգայինների՝ պր. պր. Հարություն Մութաֆյանի և Ար-  
թին Գալայճյանի:



**ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՉ  
ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ**

Հունիսի 18-ին, կիրակի օրը, Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցում պատարագեց տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ Իր ուրախությունն ու գնահատանքը հաշտնելով Լոնդոն այցելության առիթով համայնքից առաջած Իր լավագույն տպավորությունների մասին, որոնք Նրա հայրական սիրտը լցնում էին ազգային հպարտության զգացումներով ի տես լոնդոնահայության եկեղեցասիրական, բարեսիրական, մշակութային և կրթական խոստումնալից ու բարգավաճ կյանքի, համայնք, որը միշտ կենդանի է պահում իր որդիական հավատարմությունը, սերն ու պաշտամունքը դեպի լուստ խորան Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Հայոց վերածնված աշխարհը:

Հավարտ պատարագի ս. Սարգիս եկեղեցու խնամակալությունը ճաշկերույթ տվեց ի պատիվ Հայոց Հայրապետի:

Երեկոյան Նորին Սրբությունը հյուրանոցի Իր հարկաբաժնում հանդիպում ունեցավ Մայր Աթոռ ս. Էջմիածնի Աբգարյան կուսակի խնամակալության անդամների հետ, որոնք ընթրիքով պատվեցին Հայոց Հայրապետին:

**ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ**

Հայոց Հայրապետի՝ Լոնդոնի հայոց համայնքին տված հայրապետական այցելության օրերն անցան թեև արագ ու ծանրաբեռն, բայց ազգային-եկեղեցական կյանքի վերաբերյալ լավագույն հուշերով և տպավորություններով:

Հունիսի 19-ին, երկուշաբթի օրը, ս. Սարգիս և ս. Պետրոս եկեղեցիների վաչությունները «Քենզիկոթոն-Հիլտոն» հյուրանոցում հրաժեշտի ընդունելություն կազմակերպեցին ի պատիվ Հայոց Հայրապետի: Ընդունելության ընթացքում Հայոց Հայրապետին ուղղված ողջերթի սրտագին խոսքեր սրտասանվեցին՝ երախտագիտության և որդիական հավատարմության անկեղծ զգացումներով:


Հանուն ս. Սարգիս և ս. Պետրոս եկեղեցիների եկեղեցական խորհուրդների, Հայոց Հայրապետին ընծայվեցին նվերներ ի հիշատակ Նորին Արքայության այս վերջին այցելության Լոնդոն:

Ողջերթի սույն ընդունելության ավարտին Հայոց Հայրապետը, խոսք առնելով, բաշխեց Իր օրհնությունները՝ թեկադրելով ողջ լոնդոնահայությանը համախմբվել ս. Սարգիս և ս. Պետրոս եկեղեցիների շուրջը և շարունակել իրենց համագործակցությունը եկեղեցական վարչությունների հետ ի պսղծառություն լոնդոնահայ եկեղեցական, մշակութային և կրթական կյանքի և ի մխիթարություն Իր հայրապետական սրտի:

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ԼՈՆԴՈՆԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ**

Հունիսի 20-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ տալով Լոնդոնի հայոց համայնքին՝ մեկնեց Ժընև: Նորին Սրբությունը, մեկնելուց առաջ, արաջնորդվեց ս. Սարգիս եկեղեցի,





ԵՐԳԱՀԱՆ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԾԱՆ

(Գործ՝ Էդվարդ Մինասյանի. Լոնդոն)



նոր կատարվեց գոհաբանական մաղթանք բարեհաջող ուղևորության համար դեպի Ժընև, և ապա ուղևորվեց դեպի օդանավակայան:

Այստեղ Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթեցին Լոնդոնի հայոց հոգևոր ստաշևորդ տ. Ներսես եպիսկոպոսը, տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանը, տ. Վիգեն, տ. Հայկազուն վարդապետները, համայնքային և եկեղեցական խորհուրդների անդամները և հայ հավատացյալների Վի մեծ բազմություն:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեց նաև, հանուն Քենթրբերիի արքեպիսկոպոսի, արքեպիսկոպոսարանի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ հայր Մայքլ Մուրը:


#### ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ

Վեհափառ Հայրապետի տասնմեկերորդ արտասահման ուղևորության առթիվ սուրբ Էջմիածնի պայծառության համար դրամական կարևոր նվիրատվություններ կատարեցին հետևյալ բարեպաշտ ազգայինները՝


- Տիարք՝ ա) Սարգիս Քյուրքչյան (Լոնդոն).  
 բ) Հարություն Մութաֆյան (Լոնդոն).  
 գ) Ա. Թովմայան (Լոնդոն).  
 դ) Նուրհան Ֆրենկյան (Փարիզ).  
 ե) Հակոբ Թոփալյան (Իտալիա).  
 զ) Տիգրան Իզմիրյան (Ժընև).  
 է) Մարի-Զավեն Մնտիկյան (Իտալիա).  
 ը) Ստեփան Զարդարյան (Մանչեստր).  
 թ) Ժիրայր Մանասյան (Փարիզ).  
 ժ) Լևոն Քեշիշյան (Նյու Յորք).  
 ժա) Օրիորդ Ժանետ Պալի (Ժընև):

Մայր Սթոռը երախտագետ զգացումներով արձանագրում է այս նվիրատվությունները, որոնք անմոռաց կմնան սուրբ Էջմիածնի տարեգրությանը մեջ:

«Երանի՜ եկեղեցի շինողաց»:







## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԺԸՆԵՎ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի հրավերով Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Ժընև և հյուրը եղավ երեք օր միջեկեղեցական այդ մեծ կազմակերպության:

### ԺԱՄԱՆՈՒՄ ԺԸՆԵՎ

Հունիսի 20-ին, երեքշաբթի օրը, ժամը 13-ին, Հայոց Հայրապետը ժամանեց Ժընևի «Կուանտրեն» միջազգային օդանավակայան, որտեղ Նրան դիմավորեցին ԵՀԽ-ի ղեկավար աշխատողները՝ գլխավորությամբ ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրի, Ժընևի Կանտոնի պրոտոկոլի պետ Ռոբեր Վիյոն, Միավորված ազգերի մոտ Սովետական Միության մնայուն պատվիրակության ղեկավար անդամներ՝ գլխավորությամբ Գեմադի Իվանուշկինի, ինչպես նաև շվեյցարահայ եկեղեցական, ազգային կազմակերպությունների և միությունների ներկայացուցիչներ և պաշտոնական այլ անձինք:

Հայոց Հայրապետի Ժընև այցելության առիթով հայ եկեղեցու պատվիրակության կազմում էին Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ տ. Ծախե արքեպիսկոպոս Աճեմյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարզև Ծախրազյանը:

Ժընևի օդանավակայանում Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեցին նաև Վեհապատ Հայրապետի ընդունելության հանձնաժողովի ղեկա-





Ս. ՊԵՏՐՈՍԻ ՄԱՅՐ ՏԱԺԱՐ. ԺԸՆԵՎ



վար անդամներ, Ծվեցարիայի տարբեր քաղաքներից, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայից, Պարսկաստանից, Թուրքիայից և այլ երկրներից եկած բազմաթիվ հայեր:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին հայ համայնքի կողմից մատուցվեց հյուրասիրության ավանդական աղև ու հացը, որի օրհնության ժամանակ խմբովին երգվեց «Էջ Միածինն ի Հօրէ» Մայր Աթոռի հոգևոր հիմնը:

Օդանավակայանում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Հայոց Հայրապետը, դուկո. Ֆիլիպ Փոթըրի առաջնորդությամբ, որպես ԵՀԽ-ի թանկագին հյուրը, առաջնորդվեց դեպի Ժընևի առաջնակարգ հյուրանոցներից մեկը՝ «Ռիչմոնդ»:

Հայոց Հայրապետի՝ Ժընևում գտնվելու օրերին Նրան ողջունելու համար ժամանել էին նաև Փարիզի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպիսկոպոսը, Մարսելի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպիսկոպոսը և Լիոնի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Դավիթ եպիսկոպոսը:

#### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՀԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԻՆ

Հունիսի 21-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը, իր շքախմբի անդամներով, այցելություն տվեց ԵՀԽ-ի Ժընևի կենտրոնին, ուր ջերմորեն դիմավորվեց ընդհանուր քարտուղարի և այդ հաստատության ղեկավար պաշտոնատար անձանց կողմից:

Այս առթիվ Հայոց Հայրապետը ուրախ եղավ ողջունելու ներկայությունը դուկո. Վիսերո Հուֆտի, որը եղել էր վատասկաշատ ընդհանուր քարտուղարը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Հայոց Հայրապետը նախ առաջնորդվեց ԵՀԽ-ի կենտրոնի մատուռ, ուր տեղի ունեցավ Արևագալի հայկական արարողությունը՝ Ժընևի հայոց եկեղեցու երգչախմբի կատարմամբ: Սույն արարողությանը ներկա էին ավելի քան 300 հոգի, այդ թվում Ժընևում քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ և պետական պատասխանատու անձնավորություններ:

Արարողության ավարտին Հայոց Հայրապետն արտասանեց հետևյալ հոգեշունչ քարոզը՝ բնաբան ունենալով ս. Ներսես Ծնորհալու «Առաւօտ լուսոյ» երգի առաջին տունը:

#### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԺԸՆԵՎՈՒՄ, ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԾԵԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՏՈՒՆ ՄԵՃ

«Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ»:

Ս. Ներսես Ծնորհալիի աղոթքն է այս, որ այնքան սիրելի է մեր ժողովուրդին:

Ս. Ներսես Ծնորհալին, այս խոսքերով մանավանդ, կարտահայտե հայ ժողովուրդի մտապատկերը Քրիստոսի մասին:

Մեզի կթվի, թե հայ ժողովուրդին շատ սիրելի և շատ ընկալելի եղած է մանավանդ Հիսուսի խոսքը, թե «Ես եմ լույսն աշխարհի», այն իմաստով, որ ինչպես նյութական արևի լույսը կյանք կուտա նյութին և կպայծառակերպե աշխարհն համայն, այնպես ալ Քրիստոսի խոսքը, իբրև ոգեկան լույս, կենդանություն կուտա և կպայծառակերպե մարմինն ու հոգին մար-



դու: Եվ երևի այսպես է, որ մեր սուրբ եկեղեցվո առաջին հայրապետը և կազմակերպիչը մեր Մայր Աթոռի՝ ս. Գրիգոր, կոչված է «Լուսավորիչ»:

Հինգերորդ դարու մեր պատմիչ Մովսես Խորենացին սուրբ Գրիգորի անձնավորությունը կբնորոշե իբրև «մերոյ լուսավորութեան լուսաւոր վերակացու»:



Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մատան մեջ. Ժընև

Ըմբռնումը Քրիստոսի իբրև լուսեղեն տեսիլք, այսօր ալ մեր ժողովուրդի մեջ կենդանի է: Օրինակի համար, ավանդաբար մեր ժողովուրդը կհավատա, որ Արագած լեռան վրա, երկինքեն կախված է Լուսավորչի կանթեղը, և որ ան կհսկե Հայոց աշխարհի վրա և լույս կսփռե ամենուրեք: Արագած լեռը 4200 մետր բարձրություն ունեցող լեռ մըն է, Հայաստանի սրտին վրա, Արարատ լեռան հարավային կողմը, մոտավորապես 200 կմ հեռու անկե:

Արագած լեռան կողմե, ամառ երեկոները, ամեն օր քամի կբարձրանա՝ մեղմելով օրվա տոթը և զովացնելով ամբողջ Արարատյան դաշտը: Մինչև այսօր մեր ժողովուրդը այդ քամին կկոչէ «Լուսավորչի քամի»:

Վերջապես մեր ժողովուրդի հոգվո հայացքը, միշտ իբրև լույսի կեդրոնի, ուղղված է նաև դեպի այն երկիրը, ուրկե հարություն առած է մեր Տերը և Փրկիչը Հիսուս Քրիստոս՝ Երուսաղեմ քաղաքը, ուր մեր եկեղեցին հաստատած է պատրիարքական Աթոռ մը տակավին վեցերորդ դարեն սկսյալ:

Եվ վերջապես, հայերը ամեն առավոտ «լույս» բառը կօգտագործեն ողջունելու համար զիրար:

Մենք կուզեինք ավելցնել նաև այս պահուն, թե այսօր այստեղ տեղի ունեցող արարողությունը, «Արևագալի արարողությունը», մեր ժողովուրդի ամենասիրելի արարողություններեն մեկը, Քրիստոսի լույսի փառաբանության նվիրված արարողություն մըն է:



Մենք կապրինք դարաշրջան մը, երբ կրոնական ապրումը տազնապալի շրջան մը կանցնէ աշխարհի վրա գրեթէ ամեն տեղ:

Բայց գալով այն երկրեն, որ ծանոթ է ձեզի, կուգեինք այստեղ բերել վկայություն մը, թե, այնուամենայնիվ, հետզհետե կբոլորքի մարդոց հոգիներու մեջ՝ ծարավը Քրիստոսի լույսի:

Մենք 22 տարիէ ի վեր կպաշտոնավարենք այնտեղ իբրև եկեղեցւոյ հայրապետ և կրնանք հաստատել, հոգեկան խոր մխիթարությամբ, թե այս 22 տարիներու ընթացքին մեր աչքով տեսանք հետզհետե աճումը հավատքի ծարավին:

Առանց հակադրելու այլ վարդապետություններու կամ ընկերային դրություններու միատեղ գոյակցության, ինչ-որ վիճակ ստեղծված է մեզ մոտ փոխադարձ հանդուրժողության, նույնիսկ փոխադարձ հարգանքի պայմաններու մեջ:

Եկեղեցական կյանքը մեր ժողովուրդի հոգեբանության մեջ, կորսուորվի այսօր իբրև հոգեկան ապրում, իբրև հոգևոր ճշմարտության որոնում, և ոչ միայն գլուղացի ու բանվոր ժողովուրդի շարքերուն մեջ, այլ նաև մտավորականներու: Մենք բազմաթիվ կոնկրետ օրինակներ կրնայինք հիշել այստեղ:

Վերջերս էր, որ Երևանի հայտնի թժիշկ վիրաբույժ մը, որ իր երեխան մկրտած էր Էջմիածնի մկրտարանին մեջ, քանի մը օր հետո Մեզ հետ խոսակցության ընթացքին խոր հուզումով հետևյալ արտահայտությունը ունեցավ. «Վեհափառ, եթե ես Աստուծո չհավատամ, որևէ գործողություն չեմ կրնար կատարել կենդանի մարդու մարմնի վրա»:

Մենք կհավատանք, թե կրոնական կյանքի տազնապալի շրջանը անպայման անցողական երևույթ է ինչպես պատմության ընթացքին, նաև ուրիշ անգամներ: Մենք երջանիկ ենք այս պահուն, որ կգտնվինք ԵՂԽ-ի կամարներուն տակ, այս սուրբ մատուռին մեջ, միասին աղոթելու:

Մեր սուրբ եկեղեցին և առաքելական եկեղեցին հոգեկան մխիթարությամբ է, որ կփափաքի սերտորեն մասնակից դառնալ այս միջեկեղեցական կազմակերպության գործունեության:

Մեր խոսքը վերջացնելէ առաջ, կկամենանք սիրով բերել ձեզի բոլորիդ Աստուծո օրհնությունը և Էջմիածնեն: Եվ անգամ մը միասին աղոթենք և Ներսէս Ընդհալիի խոսքերով. «Տէր Յիսուս Քրիստոս, դու լույսի առաւօտ, դու արդարութեան արեգակ, ծագեցուր մեր բոլորի սրտերուն մեջ, քու կենարար լույս, Ամէն»:

Հայոց Հայրապետի սույն քարոզը, ինչպես և Նորին Սրբության հետագա բոլոր ելույթները, փայլուն կերպով ֆրանսերենի էր թարգմանում տ. Ծառե արքեպիսկոպոս Աճեմյանը:

Ժամը 11-ին, կարճ դադարից հետո, բոլոր ներկաները հաճույքն ունեցան դիտելու հայրենի տաղանդավոր նկարիչ Ալբերտ Յարալյանի՝ հայկական մանրանկարչության ոճով հորինած աստվածաշնչական զանազան դրվագներ ներկայացնող գեղարվեստական գունազեղ նկարներ, որոնք այս առթիվ Հայոց Հայրապետը իր հետ բերել էր Էջմիածնից՝ ցուցադրելու ԵՂԽ-ի կենտրոնում: Բոլոր ներկաները հիացումով դիտեցին աստվածաշնչական դրվագներին նվիրված հայ մանրանկարչական արվեստի այս գեղեցիկ ստեղծագործությունները:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՂԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ  
ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ՄԵԾ ԴԱՀԼԻԾՈՒՄ

Այնուհետև բոլոր ներկաները հրավիրվեցին սույն կենտրոնի կոնֆերանսների մեծ դահլիճ, որտեղ կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի և Նրա շքախմբի անդամների:



Եկեղեցիների համաշխարհային խորհրդի  
հանդիսությանց դահլիճում դոկտ. Ֆիլիպ Փոթըրը  
ողջունում է Հայոց Հայրապետին

ԵՂԽ-ի մեծարգո գլխավոր քարտուղարը Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության անդամների ներկայությունը ողջունեց գեղեցիկ ճառով (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, նույն համարը, էջ 11):

Ի պատասխան դոկտ. Փոթըրի ողջույնի խոսքի, Հայոց Հայրապետը հանդես եկավ բովանդակալից և ընդարձակ ճառով (տես «Էջմիածին» ամսագիր, նույն համարը, էջ 6):

Ծառերի փոխանակությունից հետո Հայոց Հայրապետը և դոկտ. Ֆիլիպ Փոթըրը փոխանակեցին հուշանվերներ:

Այս առթիվ դոկտ. Փոթըրը Հայոց Հայրապետին դիմեց հետևյալ խոսքով.



ԴՈԿՏ. ՓՈԹՈՐԻ ԽՈՍՔԸ ՀՈՒԾԱՆՎԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿ

Ձերդ Սրբություն,

Մեծապես շնորհակալ եմ Ձեր արտասանած այնքան խոր, այնքան ջերմ ու արտագին խոսքերի համար: Մենք այստեղ Էկումենիկ միջազգային մի համայնք ենք: Մենք նաև մի տեսակ սիյուոք ենք՝ համախմբված այս հարկի տակ:



Հայոց Հայրապետը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Կենտրոնում, Եդիշե պատրիարքի, դոկտ. Ֆիլիպ Փոթորի և դոկտ. Վիսենտ Լուֆտի հետ

Դուք մեզ տարիներ առաջ նվիրել եք մի գեղեցիկ խաչ, որը դիտում ենք ամեն անգամ, երբ գտնվում ենք մեր մատուռն մեջ: Այդ խաչը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ու նրա աշակերտների չարչարանքների խորհրդանշան է: Ձեր ժողովրդի ողջ պատմությունը եղել է այդ խաչը կրելու պատմություն: Իսկ այսօր Դուք մեզ նվիրեցիք մի ուրիշ գեղեցիկ մարմարյա խաչ: Մենք մի փոքրիկ հաշկական խաչ էլ ունենք մեր գրասենյակում: Այդ բոլորի փոխարեն այժմ ի՞նչ կարող եմ տալ Ձեզ: Մենք էլ, ինչ արած, մեր խաչն ենք կրում Եկեղեցիների համաշխարհային խորհրդում: Դա խոսքերի և փաստաթղթերի խաչն է: Ես իմ ձեռքի տակ, այստեղ, ունեմ մեր համաժողովների բոլոր տեղեկագրերը: Կարծում եմ, որ այն ամենը, ինչ բովանդակում են այս հատորները, եկեղեցիների կենդանի վկայությունն է Էկումենիկ շարժման մեջ: Եվ ես սիրով ցանկանում եմ ներկայացնել Ձերդ Սրբությանը մեր հինգ համաժողովներին վերաբերող այս տեղակագրերը:

Սույն հանդիպումից հետո, ԵՀԽ-ի ղեկավարությունը ժամը 13-ին



տվեց սիրո ճաշ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության անդամների:

#### ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՂԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ ՄԵԾ ԴԱՀԼԻԾՈՒՄ

Ժամը 13-ին ԵՂԽ-ի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ խորհրդակցություն Հայոց Հայրապետի, հայ եկեղեցու պատվիրակության անդամների և ԵՂԽ-ի ղեկավար անձնակազմի անդամների միջև:

Խորհրդակցությունում առաջինը հանդես եկան գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը և ապա ԵՂԽ-ի Հավատո և Կարգի Հանձնաժողովի նախագահ դոկտ. Լուկաս Ֆիշերը, որոնք համառոտակի, քայքայ նմանակալան ձևով ներկայացրին ԵՂԽ-ի գործունեության ընդհանուր պատկերը՝ վեր հանելով եկեղեցիների միության անհրաժեշտությունը եկեղեցիների միջև փոխադարձ հարգանքի և սիրո սկզբունքի վրա:

Խորհրդակցությունում Հայոց Հայրապետը խոսք առնելով շեշտեց, եկեղեցիներից բացի, ընկերային ժամանակակից տարբեր գաղափարախոսությունների հետ դիալոգի մեջ մտնելու անհրաժեշտությունը, մասնավորապես աշխարհում խաղաղության պաշտպանության, զինաթափման և ազգերի միջև խաղաղ գոյակցության հաստատմանը նպաստելու հեռանկարով:

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, ի պատիվ Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության, ԵՂԽ-ի ղեկավարությունը «Ռիչմոնդ» հյուրանոցում կազմակերպեց պաշտոնական ընդունելություն, որին հրավիրվել էին նաև Ժընևի քաղաքագլուխս պր. Պիեռ Ռեզեդը, Ժընևի Կանոնի կրթական խորհրդատու պր. Ծավանը, ինչպես նաև շվեյցարաբնակ համայնքի պատասխանատու և ղեկավար անձնավորություններ:

Ընդունելության ժամանակ բաժակաճառեր արտասանեցին դոկտ. Փոթըրը, Եղիշե պատրիարք Տերտերյանը և Հայոց Հայրապետը:

#### ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՄ

Հունիսի 22-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, «Բո Ռիվաժ» հյուրանոցի սրահներից մեկում Հայոց Հայրապետը տվեց մամուլի ասուլիս, որին ներկա էին ֆրանսիական, գերմանական, անգլիական և միջազգային մամուլի այլ գործակալությունների ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետը ողջունեց միջազգային մամուլի հարգելի ներկայացուցիչներին և նախապես համառոտակի խոսեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայոց աշխարհի, սփյուռքի հայության և եկեղեցական-ազգային կյանքի մասին ինչպես Սովետական Միությունում, որտեղ ապրում է շուրջ չորս և կես միլիոն հայություն, որտեղ կան կազմակերպված եկեղեցական թեմեր, այնպես էլ սփյուռքում, որտեղ ապրում են մոտ երկուսկես միլիոն հայեր՝ նույնպես կազմակերպված իրենց թեմական, համայնքային կյանքով, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր վերին իշխանության ներքո:

Ապա Հայոց Հայրապետը պատասխանեց հարգելի թղթակիցներին հետաքրքրող կրոնական, եկեղեցական, Էկումենիկ մի շարք հարցերի:



ԱՅՑՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԺԸՆԵՎԻ ԿԱՆՏՈՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ հայ եկեղեցու պատվիրակության անդամների և առաջնորդությամբ դոկտ. Փոթըրի, պաշտոնական այցելություն տվեց Ժընևի կանտոնի և քաղաքային իշխանություններին:

Քաղաքապետարանի շենքի առաջ Ժընևի կանտոնի պրոտոկոլի պետ պր. Ռոբեր Վիյոն պաշտոնապես դիմավորեց Հայոց Հայրապետին և հայ եկեղեցու պատվիրակությունը՝ իր կողքին ունենալով Ժընևի քաղաքապետ Պիեռ Ռեզեմին:



Ժընևի քաղաքապետարանի պալատում

Հայ եկեղեցու պատվիրակությունը առաջնորդվեց քաղաքապետարանի ընդունելության դահլիճ, որտեղ Ժընևի պետական խորհրդի փոխնախագահ պր. Ժակ Վեռնեն ողջունեց Հայոց Հայրապետի ներկայությունը հետևյալ ջերմ ուղերձով:

ԺԸՆԵՎԻ ԿԱՆՏՈՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ  
ԺԱԿ ՎԵՐՆԵՆԻ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ  
(Հունիս 22)

Զերդ Սրբություն,

Ժընևի քաղաքապետարանը և Ժընևի կանտոնի պետական խորհուրդը միասնաբար հաճույքն ունեն այսօր ընդունելու Ձեզ այս դահլիճում՝ հանուն մեր հանրապետական կառավարության:



Դուք արդեն ծանոթ եք այս դահլիճին, որովհետև երկրորդ անգամն է, որ պատվում եք մեզ մի քանի լուսավոր գալով այստեղ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդին տված Ձեր այցելություններից մեկի առիթով:

Մենք օգտվում ենք այս թանկագին առիթից, ի դեմս Ձեզ և ի դեմս Ձեզ ուղեկցող ձեր եկեղեցու բարձրաստիճան հոգևորական անձանց, կրկին անգամ ողջունելու Գերագույն Պետին և հոգևոր պատասխանատուներին ոչ միայն պարզապես մի եկեղեցու, այլև մի ամբողջ ժողովրդի, ժողովուրդ, որին պատմական դժբախտ իրադարձությունները, որ ծանոթ են բոլորիս, հարկադրեցին ցրվել աշխարհով մեկ, բայց որը կարողացավ մնալուն կերպով և գերազանցապես պահել իր ազգային միասնությունը շնորհիվ նախնիներից ժառանգած իր հավատի և շնորհիվ նաև այն սքանչելի մշակույթի, որի պահպանողներն եք դուք:

Ձերդ Սրբություն, ես չեմ ուզում թաքցնել Ձեզանից, որ այսօր որոշ իմաստով ես մի ուրիշ զգացում էլ եմ ապրում, անձնական հաճույքի մի զգացում, որովհետև իմ ստացած կրթության և դաստիարակության համար ես մասամբ պարտական եմ նաև այն հանգամանքին, որ իմ հայրենակիցները, ահա արդեն ավելի քան հիսուն տարիներից ի վեր, այս քաղաքում հյուրընկալում են բազմաթիվ հայերի: Եվ հենց այդ առթիվ է, որ երբ շատ փոքր էի տակավին, ինձ սովորեցրին հյուրասիրությունը, որը հետագայում պիտի մշակվի իմ մեջ որպես ժրնկեցիներին հատուկ մի գեղեցիկ հատկություն: Իհարկե միշտ չէ, որ մեզ հաջողվում է լավագույն կերպով դրսևորել մեզ հյուրասիրության մեջ, սակայն կարող եմ հաստատապես ասել, որ պատմության ընթացքում ժրնկեցիները միշտ ձգտել են և այսօր էլ շարունակում են մշակել եղբայրական հյուրասիրության և ասպնջականության այդ թանկագին առաքինությունը:

Ձերդ Սրբություն, մեզ անծանոթ չէ այն կարևոր դերը, որ Դուք կատարել եք և շարունակում եք կատարել Էկումենիկ շարժման մեջ ընդհանրապես և մասնավորապես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ծոցում, ոչ միայն Դուք անձնապես, այլև ձեր եկեղեցին:

Թույլ տվեք այս առթիվ անել մի կարևոր հաստատում Էկումենիզմի ասպարեզում ամեն օր դրսևորվող մի երևույթի շուրջ: Իրենց հավատքի մեջ համեմատաբար անկայուն մարդիկ չեն, որ կարող են հաջողությամբ առաջ ընթանալ Էկումենիզմի մեջ, ապրել և կենսագործել այն, այլ, ընդհակառակը, նրանք, ովքեր կապված են իրենց հավատքին առանձնահատուկ կրքով, որովհետև երբ մարդ այդպես ամուր կապված է լինում իր հավատքին, ինչպիսին Դուք եք, այդ դեպքում միայն նա կարող է նստել Էկումենիզմի սեղանի շուրջ՝ հաջողության հասնելու որոշ հույսով:

Ահա այս բոլոր պատճառներով է, որ մենք անչափ ուրախ ենք այսօր գեթ մի պահ Ձեզ ունենալու մեր մեջ:

Կրկին անգամ բարի գալուստ ենք մաղթում Ձերդ Սրբությանը և Ձեզ ցանկանում լիակատար հաջողություն Ձեր սուրբ առաքելության ճանապարհին:

Պարոն փոխնախագահի գեղեցիկ ուղերձին պատասխանեց Հայոց Հայրապետը հետևյալ բովանդակալից, սրտառույ խոսքով.





Ծ Ո Վ Ա Ն Կ Ա Ր

(Գործ՝ նկարիչ Մախոխյանի. նվեր՝ Հայկ Աղաբեկյանի. Փարիզ)



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ ԺԸՆԵՎԻ  
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ  
(22 հունիսի, հինգշաբթի, 1978 թ.)

Աստուծո ոլորմությամբ կարողացանք, երկրորդ անգամ ըլլալով, Մեր քաջերը ուղղել դեպի այս միջազգային քաղաքը՝ Ժընև, հրավերովը Մեր սիրեցյալ եղբայր դոկտ. Ֆիլիպ Փոթըրի, ընդհանուր քարտուղարը Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի:

Ժընև քաղաքը միջազգային համբավ կվայելեր արդեն շատոնց ի վեր, բայց կխորհինք, թե այդ համբավը պատկավորվեցա՞յ աչս վերջին մի քանի տասնամյակներուն, հիմնադրումովը այստեղ ԵՀԽ-ի: Եվ Մենք այս անգամ ալ սիրով ողջագործեցանք Էկումենիկ կեդրոնի Մեր եղբայրներուն հետ, միասին աղոթեցինք, մեր մտածումները փոխանակեցինք և նոր ճանապարհ բացինք, որպեսզի մեր հայ առաքելական եկեղեցվո և Էկումենիկ շարժման հարաբերությունները և աշխատակցությունը ավելի զարգանան և զորանան:

Մենք բոլորս կհավատանք քրիստոնեական եկեղեցիներու միության Թրիստոսի սիրույն մեջ, և այս ճանապարհով կխորհինք, թե եկեղեցիները մեծ նպաստ մը բերած կըլլան նաև համամարդկային միասնություն ստեղծելու մեծ իդեալի իրականացման ճանապարհին վրա: Մենք այս մտածումները կարտահայտենք հոգեկան մեծ մխիթարությամբ այստեղ, այս տունին մեջ, որովհետև գիտենք, որ Զվիցերիան, Ժընևը հատկապես, զվիցերական ժողովուրդը և պետությունը, շատոնց ի վեր դրոշակակիրները հանդիսացած են համամարդկային եղբայրության և միասնության սրբազան գաղափարին:

Այս պահուն Մեր մտածումը կերթա դեպի ետ, մինչև անցյալ դարու շրջանները, երբ մեր ժողովուրդի դժբախտ զավակները շատ անգամ ապաստան գտած են այս քրիստոնեական ազատ երկրին մեջ և նույնիսկ այստեղ իրենց գործունեությունը ծավալած են հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ճանապարհին:

Արդարության և ազատության իդեալի հետապնդման պայքարի ճանապարհին վրա, Զվիցերիան և Ժընև քաղաքը իր պատվավոր տեղը ունին նաև հայ ժողովուրդի պատմության մեջ:

Ապա, առաջին համաշխարհային պատերազմեն հետո, երբ մեր ժողովուրդը ապրեցավ 1915 թվականի ցեղասպանության ողբերգությունը, այդ պատերազմեն հետո նույնպես Ժընևը իր դռները բացավ, ապաստան տալով հատկապես բազմահարյուր հայ որբերու: Ժընևցի դոկտոր Կրաֆտ Բոնարի անունը մեր ազգի պատմության գրքին մեջ արձանագրված է երախտագիտությամբ:

Ահավասիկ, թե ինչքան հարազատ է մեզի Ժընևը և զվիցերացի ժողովուրդը:


Հետևաբար, թույլ տվեք, մեր եկեղեցվո անունով, մեր պատվիրակության բոլոր անդամներուն անունով ներկայացնել Ձեզի և Ձեր գործակիցներուն Մեր սիրո ողջույնը՝ բերելով Աստուծո օրհնությունը սուրբ Էջմիածնեն և Մեր ամենաբարի մաղթանքը, որ Աստված միշտ ապահով, խաղաղ և բարգավաճ պահե-պահպանե այս օրհնյալ երկիրը և այս սքանչելի ժողովուրդը:



Քաղաքապետարանի սույն ընդունելությանը և ճառերի փոխանակմանը ներկա էին ժընևի պետական իշխանությանց այլ ներկայացուցիչներ, քաղաքապետարանի անդամներ, ինչպես նաև քույր եկեղեցիների և հայ համայնքի ներկայացուցիչներ:

#### ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԾԱՄԲԵՋԻՒ ՕՐԹՈՂՈՔՍ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 12.30-ին, Հայոց Հայրապետը և հայ եկեղեցու պատվիրակությունն այցելեց Կ. Պոլսի տիեզերական պատրիարքության Ծամբեզիի օրթոդոքս կենտրոն: Ժընևում հույն օրթոդոքս եկեղեցու այս շքեղ կենտրոնի շքամուտքի ստաջ Հայոց Հայրապետին և Նրան ողեկցող բարձրաստիճան հայ հոգևորականներին դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Տրանուպոլսի Դամասկոնոս միտրոպոլիտը՝ շրջապատված բարձրատի-



Հայոց Հայրապետը ժընևի օրթոդոքս եկեղեցու Ծամբեզիի կենտրոնի մատուան մեջ

ճան հույն հոգևորականներով, և եկեղեցու զանգերի դողանջի ներքո, եկեղեցական թափորով ու հանդիսավորությամբ առաջնորդեց Կենտրոնի եկեղեցի:

Եկեղեցում Էկումենիկ աղոթքից հետո միտրոպոլիտ Դամասկոնոսը ողջունեց Հայոց Հայրապետի և հայ եկեղեցու պատվիրակության ներկայությունը հետևյալ ճառով.

ՄԻՏՐՈՊՈՂԻՏ ԴԱՄԱՍԿՈՆՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ  
ԾԱՄԲԵՋԻՒ ՕՐԹՈՂՈՔՍ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ջերդ Սրբություն,

Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Դիմիտրիոս Ա-ի անունից պատիվն ունեմ սիրո և խորին հարգանքի զգացումներով ողջու-



նելու այստեղ Ձերոյ Սրբութեանը՝ Ծայրագույն Պատրիարքին և կայծղիկոսին Ամենայն Հայոց, ինչպես նաև Ձեր շքախմբի մեծարգո անդամներին: «Թող օրհնչալ լինի նա, ով գալիս է Տիրոջ անունով» իր հռչակավոր Աթոռից, որը կրում է «Էջմիածին» անունը և որը նշանակում է «Միածին Որդին իջավ», որպեսզի հավերժացնի հիշատակը Տիրոջ կողմից հիմնված Հայաստանյայց եկեղեցու:

Տիեզերական պատրիարքության Ծամբեզիի օրթողոքս այս կենտրոնը ցանկանում է ավելի ու ավելի նպաստել համաօրթողոքս միությանը և սուսջ մղել երկկողմ դիալոգները, որոնք եկեղեցաբանական կարևոր նշանակություն են ներկայացնում քրիստոնեության ներկա կառույցի համար: Արդարև, այստեղ է, որ Համաօրթողոքս սուսջին կոնֆերանսի ժամանակ, որը տեղի ունեցավ 1976 թվականի նոյեմբերի 21—28-ը Նորին գերազնորհություն միտրոպոլիտ Մելիտոնի նախագահությամբ, բոլոր օրթողոքս եկեղեցիների կողմից միաձայնությամբ տրամադրություն արտահայտվեց աստվածաբանական դիալոգի նստելու քույր եկեղեցիների և մասնավորապես ձեր և մյուս բոլոր արևելյան հին եկեղեցիների հետ: Ծոշափելով Օրթողոքս եկեղեցու՝ արդեն իսկ ընթացքի մեջ եղող դիալոգների հարցը, որոնց հիմնական նպատակն է քրիստոնեյանների միության իրականացման նսնակարհին արդյունավետ որոնումների սուսջմղումը, Համաօրթողոքս կոնֆերանսը որոշում ընդունեց զարգացնել ու խորացնել դիալոգը մասնավորաբար արեւելյան հին եկեղեցիների հետ: Եվ ես ուրախ եմ, որ այժմ կարող եմ Ձեզ հայտնել, թե, ի գործադրություն այդ որոշման, Ծամբեզիի օրթողոքս կենտրոնում, որտեղ գտնվում ենք այս պահին, սուսջիկա սեպտեմբերի 10—14-ը տեղի է ունեցել միջօրթողոքս հանձնախմբի ժողովը՝ սկսելու համար դիալոգը ձեր եկեղեցու հետ:

Օրթողոքս եկեղեցու Տիեզերական սուրբ և Մեծ Ժողովը նախասյառուսատող Կոմիտեի քարտուղարի իմ հանգամանքով պարտիմ նաև նշել, որ մեր միության գործն սուսջ մղելու ցանկությունն այսօր տարածված է օրթողոքս աստվածաբանների լայն շրջանակում, աստվածաբաններ, որոնք հաստատում են մեր եկեղեցիների միջև գոյություն ունեցող հավատի էական միությունը: Այս համոզումը, կրկնում եմ, հետզհետե ավելի մեծ տարածում է գտնում մեր աստվածաբանների մեջ: Սրա վստ ապացույցն է օրթողոքս երկու հայտնի աստվածաբանների՝ «Եկեղեցուն ուղղված կոչ»-ը, որ գրված է օրթողոքս եկեղեցու ապագա տիեզերական մեծ ժողովի կապակցությամբ և որի մեջ սսվում է. «Հարկավոր է շուտափույթ կերպով վերականգնել արևելյան հին եկեղեցիների հետ մեր ամբողջական միությունը: Աստվածաբանների միջև տեղի ունեցած երեք հանդիպումներից հետո, որոնք եղան լիովին դրական, հավատի հիմնական միությունն այլևս կասկած չի հարուցում: Դրա համար բավական եղավ վերագտնել հայրաբանական հասարակաց ներշնչումը և Քստկեղոնը վերագետնել եկեղեցու պատմության ամբողջական դիալեկտիկայի մեջ: Այժմ անհրաժեշտ է թոթափել անշարժության դարավոր բեռը՝ անհասպող ձեռնամուխ լինելու համար մեր եկեղեցիների միության իրականացմանն ուղղված գործնական քայլերի, որոնք նվիրագործելու են ուղղափստության ներկայությունը մինչև Աֆրիկայի և Ասիայի խորքերը»:

Ես ցանկանում եմ միաժամանակ նշել այն իրողությունը, որ մեր երկու եկեղեցիների մերձեցումը հանդիսանում է նաև պատմական մի անհրաժեշտություն, ինչպես որ այդ ընդգծվեց ձեր և մեր եկեղեցու ներկայացուցիչ-



Արի կողմից 1972 թվականին Արաբական Միջին Արևելքի շրջանակում տեղի ունեցած հանդիպման ժամանակ. «Օրթոդոքս եկեղեցիներն ու արևելյան հին եկեղեցիները, Արաբական Արևելքում, ցանկանալով վերացնել այն անջրպետը, որ բաժանում էր նրանց հինգերորդ դարից սկսած, հակասակ նրան, որ դավանում էին նույն հավատի խոստովանությունը, կարիքն զգացին հանդիպելու միմյանց՝ ուսումնասիրելու համար այն բոլոր խոչընդոտները հաղթահարելու միջոցները, որոնք մինչև օրս արգելք են հանդիսացել նրանց միջև ամբողջական միության: Քանի որ նրանք սպրում են պատմական նույն իրականության մեջ և կանգնած են աշխարհիկ և հոգևոր նույն խնդիրների առաջ, նրանք համոզված են, որ ընդհանուր մի պատասխանատվություն ստիպում է նրանց միանալ վկայության և ծառայության մեջ՝ զանց առնելով լեզվի տարբերություններն ու այն պատմական արգելքները, որոնք բաժանել էին նրանց անցյալում»:

Թող մեր հասարակաց Հոր՝ Կյուրեղ Աղեքսանդրացու «Մի է հնություն հանին մարմնացելոյ» աստվածաբանական բանաձևը արգասավորի մեր ջանքերը դեպի միություն. թող նրա խոնարհությունն ու պատասխանատվության զգացումը մեզ օրինակ ծառայեն՝ հիշեցնելով մեզ, որ 433 թվականին նա հոժարեց մի կողմ թողնել իր այնքան գեղեցիկ աստվածաբանությունը՝ հաշտություն կնքելու համար Հովհաննես Անտիոքացու հետ, համոզված լինելուց հետո, որ, բոլոր տարակարծություններից վեր, իրենց հավատը նույնական էր:

Այս ոգով, Ձերդ Սրբություն, ես կրկին անգամ մաղթում եմ Ձեզ բարի գալուստ և խնդրում եմ ընդունել խորին երախտագիտության իմ զգացումները Ձեր այցելության համար, որով պատվում եք մեզ:

Ի պատասխան միտրոպոլիտ Դամասկինոսի ուղերձի, Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ ջերմ խոսքով.

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԺԸՆԵՎԻ ՕՐԹՈՂՈՔՍ  
ԿԵՆՏՐՈՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ  
(22 հունիսի, հինգշաբթի, 1978 թ.)**

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ, Ամէն»:

Մենք պետք է գոհություն տանք Աստուծո, որ ժընն մեր այցելության անիթով պատեհությունը ստեղծվեցավ այստեղ միասին աղոթելու մեր հույն սիրեցյալ եղբայրների հետ միասին:


Այս մթնոլորտը այնքան ջերմ է և մտերիմ մեր սրտին: Այս պահուն կարիքն սաղմոսերգուի զգացումը. «Ձի՛ բարի, զի՛ վայելուչ, զի եղբարք բնակեացեն ի միասին»:

Հույն Օրթոդոքս եկեղեցին դարավոր ուղեկիցը եղած է հայ եկեղեցիին և հայ ժողովուրդին, քրիստոնեական կյանքի սկզբնավորության շրջաններին սկսյալ:

Մեր քրիստոնեական հավատքն ու ավանդությունները, կազմակերպությունն ու մեր եկեղեցական ծեսը, մեր աղոթքները այնքան մեզ կմիացնեն: Նույնիսկ մեր լեզուն, հայերեն լեզուն այնքան հարուստ է հունական արմատ բառերով, որոնք մոծվեցան հայ լեզվի մեջ, և շաղախվեցան հայ լեզվի հետ քրիստոնեության մուտքեն հետո:

Մեզի կմնա այսօր ուղիղ հասկնալ մեր հավատքի արմատները և մեր





Մ Ո Վ Ա Ն Կ Ա Ր  
(Գործ՝ նկարիչ Ալիսայանի, նվեր՝ Հայկ Աղաբեկյանի, Փարիզ)



պատմական ճանապարհի համասեռ զարգացումները, և արդիական էկոմենիկ ոգիով առավել զիրար գնահատել, առավել զիրար սիրել և առավել իր կատարելության հասցնել մեր եղբայրությունը և միությունը Քրիստոսի սիրույն մեջ:

Մենք բարձրորեն կգնահատենք հույն օրթոդոքս եկեղեցվո տիեզերական պատրիարքության հեղինակավոր ներկայությունը այս էկոմենիկ կեդրոնին մեջ:

Կխորհիմք թե բոլորս համաձայն ենք, որ հույն օրթոդոքս եկեղեցվո ներկայությունը Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի մեջ, առավել չափով կապահովե քրիստոնեական հավատքի վավերականությունը այս միջազգային կազմակերպության մեջ:

Մենք կաղոթենք առ Աստված, որպեսզի այս ճանապարհով մենք բոլորս ձեռք-ձեռքի տված, ԵՀԽ-ի հովանիին ներքև շարունակենք հատաչ ընթանալ դեպի իրագործումը քրիստոնեական տիեզերական միության մեծ իղեային, որով կխորհիմք թե եկեղեցիները իրենց նպաստը պիտի բերեն համամարդկային միասնության իրականացման այս աշխարհի վրա, որուն ծարավը ունին բոլոր ժողովուրդներու լայն զանգվածները:

Վստահ ենք, որ այս գաղափարները կխոսին նաև Ձեր սրտերուն, և այս ոգիով է, որ կգործեք այստեղ:

Թող Աստուծո կենարար ձեռքը միշտ պահպանե հույն օրթոդոքս եկեղեցին և զայն միշտ փառավորե հաղթական իր ճանապարհի վրա. Ամեն:

Հայ և հույն օրթոդոքս եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականների սույն էկոմենիկ հանդիպմանը ներկա էին նաև ԵՀԽ-ի բոլոր ղեկավար անդամները, Ժընևում գտնվող քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև հայ համայնքի պատասխանատու ներկայացուցիչներ:

Հանդիպման ավարտին միտրոպոլիտ Դամասկինոսը Հայոց Հայրապետին և հայ եկեղեցու պատվիրակությանը պատվեց մեծ ճաշկերույթով, որի ընթացքում փոխանակվեցին բաժակաճառեր և հուշանվերներ:

#### ԱՅՑ ԺԸՆԵՎԻ ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Նույն օրը, ժամը 16-ին, Հայոց Հայրապետը և հայ եկեղեցու պատվիրակությունը, առաջնորդությամբ դոկտ. Փոթըրի, այցելեցին Ժընևի բողոքականաց ազգային եկեղեցի: Այստեղ, սուրբ Պետրոս Մայր տաճարի «Ծապել դե Մակաբե» մատուան մեջ, տեղի ունեցավ էկոմենիկ աղոթք, որի ավարտին եկեղեցու գործադիր խորհրդի նախագահ պր. Ռեմի Ժեկիեն Հայոց Հայրապետի ներկայությունը ողջունեց ջերմ ուղերձով, որին ի պատասխան Նորին Սրբությունը հանդես եկավ հետևյալ խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԺԸՆԵՎԻ Ս. ՊԵՏՐՈՍ ՏԱՃԱՐԻ

«ԾԱՊԵԼ ԴԵ ՄԱԿԱԲԵ» ՄԱՏՈԱՆ ՄԵԶ

(22 հունիսի, հինգշաբթի, 1978 թ.)

Այստեղ գալու առեն ճանապարհին կմտածեիմք, թե ինչի մասին հարմար է, որ արտահայտվիմք: Եվ ահա այս մատուտի դռներն ներս մտնելով և կարդալով վերը, պատին վրա դրոշմված արձանագրությունը՝ Post teiueh-



ras lux («Խավարեն ետք՝ լույս»), անմիջապես հստակացավ Մեր միտքը: Այս արտահայտությունը, հատկապես ինչ կվերաբերի մեր եկեղեցվո և ժողովուրդի պատմության, տառուցի կերպով ճշմարիտ է այն իմաստով, որ հայ ժողովուրդի կյանքին մեջ քրիստոնեության մտոքը իսկապես եղավ ուսում մը՝ խավարեն դեպի լույս: Եվ ավելորդ չենք նկատեր այստեղ ըսել, թե մեր ճին աղոթքներուն և շարականներուն մեջ, որոնք սուրբ Գրիգոր Լուսավորչի գործունեության կվերաբերին, բազմազան ձևերով արտահայտված է այն մտածումը, թե հայ ժողովուրդը՝ խավարային կյանքե մը կոչվեցավ նոր կյանքի մը լույսին:

Արդարև, հայ ժողովուրդի ամբողջ պատմությունը, մոտ երկու հազար տարիներե ի վեր, լուսավորված է Քրիստոսի լույսով:

Որոշ չափով տարբերելով մյուս ժողովուրդներու պարագայեն, հայ ժողովուրդի կազմավորման և ընձյուղման պահը զուգադիսեցավ քրիստոնեության մտոքին Հայոց աշխարհեն ներս: Հայ ժողովուրդի ամբողջ մշակույթը քրիստոնեական հավատքի լույսով շաղախված է: Նույնպես և մեր պատմությունը, մեր ողբերգական պատմությունը, որ դյուցազներգություն մը եղած է հանուն քրիստոնեական հավատքի և հանուն ազատության: Ահա թե ինչու այս խոսքը շատ հարազատ կհնչե մեր արտին և ամբողջական կերպով կրնա խորհրդանշել մեր եկեղեցվո և ժողովուրդի ճակատագիրը:

Եվ շարունակելով Մեր միտքը նույն գաղափարներու ճանապարհով, կուզեինք ընդգծել, թե «Post tenebras lux» արտահայտությունը կամ դատողությունը գուցե սխալ պիտի չըլլար օգտագործել նաև մեր օրերուն Էկումենիզմի զարգացման այս շրջանին: Որովհետև, նկատի ունենալով այն ծանր օրերը, այն տխուր դեպքերն ու իրադարձությունները, որոնք տեղի ունեցան միջեկեղեցական հարաբերություններու մեջ անցյալ դարերուն և որոնք երբեմն հանգեցան արյունահեղ պատերազմներու, առանց չափազանցելու կրնանք այսօր ըսել, որ Էկումենիզմի այս շրջանը, իսկապես խավարեն լույս ուսում մը եղավ Քրիստոսի եկեղեցվո զարգացման պատմության ճամբուն վրա: Եվ այսօր, Էկումենիզմի այս դարաշրջանին, մենք կհավատանք, թե բոլոր եկեղեցական կազմակերպությունները, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի հովանիին տակ, իրապես լուսավոր ուղիով մը կընթանան:

Ծարունակելով Մեր դատումները՝ եթե փորձենք տալ պատկերը մեր աշխարհի այսօրվա կյանքին, ուր շատ անգամ կհանդիպինք անկումային երևույթներու, ազգամիջյան արյունալի ընդհարումներու, խոր և ցավալի սնանդարություններու, որոնք կգործադրվին ժողովուրդներու կամ փոքրամասնություններու նկատմամբ առավել կամ նվազ չափով ամեն տեղ, կըրնանք ըսել, որ մեր կյանքը այսօր ալ ամբողջովին լուսավոր չէ, քանի որ այդ բոլորը ինչ-որ չափով կմթագնեն մեր դարաշրջանի մթնոլորտը:

Ահավասիկ մեր առջև դրված պարտականություն մը, առաքելություն մը: Մեր ձեռքը բռնած Քրիստոսի Ավետարանի ջահը՝ մենք, բոլոր եկեղեցիներս, մեր միացյալ ուժերով պետք է աշխատինք այս մշուշներն ալ փարատել՝ ստեղծելու համար մարդկություն մը ավելի միասնական, ավելի մարդկային, ավելի արդար և ավելի ազատ:

Մենք վստահ ենք, թե Ժրնկի բողոքականաց ազգային եկեղեցին, որ անդամ է Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին, և այս պատմական տաճարի կամարներուն տակ աղոթողները, այս ոգիով ներշնչված կաշխատին:



Մայր Աթոռ ս. Էջմիածնեն այցի գալով այս քաղաքը, Մենք մեր բողոքական եղբայրներուն կքերենք Մեր սիրո ողջույնը՝ Մեր ամենաբարի մաթթանքներով հանդերձ:

Թող Աստված օրհնէ ձեզ և հաջողությամբ պսակէ ձեր առաքելությունը:

Այնուհետև, ի պատիվ հայ եկեղեցու ներկայացուցիչների, ընդունելություն կազմակերպվեց ժողովրդապետների ընկերության սրահում, որտեղ տեղի ունեցավ ջերմ գրույց և փոխանակվեցին հուշանվերներ:

**ԱՅՑ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ՄՈՏ ՍՍՀՄ ՄՆԱՅՈՒՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅԱՆ ԺԸՆԵՎԻ ԿԵՆՏՐՈՆԻՆ**

Հունիսի 23-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ տ. Արսեն եպիսկոպոսի, տ. Տիրան վարդապետի և պր. Պարզև Ծախբազյանի, ինչպես նաև շվեյցարահայ համայնքի ներկայացուցիչների, այցելություն տվեց Միավորված ազգերի մոտ ՍՍՀՄ մնալուն ներկայացուցչության ժընևի կենտրոնին:

Սույն այցելությանը ներկա էին նաև ժընևում սովետական դեսպանատան ներկայացուցիչները:

Հայոց Հայրապետի և ժընևում սովետական ներկայացուցչության նախագահի պաշտոնակատար Էդուարդ Պարզևակու միջև տեղի ունեցավ սիրալիք գրույց:







### ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԱՆԿԱԳԻՆ ՀՅՈՒՐՆ Է ՇՎԵՅՑԱՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժընկի կենտրոնը հունիսի 20—23 օրերին մեծաշուք հանդիսություններով, ընդունելություններով, պետական պաշտոնական այցելություններով պատվեց և մեծարեց Հայոց Հայրապետին և հայ եկեղեցու պատվիրակությանը:

Հունիսի 24-ից սկսած մինչև հունիսի 29-ը Վեհափառ Հայրապետը եղավ հյուրը շվեյցարահայ համայնքի: Այս առթիվ ժընկի հայոց եկեղեցական, համայնքային և ազգային մշակութային միությունները կազմել էին հայրապետական ընդունելությանը հանձնաժողով, որին նախագահում էր և ղեկավարում ծանոթ ազգային դեմք տիար Մկրտիչ Ծելեֆյանը:

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՌԻՉՄՈՆԴ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Ժընկի հայոց ընդունելությանը հանձնաժողովը հունիսի 24-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18.30-ին, «Ռիչմոնդ» հյուրանոցում Հայոց Հայրապետի անունից պաշտոնական ընդունելություն կազմակերպեց ԵՀԽ-ի ղեկավար կազմի և ժընկի պետական պաշտոնական այլ անձնավորությունների պատվին:

Հայրապետական սույն ընդունելությանը ներկա էին ԵՀԽ-ի ողջ ղեկավար անձնակազմը, Շվեյցարիայում սովետական դեսպանության և ժընկում Միավորված ազգերի մոտ ՍՍՀՄ մնայուն ներկայացուցչության, ժընկում գտնվող ԵՀԽ-ի անդամ քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրոպայից, Թուրքիայից, Պարսկաստանից, ԱՄՆ-ից ժամանած ծանոթ հայ ազգայիներ, շվեյցարահայ համայնքի ղեկավար ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ՝ ավելի քան երեք հարյուր հոգի:

Սույն ընդունելությանը ներկա էին նաև Վեհափառ Հայրապետի ջբախըմքի անդամները՝ տ. Եղիշե սրբազան պատրիարքի գլխավորությամբ:

Ընդունելության ժամանակ, հանուն շվեյցարահայ համայնքի, Հայոց Հայրապետի ներկայությունը հուզիչ ճառով ողջունեց ընդունելության հանձնաժողովի նախագահ տիար Մկրտիչ Ծելեֆյանը՝ շեշտելով, որ այս մի քանի օրերի ընթացքում շվեյցարահայ համայնքը, ինչպես նաև հայկական



տարբեր գաղթօջախներից այստեղ ժամանած հայորդիները, համախմբված իրենց սիրելի Հայրապետի շուրջը, ապրեցին ազգային հպարտության, բերկրանքի և հոգևոր խանդավառության անմոռաց օրեր:

Սեղանների շուրջ ստեղծվել էր ճշմարտապես ոգեշունչ, հայրենասիրական խանդավառ մթնոլորտ: Ուրախ էին բոլորը՝ Հայոց Հայրապետը, հայ եկեղեցու իշխանավորները և հանդիսությանը ներկա ամեն մի հայ մարդ:

Այս առթիվ խոսք ստավ նաև ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը:



Հայոց Հայրապետը Փրնկի Կանտոնի փոխնախագահ Ժակ Վերնեի հետ

Հուզված էր մանավանդ Հայոց Հայրապետը ի տես իր պանդուխտ ու հավատավոր զավակների սիրտ և պաշտամունքի այս արտահայտությունների դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, դեպի նրա արդի Գահակալը և դեպի Հայաստանյայց առաքելական եկեղեցին:

Ընդունելության վերջում Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ սրտառույ ուղերձով.

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՌԻՉՄՈՆԴ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ  
ԴԱՀԼԻԾՈՒՄ ԵՂՄ-Ի ՊԱՏՎԻՆ ՏՐՎԱԾ ԾԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ  
(24 հունիսի, շաբաթ, 1978 թ.)

Բաժանումի պահն է այս Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի կազմակերպութենեն, որուն հյուրը եղանք անցնող այս երեք օրերու ընթացքին:

Փրնկի հայոց համայնքը, գլխավորությամբ Մեր հայրապետական պատվիրակ տ. Սերոբե արքեպիսկոպոսի և տեղի հոգևոր հովիվի, երջանիկ գա-



դափարը ունեցած է այս հավաքույթը կազմակերպելու մեր բոլորիս կողմն, մեր եկեղեցվո կողմն, ի պատիվ ԵՀԽ-ի մեր եղբայրներուն:

Մենք շատ ուրախ ենք, որ այս պահուն այստեղ կգտնվին ոչ միայն մեր պատվիրակությունը, ոչ միայն Ժընևի համայնքի տարբեր կազմակերպություններու ներկայացուցիչները, այլ Եվրոպայի գրեթե բոլոր երկիրներեն, նույնիսկ Ամերիկայեն ժամանած պաշտոնական ներկայացուցիչներ, Մայր Աթոռի բարերարներ, բարեկամներ և հանրային գործիչներ:

Այս առիթով կուզենք նաև Մեր շնորհակալությունները հայտնել մեր եկեղեցվո այն բարձրաստիճան հոգևորականներուն, որոնք մեր պատվիրակության անդամ դարձան, և մենք միասին ներկայացուցիչք Մայր Աթոռ և Էջմիածինը և Հայաստանյայց առաքելական եկեղեցին ԵՀԽ-ի մեջ:

Մեր շնորհակալության խոսքը առաջին հերթին կուղղվի դեպի Մեր սիրելի եղբայրը՝ Երուսաղեմի հայոց սրբազան պատրիարք տ. Եղիշե արքեպիսկոպոսը, որ ոչ միայն այս առիթով, այլ նաև բոլոր առիթներով միշտ Մեր կողքին է, Մեզի հետ միասին, միասնաբար, միախորհուրդ և միական, ներկայացնելու համար մեր եկեղեցին և պաշտպանելու մեր եկեղեցվո գերագույն շահերը ամեն տեղ:

Մենք շատ գոհ ենք նաև Մեր հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսեն, ինչպես և տ. Թորգոմ Մանուկյան, տ. Վաչե Հովսեփյան արքեպիսկոպոսներեն և տ. Ծափե արքեպիսկոպոս Աճեմյանեն, որոնք նույն ոգիով մասնակցեցան Մեր գործունեության:

Եվ այժմ կրկին անգամ սրտանց և հուզումով Մեր խորին գոհունակությունը և շնորհակալությունը կհայտնենք ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրին և իր բոլոր գործակիցներուն, որոնք սքանչելի ընդունելություններ, հյուրասիրություններ և միատեղ աղոթքներ կազմակերպեցին Մեր այցելության առիթով:

Քիչ առաջ Մեր խոսքի սկիզբին հիշեցինք, թե բաժանումի պահն է ԵՀԽ-են: Այս բաժանումը այնպիսիներեն չէ սակայն, որ անհետևանք պիտի մնա կամ տակավ մոռացության պիտի տրվի: Ընդհակառակը, Մենք հետանալով ԵՀԽ-են և հետզհետե ավելի ժամանակ անցնելով, Մեր մեջ ավելի պիտի պայծառանա կարևորությունը և նշանակությունը: Մեր այս այցելության:

Եվ Մենք անհամբեր ու եղբայրական սիրով պիտի սպասենք փոխադարձ այցելությունը և Էջմիածին ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրին, հառաջիկա հոկտեմբերին: Քանի առիթներով Մենք զգացինք, որ դոկտ. Ֆիլիպ Փոթըր խորունկ քրիստոնեական ապրումներ ունեցող անձնավորություն է: Արդ՝ վստահ ենք, որ այցելելով մեր հնադարյան սրբատեղիները և աղոթելով մեր սուրբ սեղաններու առջև, քրիստոնեական ապրումներու տեսակետեն, նոր, գուցե և անփոխարինելի փորձառություն մը պիտի ունենա Հայաստանի մեջ:

Մենք միշտ ուրախ պիտի ըլլանք և միշտ մեր դռները և սրտերը բաց պիտի պահենք, որ ԵՀԽ-ի ներկայացուցիչներ կամ պատվիրակություններ այցելեն Էջմիածին և Հայաստան:

Նման այցելություններ և գործակցություն, մեր հոգիները կմխիթարեն և մեզ կգործացնեն այնտեղ:

Այս պահուս կփափաքինք ուրախությամբ հայտնի դարձնել բոլորիդ, որ դոկտ. Լուկաս Ֆիշեր, երկու օր առաջ, Մեր մոտ ունկնդրության եկավ խոսելու համար այն մասին, որ ապագային Մայր Աթոռ և Էջմիածինը





ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳ

(Նվեր՝ Հարություն Գալսեղյանի. Լոռու)



Ժընկի մեջ հիմնե հատուկ կեդրոն մը, այն հիմունքներու վրա, ինչպես օրինակ Ծամբեզիկն է, որպես կեդրոն հունաց օրթոդոքս եկեղեցու տիեզերական պատրիարքության:

Պետք է ըսենք, որ այս գաղափարը Մենք տակավին 8—10 տարի առաջ ունեցած ենք և նույնիսկ այդ հարցով թղթակցած լուսահոգի Կարապետ Ղազարյանի հետ: Մենք շատ կցավինք, որ այդ սքանչելի անձնավորությունը այլևս մեր մեջ չէ: Աստված հոգին լուսավորե: Տեղյակ ենք նաև, որ այդպիսի մտածումներ եղած են և կան նաև այստեղ, ձեր համայնքի ծոցին մեջ, որով Մենք դրական պատասխան տվինք դոկտ. Լուկաս Ֆիշերին, հայտնելով մեր որոշումը այդ ծրագիրը իրագործելու մոտ ապագային: Մենք վստահ ենք, թե այս կեդրոնը, որ ս. Էջմիածնի իշխանության ներքև պիտի գտնվի, պիտի գործակցի բնականաբար մեր մյուս նվիրապետական Աթոռներուն հետ: Հատկապես Երուսաղեմի մեր պատրիարքության հետ, որ ինքն ալ միջազգային իմաստով Էկումենիկ կեդրոն է: Պոլսո պատրիարքությունը նույնպես վստահ ենք իր գործակցությունը պիտի բերե:

Եվ Մենք արտանց պիտի փափաքինք, որ եղբայրական գործակցությամբ միանանք այդ կեդրոնին մեջ, նաև Կիլիկյան Աթոռի հետ: Եվ հույս ունինք, որ վերջին փոխհարաբերությունները, որ ստեղծված են Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Անթիլիասի միջև, պիտի հետզհետե զարգանան և իրենց լրումին հասնին վերականգնումովը օրինականության և համերաշխ գործակցության: Իրականության մեջ մեզ ոչինչ չի բաժներ: Կմնա, որ մենք բոլորս ուղիղ և ճիշտ ըմբռնենք, որ Հայաստանյայց եկեղեցին մեկ եկեղեցի է, և մենք մեկ ազգություն ենք, Էջմիածնի գերագույն հեղինակության ներքև, ամեն նվիրապետական Աթոռ իր իշխանության սահմաններով, իր իրավասություններով, այնպես, ինչպես պատմականորեն այդ կացությունը ստեղծված է վերջին հինգ հարյուր տարիներու ընթացքին:

Կեդրոնը, որուն մասին կ'խոսինք, Մենք կ'պատկերացնենք նաև իբրև կեդրոն մը ոչ-քաղկեդոնական քույր եկեղեցիներու: Եվ տակավին այս կեդրոնին հետ, վստահ ենք, որ պիտի կապվին և իրագործվին նաև այլ հոգեվոր-եկեղեցական և գուցե նաև կրթական և մշակութային նպատակներ:

Բնականաբար այս շատ մեծ ծրագիր մըն է, որ կարիք ունի նաև նյութական միջոցներու: Մեզի ըսվեցավ, որ Հունաց տիեզերական պատրիարքության կեդրոնը Ծամբեզիկի մեջ մեկ միլիոն դոլլար արժամ է: Մենք այդ գումարեն չենք վախճար: Նույնիսկ պատրաստ ենք, Մայր Աթոռի խնայողություններեն տրամադրելու հարյուր հազար դոլլար իբրև սկզբնավորում համագաղութային հանգանակության:

Այս նպատակի կենսագործման համար վստահ ենք, թե Մեզի նեցուկ պիտի կանգնի Ժընկի մեր համայնքը, ինչպես նաև այլ կեդրոններ հայ սփյուռքի մեջ:

Ահավասիկ սքանչելի ծրագիր մը, որ ուրվագծվեցավ ավելի հստակ կերպով Մեր այս այցելության առիթով: Կաղոթենք, որ Աստված մեզի օգնական մնա և մեր այս կարևոր ձեռնարկը հաջողությամբ պսակվի:

Իսկ այժմ, սիրելի ներկաներ, Մեր խոսքը քիչ մըն ալ պիտի երկարենք: Կուզենք Մեր շատ անկեղծ գոհունակությունը և գնահատանքը հայտնել այն անձնավորության, որ հիմա Մեր խոսքերը կթարգմանե: Խոսքը Ծահե արքեպիսկոպոս Աճեմյանի մասին է, որ Մեր օրհնությամբ և տ. Եղիշե արքազան պատրիարքի քաջալերումով այս այցելությունը և հանդիսությունները կազմակերպող մղիչ ուժը եղավ մեր եկեղեցիի կողմն: Արդեն քանի



տարիներն ի վեր Էկումենիկ մեր հարաբերություններու մեջ Շաֆե արքեպիսկոպոս փայլուն կերպով իր առաքելությունը կկատարե ի մխիթարություն մեզ բոլորիս:

Պարտինք նաև Մեր գնահատանքի խոսքը ուղղել այն անձնավորության, որ այս վերջին տարիներուն կերտնական դեր կկատարե ժրնկի մեր եկեղեցական համայնքին մեջ և հատկապես Մեր այս այցելության առիթով: Խոսքը կվերաբերի մեծահարգ տիար Մկրտիչ Ծելեֆյանին՝ նախագահը ընդունելության հանձնաժողովին: Մկրտիչ Ծելեֆյանը ճանչցած ենք, զինքը անձնապես ճանչնալե տարիներ առաջ, երբ Պոլստ մեջ աջ բազուկն էր և գլխավոր նեցուկը հանգուցյալ Գարեգին պատրիարքի: Տարիներ շարունակ անփոխարինելի և փրկարար, այո, փրկարար դեր կատարած է դժվարին պայմաններու մեջ այնտեղ, պատրիարքության և հայ համայնքի գործերու բարվոք ընթացքին և ներքին հառաջընթացին ի խնդիր: Այդ շրջանին Գարեգին պատրիարքի հետ ունեցած Մեր թղթակցությունները լեցուն են նամակներով Պատրիարքի ստորագրությամբ, որոնք այդ մասին կխոսին, և գովքը կհյուսեն ու օրհնություն կբաշխեն Մկրտիչ Ծելեֆյանին: Եվ ահավասիկ ժրնկի մեջ կհանդիպինք իրեն և կտեսնենք իր պայծառ դեմքը: Կխորհինք թե բոլորդ կմիանաք Մեզի հետ, որպեսզի գնահատենք իր բազմաթիվ տարիներու ծառայությունը Կ. Պոլստ հայոց պատրիարքության եկեղեցիներուն և համայնքին, ծառայություն, որ կշարունակվի այսօր այստեղ, Զվիցերիո մեջ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ, Մենք նոր շքանշան մը հաստատեցինք հատկապես բազմամյա եկեղեցական փայլուն ծառայությանը համար, որով նախատեսած ենք բացառիկ անձնավորություններ պարգևատրել: Այս շքանշանը կկոչվի «Ս. Ներսես Ծնորհալի» շքանշան: Առաջին նման շքանշան պրն. Ծելեֆյանին կշնորհենք:

Հարգելի պրն. Ծելեֆյան, Մեր աղոթքը և օրհնությունը Ձեզի, Ձեր կյանքին, Ձեր ազնիվ տիկնոջ, Ձեր զավակներուն, և մաղթանք, որ այս շքանշանը Ձեր ազնիվ սրտին վրա կրեք երկար տարիներ և զորանաք ս. Էջմիածնի օրհնությամբ, որպեսզի Ձեր սկսած եկեղեցաշեն և եկեղեցանվեր առաքելությունը կարողանաք շարունակել մինչև խոր, շատ խոր ձերություն:

Մենք պարտինք նաև գնահատել ժրնկի մեր հոգևոր հովիվի գործունեությունը, որ նոր ստացած է ծայրագունության աստիճան: Կուզենք իր կուրծքեն կախել այս լանջախաչը:

Կփափաքինք հայտնել նաև Մեր խոր գնահատանքը Զվիցերահայ միության, եկեղեցական խորհուրդին և ժրնկի հայոց բոլոր կազմակերպություններուն և ներկայացուցիչներուն, որոնք այսպիսի սքանչելի ընդունելություն կազմակերպեցին: Հատկապես ուրախ ենք, որ կարողացանք անգամ մը ևս ողջունել շատ հարգելի տիար Ծառլ Փիլիպոսյանը, որ հակառակ իր առողջական ոչ այնքան ամուր վիճակին, այսօր հոգևությունը հանձն առավ և եկավ այստեղ:

Եվ վերջապես ինչպե՞ս կարելի է մոռնալ պրն. Հակոբ Թոփալյանը, ժրնկի ս. Հակոբ եկեղեցվո գլխավոր նվիրատուն: Մեր օրհնությունը Ձեզի, պրն. Թոփալյան: Կմաղթենք, որ Մեր հառաջիկա այցելություններուն ևս միշտ Ձեզ տեսնենք այսպես երիտասարդ ու կայտառ:

Մեր ջերմ գոհունակությունը և շնորհակալությունը նաև Սուփետական Միության ներկայացուցչության հարգարժան ղեկավարներուն, որոնք պատվեցին Մեզ և մեր պատվիրակությունը ժրնկ Մեր այցելության առթիվ:



Ծնորհակալություն, շնորհակալություն բոլորիդ: Մեր հայրական սերն ու օրհնությունը բոլորիդ:

Կեցցե՛ Հայաստանայց մեր սուրբ եկեղեցին, կեցցե՛ հայ ժողովուրդը այժմ և հավիտյան: Ամեն:

Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը «Ս. Ներսես Ծնորհալի» նորահաստատ շքանշանով զարդարեց կուրծքը պր. Մկրտիչ Ծելեֆյանի՝ բարձր գնահատելով նրա բազմամյա եկեղեցանկեր գործունեությունը թե՛ Ստամբուլում և թե՛ վերջին տարիներին՝ Ժընևում:

Այս առթիվ Հայոց Հայրապետը Իր մասնավոր գնահատանքին արժանացրեց նաև տ. Ծահե արքեպիսկոպոս Աճեմյանի աշխատանքը, այն իմաստով, որ սիրելի արքագանը, որպես հայ եկեղեցու կողմից ներկայացուցիչ և ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի անդամ, կարևոր դեր էր կատարել Հայոց Հայրապետի Ժընև այցելության կազմակերպման աշխատանքներում: Ի նշան Իր հայրապետական գոհունակության, Վեհափառ Հայրապետը տ. Ծահե արքագանին նվիրեց գեղարվեստական հայկական ոճով պատրաստված գեղեցիկ մի ափսե:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը վարդապետական մի լաճջախաչ նվիրեց նաև Ժընևի հայոց հոգևոր հովիվ տ. Վազգեն ծայրագույն վարդապետ Թադոյանին:

#### ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ԺԸՆԵՎԻ ՀԱՅՈՑ Ա: ՀԱԿՈՒ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հունիսի 25, կիրակի:

Այսօր Ժընևի հայոց ա. Հակոբ եկեղեցում Հայոց Հայրապետը, առավոտյան ժամը 10.30-ին, մատուցեց սուրբ պատարագ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեց հավատացյալ ժողովրդին:

Վաղ առավոտվանից եկեղեցին լցվել էր Ժնևից, Բեռնից, Ցյուրիխից, Լոզանից, Ֆրանսիայից, Իտալիայից, Անգլիայից, Վիեննայից, Արևմտյան Գերմանիայից և Թուրքիայից ժամանած բազմաթիվ հայերով, որոնք եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին, ստանալու Նրա օրհնությունը և ներկա լինելու հայրապետական սուրբ պատարագին և քարոզին՝ հոգեպես մխիթարվելու համար:

Հայրապետական սուրբ պատարագին ներկա էին նաև ԵՀԽ-ի ղեկավար անձնակազմի անդամները, Ժընևի օրթոդոքս եկեղեցու, կաթոլիկ և բողոքական եկեղեցիների բարձրաստիճան հոգևոր ներկայացուցիչներ, ինչպես նաև պետական պաշտոնական անձնավորություններ:

Հայրապետական պատարագին ներկա էին նույնպես Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքը, տ. Սերովբե, տ. Թորգոմ, տ. Վաչե, տ. Ծահե, տ. Արսեն արքագանները, վարդապետներ, քահանայից և սարկավագաց դասը, ինչպես նաև ա. Հակոբ եկեղեցու խորհրդի, Ծվեցարիայի հայոց միության, ա. Գրիգոր Լուսավորիչ հիմնարկության, Ծվեցարահայ երիտասարդաց միության և եկեղեցու տիկնանց օժանդակ հանձնախմբի անդամները:

Ցյուրիխի հայ համայնքի անդամները մասնավոր մեքենաներով ժամանել էին Ժընև՝ ներկա լինելու ա. պատարագին:

Հավատացյալների բազմությունն այնքան շատ էր, որ մեծ թվով հավատացյալներ սուրբ պատարագին ներկա եղան եկեղեցու առաջ պատ-



րաստված մի մեծ վրանի տակ՝ հեռուստատեսությամբ հետևելով պատարագի արարողությանը և հայրապետական քարոզին:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը խոսեց հրաժեշտի հետևյալ ոգեշունչ քարոզը.

**ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԺԸՆԵՎԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈՐ  
ԵԿԵՂԵՑՈՒՄ**

(25 հունիսի, կիրակի, 1978 թ.)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:

«Փառք քեզ, Աստուած, փառք քեզ յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Այս աղոթքով կուգեինք սկսիլ Մեր խոսքը այսօր, որովհետև պետք է փառք տալ բարին Աստուծոյն, որ Մեզի շնորհեց պատեհություններ այցելելու մեր եկեղեցիները և մեր ժողովուրդը ի Լոնդոն և ի Ժընև և Աստուծո օրհնությունը բերելու ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածինէն և ողջոյն սրտագին՝ մեր վերածնած Մայր Հայրենիքէն, ձեր հավատացյալ եղբայրներէն և քույրերէն:

Նաև կուգեինք աղոթքի խոսք արտասանել նվիրված այս փոքրիկ, բայց սքանչելի երկրին՝ Զվիցերիային, որ դարերէ ի վեր, մանավանդ մեր դարուն եղավ ու մնաց դրոշակակիրը քրիստոնէական հավատքէն բխող մեծ գաղափարներու՝ խաղաղության, մարդասիրտության, արդարության և ազատության, միջազգային հորիզոնի վրա հանդիսանալով տեսակ մը համերաշխության. կամուրջ ժողովուրդներու միջև: Մենք մեր օրհնությունը կրերենք այս երկրին, այս ժողովուրդին և իր պետական բարձր կառավարիչներուն:

Մեր աղոթքը և Մեր օրհնությունը կրերենք ի մասնավորի Ժընևի և Զվիցերիո Մեր հավատացյալ զավակներուն, այս փոքրիկ բայց գեղեցիկ եկեղեցիին, որ կմարմնավորէ այս քաղաքակրթյալ երկրի սրտին վրա՝ վեմը հայկական քրիստոնէական հավատքի, ներկայացված հայկական դասական ճարտարապետության ոճով, ինչ որ պատիվ կրէր Ժընևի հայության, պատիվ կրէր այս եկեղեցին շինողներուն (գլխավոր բարերարը այստեղ է՝ տիար Հակոբ Թոփալյան) և բոլոր այն ազնիվ և քրիստոնյա հոգիներուն, որոնք այս գեղեցիկ տեսքը տվին այս սուրբ տաճարին: Բոլորին Մեր բարի մաղթանքները, Մեր անկեղծ գնահատանքը և Մեր օրհնությունը:

Այստեղ կրկին կուգեինք ողջունել ներկայությունը Մեր սիրեցյալ եղբայրներուն, որոնց գլուխը կգտնվի Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը, մաղթելով, որ նաև հետ այսու Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածինը, մեր նվիրապետական բոլոր Աթոռները իրենց գահակալներով և ներկայացուցիչներով, ձեռք-ձեռքի տված, միշտ միասին ըլլան և քայլ առ քայլ ավելի ամրացնեն, զորացնեն մեր սուրբ եկեղեցին ի Հայաստան և ի սիւրուս աշխարհի, որովհետև ամեն բանէ վեր, հայ ազգի գոյատևման ամենագորավոր վեմը, ամենամեծ գրավականը Հայաստանյայց առաքելական եկեղեցվո հաստատությունն է, անոր ծաղկումը և անոր բարգավաճումը, անոր գործունէության տարածումը ամեն տեղ, ուր հայեր կապրին: Հայոց Մայր եկեղեցին հայ ժողովուրդի բոլոր զավակները անխտիր միացնող աստվածապարզ և հաստատությունն է: Ոչ մեկ հայ դուրս չի կրնար մնալ Հայաստանյայց եկեղեցիէն: Հայաստանյայց





ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

(Գործ՝ նկարիչ Չաքարյանի. նվեր՝ Հայկ Աղաբեկյանի. Փարիզ)



եկեղեցին կպատկանի համայն հայության, իբրև հայ ազգի պատմական Մայր եկեղեցին:

Մեր սուրբ եկեղեցին խարսխված է ամուր հիմքերու վրա տակավին հնագույն ժամանակներե սկսյալ, նախ՝ սուրբ Թադեոս և ս. Բարթուղիմեոս առաքյալներու քարոզությամբ, հետո՝ բազում վկաներու և մարտիրոսներու արյամբ, որոնք իրենց մարմինը զոհեցին մեր սուրբ եկեղեցվո փառքին համար, մինչև քրիստոնեության մուտքը Հայաստան: Վերջինները եղան, ինչպես գիտեք, Հովհաննիսյանց և Գայանյանց կույսերը, ապա ինքը՝ սուրբ Գրիգոր Լուսավորիչ իր չարչարանքներով և հրաշքի համազոր իր հաղթանակով, որով քրիստոնեությունը հռչակվեցավ ազգային և պետական կրոն Հայաստան աշխարհի մեջ, Տրդատ թագավորի դարձով և մկրտությամբը համայն մեր ժողովուրդի:

Երկրորդ ամուր հիմքը մեր եկեղեցվո՝ հայ տառերու գյուտն է, հայ լեզվի զարգացումը և հայ գրականության սկզբնավորությունը սուրբ Գրքի թարգմանությամբ, գործեր՝ որոնք կատարվեցան հինգերորդ դարու սկզբին սուրբ Մեսրոպի, սուրբ Սահակի և անոնց աշակերտներուն՝ ոսկեարյան մեր թարգմանիչներուն միջոցով:

Եվ վերջապես երրորդ հիմնաքարը մեր սուրբ եկեղեցվո՝ Վարդանանց հերոսամարտն է, մեծագույն վկայություններեն մեկը համաշխարհային մակարդակի վրա, մեծագույն դյուցազներգություններեն մեկը՝ վասն Հիսուսի, վասն հայրենյաց և վասն խղճի ազատության:

Ամեն անգամ, երբ Մենք կգտնվինք այս կողմերը, հատկապես Ֆրանսա, միշտ Մեր գիտակցության առջև կպայծառանա պատմական մեծ հիշատակ մը: Զարմանալի զուգահեյությունք, ճիշտ այն օրերուն, այսինքն 451 թվականին, երբ Ավարայրի դաշտին վրա, Տղմուտ գետի ափին, Վարդանը Կարմիր, իր զորավարները և իր քաջերը անհավասար կռիվ կմղեին խավարի և անհավատության ուժերու դեմ, ճիշտ նույն օրերուն գրեթե, այսօրվա Ֆրանսայի հողամասին վրա, Տրուա քաղաքեն ոչ շատ հեռու, այսպես կոչված Կատալաունյան դաշտերու տարածքին վրա տեղի կունենար նույնպես մեծ ճակատամարտ մը, քաղաքակրթությունը և քրիստոնեությունը պաշտպանող բանակի և Ատտիլայի հորդաներու միջև: Քրիստոնեյա բանակի ղեկավարն էր հռոմայեցի Էտիոս զորավարը, Թեոդորիկ թագավորի օրոք: Այդտեղ Ատտիլան ջախջախվեցավ, և այդ պահեն սկսավ անոր նահանջը և վախճանը: Որովհետև, ինչպես գիտեք, ահավոր փոթորիկի մը նման Ատտիլա դեպի Եվրոպա խուժած էր և ամեն բան քարուքանդ ընելով իր առջև՝ կհառաջանար դեպի Արևմուտք:

Ահավասիկ սքանչելի և խորհրդավոր պատմական զուգահեյություն մը:

Նույն տարին (451 թվականին), և հավանաբար նույն մայիս ամսուն, թե՛ Արևելքի դռներուն մոտ, և թե՛ այստեղ, Արևմուտքի սրտին վրա, ճակատամարտ կմղվեր, նույն նպատակով և նույն արդյունքով՝ հաղթանակին համար Քրիստոսի Ավետարանին և քաղաքակրթության մեծ գաղափարներուն:

Պողոս առաքյալի Թուղթի ընթերցման ժամանակ լսեցինք Պողոս առաքյալի սքանչելի միտքերեն մեկը. «Եթե արմատները սուրբ են, ապա և՛ ամբողջ զանգվածը»: Պատկերավոր խոսք մըն է ասիկա: Պողոս առաքյալ բուսաբանական պատկերով մը կուզե մեզի ներկայացնել այն գաղափարը, որ եթե մարդկային կյանքի մեջ հետապնդված նպատակներու հիմքը սուրբ է, հաստատ և ամուր է, ապա և անոր ճյուղերը, ուտերը և ամբողջ զանգ-



վածը կդիմանան և չեն վախճար արհավիրքներն: Կխորհինք թե մեր ժողովուրդի պարագան նույնպես այդ է: Առաջինը այն արմատներն որոնց վրա հաստատված է մեր ժողովուրդի տևականությունը, այդ մեր քրիստոնեական հավատքն է և մեր Մայր եկեղեցին, երկրորդը՝ մեր ազգին մշակույթը, որ ծնունդ առավ ու զարգացավ սուրբ Սահակի և սուրբ Մեսրոպի արարչական գործով, իսկ երրորդը՝ հայ ժողովուրդի պայքարելու, տոկալու կամքն է, նույնիսկ ի գին մարմնո գոհաբերումով, հանուն հայրենիքի ազատության: Ահա այս երեքը մանավանդ կրճանք մկատել այն սուրբ, գորավոր և անխորտակելի արմատները, որոնց վրա կանգնած է հայ ժողովուրդը ավելի քան 1600 տարիներն ի վեր: Այդ արմատներով է որ այսօր ալ մենք պիտի կրճանք և՛ հպարտանալ, և՛ աշխարհին ծանոթացնել զմեզ, և՛ զնահատվիլ աշխարհեն և մանավանդ ապահովել մեր գոյությունը աշխարհի վրա ամեն տեղ, թե՛ Հայաստանի մեջ և թե՛ ի սփյուռս աշխարհի:

Եվ ինչքան մխիթարական է մեզի համար հաստատել, որ սփյուռքի ամբողջ տարածքի վրա մեր ժողովուրդի զավակները քաջ կհասկանան այս ճշմարտությունը:

Այս բոլորեն կհետևի, թե ինչ պետք է ըլլա մեր ընելիքը նաև հետապնու: Պարտինք շարունակել այս ոգիով ու այս հավատքով աշխատիլ, առավել և առավել կազմակերպյալ, համաժողովրդական տեսք տալով սփյուռքի մեր բոլոր համայնքներուն, որպեսզի մեր ամբողջ ժողովուրդը համախմբվի մեր Մայր եկեղեցիին շուրջ, պահե-պահպանե իր սուրբ հավատքը, իր մայրենի լեզուն, իր մշակույթի արժեքները և իր հայրենաբաղձ զգացումները:

Այս պատգամով Մենք կվերջացնենք Մեր խոսքը, սիրելիներ, և անգամ մը ևս ձեզի կբաշխենք օրհնությունը Աստուծո, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ: Ամէն»:

Հայրապետական սուրբ պատարագի ավարտին հավատացյալների խոուներամ բազմությունը բարեպաշտ երկյուղածությամբ սուրբ հաղորդություն ստացավ Հայոց Հայրապետի ձեռքից:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵԾ ԾԱԹԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ,  
ՆՐԱ՝ ԺԸՆԵՎԻՑ ՄԵԿՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Նույն օրը, ժամը 14-ին, Ժընևի հայոց եկեղեցական վարչությունը, Ծվեյցարիայի հայոց միությունը և հայրապետական ընդունելության հանձնաժողովը «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցում կազմակերպել էին մեծ ճաշկերույթ՝ ի պատիվ Հայոց Հայրապետի: Ընդունելությանը ներկա էին ավելի քան հինգ հարյուր հրավիրյալներ: Օտար հյուրերի թվում էին ԵՂԻՍ-ի ղեկավար անձնակազմի անդամները, Ժընևում սովետական մնայուն ներկայացուցչության ղեկավարները, քույր եկեղեցիների հոգևոր ներկայացուցիչներ և պետական պատասխանատու անձնավորություններ:

Հրաժեշտի սույն ընդունելությանը ներկա էին նաև Ժընևից՝ տիար Ծարլ Փիլիպոսյանը՝ Զվիցերահայ միության վաստակաշատ նախագահը, Փարիզից՝ Մայր Աթոռի բարերար տիար Նուրհան Ֆրենկլյանը, Լոնդոնից՝ Մայր Աթոռի բարերարներ տիարք Սարգիս Բյուրքճյանը, Հարություն Գալսյանյանը և Թորոս Պարսամյանը, Միլանից՝ Ժընևի հայոց ս. Հակոբ եկեղեցու



շինության բարերար Հակոբ Թովալյանը, տեր և տիկին Մարի և Զավեն Մանտիկյանները, տիար Հրանտ Բամպակյանը և տիար Օննիկ Մանուկյանը, Վիեննայից՝ Մայր Աթոռի բարերար տիար Սարգիս Կարապետյանը:

Հրաժեշտի սույն սեղանը ղեկավարում էր շվեյցարահայ համայնքի ծանոթ ազգայիններից և հայրապետական ընդունելության հանձնաժողովի նախագահ Մկրտիչ Ծելեֆյանը:

Ընդունելության սկզբին ողջույնի խանդավառ խոսքով հանդես եկավ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերոբյեն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Այնուհետև Իսի-լե-Մուլիանյի, Կլամառի և շրջակայքի նախկին հայ մարտիկների ընկերակցության անունից ընկերակցության քարտուղար Ժերար Կիրակոսյանի ողջույնի հետևյալ ուղերձն ընթերցեց Մկրտիչ Ծելեֆյանը.

«Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք ներկայացնել Ձեզ մեր հարգանքի և որդիական սիրո ամենաջերմ գագսումները Ծվեյցարիա Ձեր այցելության առիթով:

Ձեր ներկայությունը Եվրոպայի այս մասում ամենախոսուն վկայությունն է այն բանի, որ մեր եկեղեցին, որի ղեկավարությունը վստահված է Ձեզ, կենդանի է և շարունակում է իր անսպառ ակունքներից հոգևոր մխիթարություն տալ իր զավակներին:

Մենք խորապես շնորհակալ ենք Ձեզ այն մեծ ուրախության համար, որ մեզ պատճառեցիք մեր մեջ Ձեր ներկայությամբ:

Հայ ժողովուրդը իր պատմության դաժան օրերից մինչև այսօր անաղարտ է պահել իր հավատը Աստուծո նկատմամբ, անաղարտ է պահել նաև նրա հավիտենականության նկատմամբ իր հույսը, որ նա փոխանցել է իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Թույլ տվեք այս առթիվ հավաստիացնել Ձեզ առաքելական մեր Մայր եկեղեցու հանդեպ մեր խորին հարգանքի և հավատարմության մասին, եկեղեցի, որով միայն կարող ենք ապագա սերունդներին ջամբել տոհմային մի դաստիարակություն՝ շաղախված լուսավորչյան մշակույթի գեղեցիկ ավանդություններով:

Խնդրում ենք, Ձերդ Սրբություն, ընդունել մեր հարգալից գագսմունքների հավաստիքը»:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին ուղղյալ հետևյալ գեղեցիկ ուղերձով հանդես եկավ տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԶ ՀՈՐ ԽՈՍՔԸ  
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Վեհափառ Տեր,

Գերաշնորհ և հոգեշնորհ եղբայրներ և հարգելի ներկաներ,

Եկեղեցվո պետի մը համար չկա ավելի քաղցր և թանկագին պատեհություն, երբ անկա կշրջապատվի իր հարազատներով, երբ հովիվն ու հոտը քով-քովի կուգան իրարու խառնելու իրենց գագսումները, իրենց սիրտը, իրենց միտքը, մեկ խոսքով՝ կատեղծեն սրտերու խորհուրդը: Անձի մը ներկայության, զինքը դրվատել, զինքը գովել բավական դժվար է, բայց երբ այդ անձնավորությունը եկեղեցվո մը պետն է, երբ այդ անձնավորու-



թյունը հայ ժողովուրդը ներկայացնող խորհրդանիշն է, այդ պարագային ինչ որ կըսվի իր մասին, կըսվի հայ եկեղեցվո, հայ ժողովուրդի մասին: Անոնք որ կճանչանան Նորին Սուրբ Օծնությունը իր զգացումներու անկեղծության մեջ, և մեր եկեղեցին ու ժողովուրդը՝ իր կարիքներու խորության մեջ, կզգան թե այս վերջին 23 տարիներու ընթացքին ինչպիսի նախասխմական բարիք մըն էր, որ կկատարվեր մեր եկեղեցական և ազգային կյանքին մեջ, ընտրությամբը Նորին Սուրբ Օծնության:

Ասիկա զգացում չէ, այլ սկզբունք մը: Այդ սկզբունքը այն է, թե համակրելու գերակշռության մեջ պետք են մարդիկ, որոնք օծոված ըլլան հոգիով, որոնք լեցված ըլլան նաև ներշնչումով, որպեսզի կարողանան իրենց ժողովուրդին ճակատագիրը կարգալ անկեզ մորենիներու վրա և զանոնք տանիլ իրենց փառքին, մեր ժողովուրդի մեծ անձնավորություններուն: Այդ անձնավորություններեն յուրաքանչյուրին վրա, այդ ժամանակներեն յուրաքանչյուրին վրա կապառնի դեմքն ու անունը հոգիի մարդոց, մեծ մարդոց:

Ես ուրախ եմ հոս հայտարարելու, թե այդ մեծութենեն, այդ հոգեկան ուժեն խոշոր փաթիլ մը կա մեր սիրելի կաթողիկոսին մեջ: Առանց այդ հոգիին, Աստուծո հոգիին, առանց ամեն օր մարդու մեջ ապրող այդ տեսիլքին, մարդերը պատրանքի զոհեր են, անոնց խոսքերը բարբաջանք են, անոնց սիրտը մաշկ մըն է միայն, անոնց մարմինը խորձ մը այրած ածուխ է, իսկ անոնց գործերը՝ անիմաստ տեսարաններ միայն: Նորին Սուրբ Օծնությունը նման է մեր եռամեծ հայրապետներուն: Իրեն համար հայոց հայրենիքը և հայ ժողովուրդը անշամանդաղ ճշմարտություններ, անշամանդաղ գեղեցկություններ են, իսկ հայ եկեղեցին՝ աննահանջ դրոշմ, Լուսավորչի կանթեղը, եթե կուզեք, որ կրոնավորե ոչ միայն մեր անցած սխրագործությունները, այլ նաև ապագա վաղորդայնները: Նորին Սուրբ Օծնությունը այդ մտատեսիլ ձգտումին, այդ մտատեսիլ փույթին մեջն է, որ տարած է իր ժողովուրդը և կտանի մանավանդ իր հոտը դեպի հոն, ուր Աստված որոշած է, որ մենք երթանք:

Ամեն տարի, երբեմն քանի մը անգամ, հայրապետական գավազանը ձեռքը առած կշրջի գաղութե-գաղութ, աշխարհե-աշխարհ, հայոց հայրենիքի և հայ եկեղեցվո ոսկե գետը հոսեցնելով մշուշներու մեջ ապրող իր պանդուխտ ժողովուրդի հոգիներեն ներս: Կշրջի գաղութե-գաղութ, երկրե-երկիր, ըլլալու համար ոսկի կամուրջը, ըլլալու համար ծիածանը արտատեսմանի և հայ ժողովուրդի միջև:

Ճակատագիրը մեզ ցրված է, իբրև քամիին տրված պարկ մը այլուր, արտատեսմանի բոլոր երկիրներուն մեջ: Սակայն մի՛ մոռնաք, սիրելի բարեկամներ, թե այդ մաքուր այլուրեն շինված է հայ ժողովուրդը ներկայացնող, հայ ժողովուրդի հոգին ներկայացնող սրբազան հացը: Գաղութը կտոր մըն է այդ հացեն, և Նորին Սուրբ Օծնությունը եթե կշրջի գաղութե-գաղութ, կուզե այդ բոլոր կտորները քով-քովի բերել, որպեսզի չըլլա թե անոնցմե կտոր մը կորավի, զանոնք քով-քովի բերել, կազմելու համար ամբողջական հայությունը, ամբողջակալ հայ հոգին:

Նորին Սուրբ Օծնությունը հիսուն և ավելի տարիներն ի վեր փոշիներեն և ավերակներեն վերագարթնած նորափետուր մեր հայրենիքի կողքին զարդարեց և գեղեցկացուց ս. Էջմիածինը: Եվ տակավին մինչև երեկ սգավոր մայրերը այսօր սիրով և քաղցրությամբ իրարու կնային՝ թոթափած դարերու փոշին և մխած սրբազան դանակը վշտի, բռնության կոկորդը:



Դուք բոլորդ տեսաք Նորին Սուրբ Օծության հմայքը այս շաբթվան ընթացքին: Նորին Սուրբ Օծությունը եկած է ոչ միայն մեզի, այլ նաև օտարներուն ըսելու, թե մենք աղքատ Ղազարոսներ չենք ուրիշներու պատին ներքև ծվարած, թե մենք անցյալ ունինք, թե մենք մշակույթ ունինք, թե մենք մարդ ենք: Եկած է օտարներուն ըսելու, թե քրիստոնեական գանձանակին առջևեն, դարերե ի վեր, շատ ժողովուրդներ անցան, և յուրաքանչյուրը հոն դրավ, մեկը իր իմաստասիրությունը, մյուսը՝ իր հարստությունը և ուշիմ միտքը, իսկ հայ ժողովուրդը անցավ այդ գանձանակին առջևեն և հոն դրավ իր ամեն ինչը:



Հայոց Հայրապետը Իր խոսքն է ասում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի մատուան մեջ. կողքին՝ տ. Ծաֆե արքեպիսկոպոսը

Նորին Սուրբ Օծությունը եկավ նաև մեզի ըսելու, եկավ նաև օտարներուն ըսելու, թե, ի պարծանս մեզի, մենք՝ հայերս, իբրև ժողովուրդ, գիտցած ենք պատմության պատկերասրահին մեջ մեր պատկերը կախել:

Այսօր շատ մը ժողովուրդներ, երբեմնի կայսրություններ, իրենց հարըստությամբ և թիվով մեզի քսան անգամ գերազանցող ժողովուրդներ, չունին իրենց պատկերը, բայց հայ ժողովուրդը ունի իր պատկերը պատմության պատկերասրահին մեջ:

Նորին Սուրբ Օծությունը եկած է նաև ըսելու մեզի՝ հայերուս, թե հայ եկեղեցին մեկ ուրիշ երեսն է հայ ժողովուրդին:

Հայ եկեղեցվո երեսը և հայ ժողովուրդի երեսը կկազմեն նույն դեմքը և նույն իրականությունը: Եկած է ըսելու ձեզի, զավակներ հայ եկեղեցվո, որ միշտ պայծառ և ճերմակ պահեք հայ եկեղեցվո և հայ ժողովուրդի երեսը:



Հանուն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, «Հավատո և կարգի հանձնաժողով»-ի նախագահ դոկտ. Լուկաս Ֆիշերը հանդես եկավ Հայոց Հայրապետին ուղղված հետևյալ խոսքով.

#### ԴՈՎՏ. ԼՈՒԿԱՍ ՖԻՇԵՐԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Այս շաբաթվա ընթացքում մենք Ձեզ հետ հանդիպեցինք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կյանքի շրջանակում: Իսկ այսօր ինձ համար առանձնապես հաճելի է Ձեզ ողջունել ձեր հարազատ համայնքի ծոցում:

Անմիջապես խոստովանեմ, որ ես հայերեն չգիտեմ: Սակայն քիչ առաջ այստեղ արտահայտված զգացմունքների ջերմությունից այն տպավորությունն ունեմ, որ ինչ-որ բան հասկացա: Համենայն դեպս Դուք իմ մեջ ցանկություն առաջացրիք հայերեն սովորելու:

Ձերդ Սրբություն, Ձեր ներկայությունն այսօր զուգադիպում է որոշ չափով բացառիկ մի իրադարձության. ամբողջ Ժրճնը տոնական տրամադրության մեջ է: Այսօր այս քաղաքում անցկացվում է մեր Դաշնակցային հանրապետության մարմնամարզիկների ստուգատեսը, այսօր միաժամանակ տեղի է ունենում ֆուտբոլի համաշխարհային մրցույթի եզրափակիչ հանդիպումը: Սակայն ո՛չ մարմնամարզիկների ստուգատեսը, ո՛չ էլ ֆուտբոլի եզրափակիչ մրցույթը արգելք չկարողացան հանդիսանալ այս հայկական տոնախմբությանը: Դա, անտարակույս, ապացույցն է Ձեր վայելած լայն ժողովրդականության:

Ձեր այցելությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոն, անկասկած, առիթ հանդիսացավ նոր կապերի հաստատմանը հայ առաքելական եկեղեցու և Էկումենիկ շարժման միջև, որի ամենացայտուն արտահայտությունն է միջեկեղեցական մեր կազմակերպությունը:

Մեզ համար բացառիկ մի իրողություն է կարողանալ կանոնավոր կերպով հարաբերությունների մեջ լինել եկեղեցիների պետերի հետ: Բայց, վերջին հաշվով, Էկումենիկ շարժման համար կարևորը հենց եկեղեցական համայնքների մասնակցությունն է այդ շարժմանը: Ահա այս պատճառով է, որ ես անչափ ուրախ եմ հանդիպելու այսօր ոչ միայն Ձերդ Սրբությանը, այլ նաև ձեր համայնքին: Մենք հույս ունենք, որ կկարողանանք միասին իրականացնել բոլոր քրիստոնյաների միությունը: Քիչ առաջ խոսվեց հայ ժողովրդի մասնավոր կոչման մասին: Ես վստահ եմ, որ Էկումենիկ շարժման ծոցում նույնպես կա մասնավոր մի կոչում հայ ժողովրդի համար:

Համաշխարհային մեծ կազմակերպությունները կարող են չունենալ սեփական անուն: Եվ կարծես թե դա բնական է: Սակայն անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր համայնք ձգտի հաստատել իր սեփական դիմագիծը, իր ինքնությունը, իր սեփական ժառանգությունը և այն դեմ բոլորի տրամադրության տակ: Մեզ համար հայ եկեղեցու ներկայությունը Եկեղեցիների համաշխարհային խորհրդում հարատև մի կոչ է այն մասին, որ մեր արդի ժամանակների անանուն զանգվածների և խմբավորումների մեջ հարկավոր է պահպանել սեփական ինքնությունը: Եվ ինձ թվում է, թե ինչ որ ասվեց այսօր և այս ամբողջ շաբաթվա ընթացքում ինքնությունը պահելու անհրաժեշտության մասին, վերաբերում է այսօրվա աշխարհում հավասարապես բոլոր նրանց, ովքեր հալածված են, ովքեր տառապում են և կանգնած են իրենց ինքնությունը կորցնելու վտանգի առաջ: Ողջունելով Ձեզ այսօր՝



իրականում ես իմ սրտին մոտ եմ համարում դատը ոչ միայն հայ փոքրամասնության, այլև աշխարհի բոլոր փոքրամասնությունների:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնի մատուան խորանի վրա դրված է հայկական մի խաչ: Այդ խաչն այնտեղ է գտնվում 60-ական թվականներից ի վեր, այն օրվանից, երբ Նորին Սրբությունը առաջին անգամ այցելեց մեր կենտրոն: Ես հրավիրում եմ ձեզ բոլորիդ, որ մի անգամ գաք մեր կենտրոնի մատուռը և ինքներդ դիտեք այդ խաչը:

Ձերդ Սրբություն, ես կցանկանայի Ձեզ ասել, որ այն էկումենիկ շարժման կոչն է, որ մենք բոլորս միասնաբար կրենք այդ խաչը և ոչ թե առանձնապես՝ մեկս մյուսի նկատմամբ:

Հրաժեշտի սույն ընդունելության ժամանակ ելույթ ունեցավ նաև Երուսաղեմի սրբոց Հակոբյանց պատրիարքության դիվանապետ, Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի վերատեսուչ և ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի անդամ տ. Ծախե արքեպիսկոպոս Աճեմյանը, որը ֆրանսերեն լեզվով արտասանած իր խոսքի մեջ ասաց.

### S. ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հայր,

Սիրեցյալ արքեպիսկոպոս և եպիսկոպոս եղբայրներ և քահանա հայրեր,

Սիրելի եղբայրներ և քույրեր,

Բոլոր հայ մարդկանց սրտերում, ազգային դրոշակի նման, ծածանվում է և սկզբից ի վեր միշտ ծածանվել է մի խորհրդանշան: Դա Արարատի պատկերն է: Եվ Արարատը միշտ ունեցել է երկու գագաթ՝ Մեծ և Փոքր Մասիսները: Այսօր այդ պատկերը, դժբախտաբար ավելի ցայտուն կերպով քան անցյալում, խորհրդանշում է հայկական կյանքը, այն կյանքը, որը զարգանում է Արարատյան պատմական հողի վրա և այն մյուս կյանքը, որը մենք կոչում ենք հայկական սիյուռք:

Բայց երբ դուք կանգնեք Օշական գյուղին մոտ, որտեղ գտնվում է սուրբ Մեարոպի շիրիմը, և այնտեղից դիտեք Արարատը, դուք կտեսնեք մի երրորդ գագաթ ևս, որ երկինք է խոյանում երկու Մասիսների միջև: Դա Էջմիածնի Մայր տաճարի սրածայր կաթողիկեն է, որը միացնում է հայ ժողովրդի երկու հատվածներին. նրանց, որոնք բախտավորությունն ունեն ապրելու մայր հայրենիքում, իրենց ազգային հողի վրա, և մյուսներին, որոնք ցրված են աշխարհով մեկ:

Երեկ Նորին Սրբության պատգամը՝ ուղղված բոլոր հայերին, իրոք որ միության մի պատգամ էր մեր ժողովրդի այդ երկու հատվածների միջև, միության պատգամ՝ հայկական ազգային կյանքի բոլոր մակարդակների վրա. եկեղեցական մակարդակի վրա, հայկական կազմակերպությունների մակարդակի վրա, մեր ազգային միության և վաղվա կյանքի տեսիլքի ամենաբարձր մակարդակի վրա: Միության իր այդ պատգամից հետո Նորին Սրբությունը ցանկացավ մի երկրորդ կամուրջ հաստատել մեր եկեղեցու և սիյուռքի միջև: Նա կոչ արեց բոլոր հայերին՝ հայ եկեղեցու էկումենիկ մի կենտրոն հիմնադրելու այստեղ, Ժընևում, որպեսզի, սուրբ Էջմիածնի հեղինակության ներքո և Մայր Աթոռի օրհնությամբ, այդ կենտրոնը դառնա



մի կամորջ ոչ միայն մեր ժողովրդի և եկեղեցու տարբեր հատվածների միջև, այլ նաև հայ եկեղեցու և այն բոլոր եկեղեցիների միջև, որոնք միացած են մեզ հավատքով և հաղորդությամբ: Եվ Նորին Սրբությունը այդ կոչն արեց՝ հայտնելով, որ Մայր Աթոռը իր նյութական սուղ միջոցներից տրամադրում է 100.000 դոլլար այդ ծրագրի իրականացման համար, մի ծրագիր, որի իրագործումը, ամենայն հավանականությամբ, կպահանջի ավելի քան մեկ միլիոն դոլլար:

Ես լիովին համոզված եմ, որ Նորին Սրբությունը այստեղից կմեկնի ուրախ սրտով և այն մխիթարությամբ, որ կարողացավ հաստատել այդ կամորջը, որը կոչված է ամուր կերպով միացնելու Մայր Աթոռ ու Էջմիածինը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ և դառնալու կենդանի մի կենտրոն ինչպես հայկական կազմակերպությունների, այնպես էլ արեվելյան և արևմտյան օրթոդոքս եկեղեցիների հանդիպումների համար, եկեղեցիներ, որոնք ցանկանում են միմյանց հետ համագործակցել և իրենց նպաստը բերել միության և ծառայության գործին, որպեսզի քրիստոնեական պատգամը հնչի ամբողջ աշխարհում թե՛ «խաչակիր» հայերի, ինչպես անվանեցին մեզ, և թե՛ բոլոր ազգերի մեջ:

Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը, հանուն Ծվեյցարիայի հայոց միության, ողջունեց նաև միության նախագահ դոկտ. Ռուբեն Մոմճյանը հետևյալ ուղերձով.

#### ԴՈՎՏ. ՌՈՒԲԵՆ ՄՈՄՃՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Վեհափառ Տեր,

Հանուն Զվիցերիո հայոց միության և համայն զվիցերաբնակ հայության, պատիվը ունիմ Ձեզի բոլորիդ բարի գալուստ մաղթելու մեր երկիրը և այսօրվան ճաշկերույթին:

Ուրախ և հպարտ է զվիցերահայությունը, սրտով և հոգիով իր մեջ ընդունելու, վայելելու թանկագին ներկայությունը Ամենայն Հայոց Հայրապետին, Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Վազգեն Առաջին կաթողիկոսին: Բարի եկած եք մեր փոքր, բայց հյուրընկալ գաղութը, Վեհափառ Տեր:


Ձեր Անձին մեջ մենք կողջունենք մեր անսասան հավատքի վեմ՝ Հայաստանյայց եկեղեցիի Մայր Աթոռ «Սուրբ Էջմիածնի նվիրյալ Գահակալը»:

Ձեր ներկայությամբ կզգանք ու կապրինք հույսը վաղվան լույսին հայ ազգի արշալույսին, անոր իղձերու իրականացման, լավագույն ապագային:

Ձերդ Սրբության անձին մեջ մենք կտեսնենք դարավոր մեր հայրենիքը, հավերժական Հայաստանը, Արագածը, ու նաև զույգ Մասիսները, պատմական մեր կոթողները, Ծիծեռնակաբերդը, Սարդարապատը, հազարամյա մեր պատմությունը, մեր փառավոր մշակույթը, Հայաստանի աշխատասեր ու չարքաշ մեր եղբայրներն ու քույրերը, մեր թանկագին ժողովուրդը:

Ընորհիվ Ձեզ և Ձեր բարի անձին, խոհուն և իմաստուն հայրապետության, ինչպես երեկ գիշեր հայտարարեցիք, կհավատանք, որ մոտալուտ է Հայաստանյայց եկեղեցիի զույգ պատմական Աթոռներու—Էջմիածին-Անթիլիաս—բնականոն բարեկարգումը: Եվ ի մտոս կհաստատովի ամենուրեք ցանկալի միասնականությունը, եղբայրական սիրո և վստահության կազդորոնչ մթնոլորտը բոլոր հայ եկեղեցիներու բարձր գմբեթներուն ներքև: Կհավատանք, որ մեկ և անբաժանելի է Հայաստանյայց սուրբ եկեղեցին,





ԲՅՈՒՐԵՂՅԱ ԱՄԵՂԻՍԻ ԲԱԺԱԿ

(Նվեր՝ ժրնկի հայ համայնքի)



ինչպես որ մեկ և անբաժանելի է համայն հայ ժողովուրդը քրիստոնեական իր սուրբ հավատքով, իր բաղձանքներով և տագնապներով, իր ապրումներով և ամբողջական հայրենիքով, հավիտենական Հայաստանով:

Վեհափառ Տեր,

Հուսով եմք, որ Ձեր ուղևորությունը դեպի Լոնդոն, ուր հյուրն էիք Քենթրբերիի արքեպիսկոպոսին, ու դեպի մեր քաղաքը, ուր հյուրը եղաք Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին, հաջողություններով պսակվեցալ:

Հույս ունիմք, որ Դուք գոհ և մխիթարված եք Ձեր այցելություններեն և հանդիպումներեն:

Ընդունեցեք, խնդրեմ, մեր խորին շնորհակալությունները Ձեր բարեդեպ և օրհնաբեր այցելության համար մեր գաղութին: Կհուսանք, որ կրկին կուգաք մեզի մոտիկ ապագային և առիթը կուտաք մեզի վերստին վայելելու Ձերդ Սրբությունը:

Կմաղթենք և կաղոթենք, որ բարին Աստված Ձերդ Սրբության պարզևե քաջատողջ և երկար կյանք, ուժ և կարողություն, որպեսզի Ձեր հայրական հովանին ու օրհնությունները անպակաս ըլլան մեր վրայեն, որպեսզի մըշտապես հովվեք Ձեր հոտը ամեն տեղ՝ հերկիր Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Ծնորհակալ եմք, Վեհափառ Տեր:

Հրաժեշտի սույն ընդունելության ընթացքում գործադրության դրվեց նաև գեղարվեստական մի ճոխ հայտագիր՝ բաղկացած հայերեն արտասանություններից, երգերից և խմբերգերից:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք առալ Հայոց Հայրապետը և սովեց իր օրհնությունն ու պատգամը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

ՀՐԱԺԵՇՏԻ ԾԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(25 հունիսի, կիրակի, 1978 թ.)

Աստուծո ողորմությամբ այսօր արևը բացալ իր երեսը ժընկին: Հակառակ որ երեկ երեկոյան հեռուստացույցեն նախատեսեցին, որ այսօր ամբողջ Զվիցերիո մեջ անձրև և փոթորիկ պիտի ըլլա: Կխորհինք թե այս պատկերը ճշմարիտ է նաև հոգեկան իմաստով մեզի բոլորիս համար: Ս. Հակոբ եկեղեցիին մեջ մեր այսօրվա պատարագը, միատեղ աղոթքը, նույնպես հոգեկան արև մը հանդիսացալ մեզի համար: Ու այժմ այստեղ, այս սքանչելի ճաշկերույթը, երբ կհանդիպինք ձեզի, այսքան մեծ թվով, ավելի քան չորս հարյուր հայ եկեղեցվո զավակներ, հավաքված Զվիցերիո զանազան շրջաններեն և դրացի գրեթե բոլոր երկիրներեն: Եվ ճիշտ նկատվեցալ արդեն, թե մեր այսօրվա հավաքույթը կխորհրդանշե չափով մը՝ պատկերը ամբողջ մեր սփյուռքին: Մենք սրտագին շնորհակալություն պետք է հայտնենք այս բոլորի համար այն մարմիններուն, որոնք կազմակերպեցին այս հանդիսությունները: Ծնորհակալության և օրհնության Մեր խոսքը կերթա նախ Զվիցերահայ միության, եկեղեցական վարչության և բոլոր մյուս միություններու ներկայացուցիչներուն, որոնք գործակցեցան այս առիթով:

Քիչ առաջ երգվեցալ այստեղ, գրեթե միաբերան, «Երևան-Էրեբունի»



ծանոթ քաղցր երգը: Գուցե նկատեցին ոմանք, թե Մենք շատ հուզվեցանք, և մեր աչքեն արցունք իջավ: Գիտե՞ք ինչու: Միայն ուրախության արցունք չէր այդ: Մեր հուզումը կերթար դեպի վաթսուն և ավելի տարիներ առաջ, էրբեք հայ ազգը մահվան դռներուն առջև կգտնվեր: Կակնարկենք 1915—16 երբ հայ տարիներուն: Մեր վրա չափազանց խորունկ, մնայուն և տևական տուգանքները թողած է Ֆրանց Վերֆելի վեպին մեջ հերասներեն մեկուն արտահայտությունը: Տեսնելով համատարած ողբերգությունը Հայաստանի ժողովուրդի, ան կբացականչե. «Եկած է արդեն ժամանակը, որ այս արևին տուկ այլևս կարելի չէ ապրիլ իբրև հայ»: Դուք գրեթե բոլորը, այդ դժբախտ ժողովուրդի զավակները կամ անոնց հաջորդներն եք, Մենք ալ մեջը ըլլալով: Բայց ահա Աստված մեզ չմոռցավ այնուամենայնիվ և, ի՞նչ հրաշք, այդ ողբերգական օրերեն հազիվ երեք տարի հետո, ինչպես որ Քրիստոս երեք օր հետո հարություն առած էր գերեզմանեն, հայ ժողովուրդն ալ հարություն առավ Սարդարապատի հերոսամարտով, մայիսյան լուսաբացով: Հազար տարի հետո վերականգնվեցավ խորտակված հայկական պետականությունը և քայլ առ քայլ սկսավ վերակառուցվիլ և իր խորունկ ու բազում վերքերը ամոքել: Ահավասիկ այսօր 1978 թվականին մեր ազգը այլևս հեռու է այդ ողբերգական օրերու վիշտեն, ցավեն, թեև չի մոռնար այդ մեծ եղեռնը ու երբեք պիտի չմոռնա: Այսօր մեր առջև կբացվի վերածնած ժողովուրդի մը կյանքին պատկերը, մեր այսօրվա մայր հայրենիքով, ուր երեք միլիոն հայեր միատեղված են: Եվ ամեն տարի վաթսուն հազար երեխա կծնի Հայաստանի մեջ: Մեր ներկա երկիրը մեր բոլոր ազգային երազանքներու իրականացման ապաստան իրական գրավականն է:

Աճող, շնչող, ապրող և զարգացող Հայաստանի սրտին վրա, այսօր վերածնունդի շրջան մը կապրի նաև մեր սուրբ եկեղեցին, մանավանդ այս վերջին 20 և ավելի տարիներու ընթացքին, երբ Մենք, Աստուծո ղոյումությամբ և ժողովուրդի կամքով, կոչվեցանք առաջին սպասավորը ըլլալու մեր ս. եկեղեցիին և լուսարարը ս. Էջմիածնի: Կրկին Աստված Մեզի օգնության հասավ, և բարենպաստ պայմաններ ստեղծվեցան, այնպես որ Մենք կարողացանք մեր բոլոր շինարարական ծրագիրները իրագործել: Եվ հետըզհետե, ալիք առ ալիք աճեցավ նաև քրիստոնեական հավատքի հուրը մեր ժողովուրդի սրտին մեջ: Այսօր Հայաստանի բոլոր եկեղեցիները ամեն կիրակի, առանց բացառության, լեպ լեցուն են: Մանավանդ վանքերը կլեցվին բազմահազար ուխտավորներով ամեն շաբաթ և կիրակի օրերը: Հիշենք Էջմիածնի վանքը առաջին հերթին, Գեղարդա վանքը, որ հոչակավոր հին պատմական ուխտատեղի մըն է, Խոր-Վիրապի վանքը, ս. Խաչ վանքը, և տակավին բազում եկեղեցիներ: Եվ նույնիսկ փլած եկեղեցիներու քարերը ուխտատեղի են, հազարներ կերթան, առանց որ այնտեղ եկեղեցին կանգուն եղած ըլլա, առանց որ այնտեղ հոգևորական ըլլա: Հայաստանի հայր երբեք չըսեր՝ «քանդված եկեղեցի» կամ «փլված եկեղեցի». կըսե՛ «խնամարկված եկեղեցի»: Հայ ժողովուրդի գիտակցության մեջ ոչ մեկ եկեղեցի փլած կամ քանդված վիճակի մեջ չէ:

Եկեղեցական կյանքը հետզհետե կանի Հայաստանի մեջ: Պետք է անկեղծորեն խստովանիք, որ զարգացման այս ճանապարհի վրա, Մենք ոչ մեկ օրինական կամ գործնական արգելքի չենք հանդիպիր: Հայաստանի պետական իշխանությունները, բարյացակամությամբ նույնիսկ կրնանք ուել, կքաջալերեն և նեցուկ կկանգնին բարոյապես, երկրի օրենքներու սահմաններու մեջ, բազմաթիվ դյուրություններ ընծայելով Մեզի: Նույնիսկ քայլ մը



ստաջ կուզենք երթալ և ըսել, թե Մենք նոր եկեղեցիներ ալ սիսի սկսինք քանալ Հայաստանի մեջ: Արդեն անհրաժեշտ դիմումներ կատարած ենք:

Բայց Մեր ուշադրությունը այս պահուն կուզենք ուղղել դեպի սփյուռքի մեր եկեղեցիները, սփյուռքի հայկական կյանքը: Տարակույս չկա, որ լավ է, որ սփյուռք չունենայինք, և ամբողջ հայությունը, վեց-յոթը միլիոն, իր մայր հայրենիքի մեջ ապրեր: Սակայն քանի որ մեր անցած դժբախտ պատմությունը այսպես է տնօրինած և այս է մեր ճակատագիրը, պետք է մենք քաջությամբ ընդունինք այն. և ոչ միայն աշխատինք պահպանել սփյուռքը, այլև այդ սփյուռքեն օգուտ ալ քաղենք մեր ժողովուրդի ապագայի համար: Հետևաբար, մեր գիտակցության առջև սփյուռքահայ կյանքն ալ պետք է նկատվի հայ ժողովուրդի վերածնունդի և վերագարթոնքի ճանապարհին վրա զարգացող նոր իրականություն, նոր եկեղեցական ազգային ուժ: Սփյուռքը պետք է ընդունինք իբրև կայուն իրականություն, մնայուն իրականություն և այդպես կազմակերպենք մեր կյանքը: Կխորհինք թե արդեն ժամանակն է, որ հայությունը ավելի կազմակերպված ձևով, ծրագրված ձևով, նպատակապես կերպով նայի իր կյանքին, իր ներկային և ապագային:

Սփյուռքահայ կյանքի տարածքի վրա բազում սքանչելի ձեռնարկներ կան, բազմաթիվ միություններ, կազմակերպություններ, որոնցմե ամեն մեկը իր տեղը ունի, իր իմաստը, իր անհրաժեշտությունը: Սակայն համայն հայությունը ի մի հավաքող, մեկ կամարի տակ համախմբող կազմակերպությունը մեր ս. եկեղեցին է՝ Աստուծո մեծագույն պարգևը հայ ժողովուրդին ոչ միայն հոգևոր, այլ նաև ազգային տեսակետով: Գուցե երբեմն մենք կանգիտանանք կամ հարկ եղած կարևորությամբ չենք գնահատեր մեր եկեղեցվո այս գերագույն դերը, գոյության իմաստը, բայց մեր ամբողջ պատմությունը կվկայե այդ մասին: Մանավանդ Օսմանյան կայսրության շրջանին, ամբողջ հինգ հարյուր և ավելի տարիներ շարունակ հայ ժողովուրդը կարողացած է ինքզինքը ամուր կերպով պահպանել, շնորհիվ միայն հայ եկեղեցիին: Եվ միայն 1915-ի ահավոր հսրվածն էր, որ բնաջնջեց մեր ազգը այն ստեն: Հետևաբար, ուղիղ գնահատելով մեր եկեղեցվո դերը և կոչումը՝ քրիստոնեական, բարոյական, մշակութային և ազգային տեսակետով, կխորհինք թե գոյություն ունեցող բոլոր կազմակերպությունները, պահելով հանդերձ իրենց ծրագիրները իրենց գործունեության սահմանին մեջ, պետք է նեցուկ հանդիսանան, օգնեն, որպեսզի այս համահայկական սուրբ հաստատությունը հետզհետե ամրանա, հետզհետե իր սուրբ առաքելությունը կարողանա իրագործել ստավեղագույն արդյունքներով:

Եկեղեցի, կրթական գործ և մշակութային գործունեություն: Ահա սփյուռքահայ կյանքի երեք գլխավոր աշխատանքի ուղիները, գործունեության ճանապարհները: Կրթական գործն ալ բախտորոշ կնկատենք զուտ հոգևոր կյանքի կողքին: Երբ 1960 թվականին առաջին անգամ Ամերիկա կղտնվեինք, ուր ոչ մեկ հայկական դպրոց չկար տակավին Միացյալ Նահանգներու մեջ, այդ մասին խոսիլ փորձեցինք պատարասանառու մարդոց և կարևոր ազգայիններու, բայց գրեթե ոչ ոք մեզ հասկցավ: Նույնիսկ մեր հոգևորականներեն շատերը: Կըսեին թե՛ մենք այստեղ դպրոց չենք կրնար ունենալ, հնարավոր չէ, իսկ ոմանք ավելի առաջ կերթային ըսելու համար թե՛ Ամերիկայի մեջ հայ լեզուն պահպանելու անհրաժեշտություն չկա:

Եվ երբ ութ տարի հետո կրկին գացինք այնտեղ, բարեբախտաբար նոր շարժում մը սկսած էր: Կայիֆորնիո շրջանին մեջ արդեն երկու դպրոց-



ներ բացված էին: Մենք այցելեցինք այդ դպրոցները մեծ հուզումով, և Մեր խոսքին մեջ արտահայտվեցանք այսպես. «Այս դպրոցները մեծագույն պարգևն են Հայաստանին»: Իսկ հիմա արդեն այդ աշխատանքը նոր թափով առաջ կուարվի այնտեղ: Բազմաթիվ դպրոցներ հիմնված են, կհիմնվին և պիտի հիմնվին տակավին Միացյալ Նահանգաց տարբեր հայաշատ քաղաքներում մեջ: Այդպիսի սկզբնավորություն կա նաև Տրանսայի մեջ: Հիմա նաև Լոնդոնի մեջ հայերեն դասերու դասընթացք մը ստեղծված է, ուր շաբաթը երկու անգամ 160 աշակերտներ հայերեն կսորվին: Եվ գրեթե բոլորին միտքերը պատրաստված են, որ մոտ ապագային Լոնդոնի մեջ ամենօրյա հայկական դպրոց մը կրնա կազմակերպվի:

Մենք մեծ կարևորությամբ կընդգծենք այս հուսադրիչ իրականությունը և կմաղթենք, որ սիյունքահայ բոլոր կեդրոններու մեջ կարևորություն տրվի կրթական գործին, հայ լեզվի պահպանման գործին: Մեր մայր լեզվի մեջ հայ ժողովուրդի հոգիին պատկերը կա, և մենք չենք կրնար բաժնվիլ մեր մայրերու լեզվեն, մեր հոգիի արմատներեն: Եվ քանի որ Լոնդոնի պարագան հիշեցինք, պետք է ձեզի հայտնենք, թե այնտեղ հանդիպեցանք Մեզի անծանոթ անձնավորության մը, Թեհրանեն, տիար Թովմաս Թովմասյանին: Սքանչելի մարդ մը, որ Թեհրանի մեջ դպրոց հաստատած է, դպրոց մը, ուր 900 աշակերտներ կսորվին այսօր: Ահա այդ անձնավորությունը, որ ոչ միայն դրամի մարդ է, այլ նաև հայու հոգի կրող և տեսիլք ունեցող անձնավորություն, Մեզի ներկայացուց քանչևի ծրագիր մը: Ան ըսավ. «Վեհափառ Հայրապետ, չի բավեր միայն արտասահմանում դպրոցներ բանալ, մենք պետք է մտածենք նաև հայ դպրոցների համար ուսուցիչներ պատրաստել: Այսօրվա պայմանների մեջ սիյունքի տարածքի վրա մեր դպրոցների ուսուցիչների մակարդակը ցածր է, պատրաստված ուսուցիչներ շատ քիչ կան: Որով, արտասահմանում պետք է հիմնենք կրթական մի բարձրագույն հաստատություն, որ ուսուցիչ պատրաստի սիյունքի մեր դպրոցների համար, Հայաստանից հրավիրված մի քանի մասնագետների գործակցությամբ, որոնք ավանդեն հայոց լեզու, հայոց պատմություն և գրականություն և այլ հայագիտական առարկաներ»:

Պրն. Թովմասյանը ավելցուց, որ ինքը այդ գործի իրականացման համար պատրաստ է ճարելու պետք եղած դրամական ֆոնդը, որովհետև շատ պարկահայ ընկերներ ունի, որոնց հետ միասնաբար կրնան այդ միջոցները ստեղծել: Տակավին պետք է հասուննա այս մեծ ծրագիրը և օր մը կյանքի կոչվի:

Խոսելով այս մասին՝ Մենք կամեցանք ցույց տալ, թե սիյունքի հայության մեջ բարեբախտաբար արթնցած է նոր գիտակցություն մը, և կան քանչևի մարդիկ, որոնք պատրաստ են թե՛ նյութապես և թե՛ բարոյապես նեցուկ կանգնելու, որպեսզի արտասահմանի հայությունը կենդանի մնա իր քրիստոնեական հավատքով, իր մայրենի լեզվով, ավանդություններով և իր մշակութային դիմագծով, իր բնական երկրին հավատարիմ քաղաքացի մնալով հանդերձ: Անհրաժեշտ է մանավանդ նոր սերունդի հայացքը դարձնել դեպի հայ մշակույթի արժեքները: Այլ մշակույթ մը, մեր կարծիքով, հայ մշակույթին բնավ չի խանգարեր: Ոմանք կրնան խորհիլ թե, օրինակ, ֆրանսաբնակ հայ երիտասարդ մը ֆրանսական մշակույթով սնված է, այլևս անոր գիտակցության մեջ հայկականին տեղ չի մնար: Ատիկա ճիշտ չէ: Մանավանդ այսօրվա աշխարհին մեջ: Ամեն մարդ քանի մը մշակույթի հետ կապված է: Մենք արդեն փորձառություն ունինք քանի մը մշա-



կույթ իրար խառնելու՝ հայկականն ալ պահելով: Եվ իրապես վերջերս արտասահմանի հայությանն նոր սերունդին մեջ կոտեսներ հայ զարթոնքի գիտակցությունը, մշակութային, ազգային և հայրենասիրական իմաստով: Օրինակի համար, Մայքըլ Սուլեյի նշանավոր գիրքը, որ հայտնությունն մը եղավ, հայ երիտասարդության խիղճը ցնցող, հետո նկարիչ Գառզուի որդին, որ նույնպես սքանչելի գիրք մը գրեց, ուր ի հայտ կուգա իր հայկական գիտակցությունը: Լորիս Ծգնավորյանի հաստատած ինստիտուտը Լոնդոնի մեջ հայ երաժշտության նվիրված, որուն շուրջ համախմբված են խանդավառ երիտասարդներ: Հետո Միլանոյի մեջ սկիզբ առած հայ հարտարապետության նվիրված շարժումը, որ նույնպես սքանչելի շարժում մըն է: Ահալասիկ այս բոլորը նոր երևույթներ են մեր կյանքի մեջ, որոնք կղըրսկորեն հայ նոր սերունդի վերազարթոնքը և հայկական մշակույթին մոտենալու ձգտումը: Այս բոլորը կուգենք այսօր ձեր ուշադրության հանձնել, նկատի ունենալով, որ դուք բոլորդ գիտակից ազգային գործիչներ եք, եկեղեցական, կրոնական, մշակութային, բարեսիրական և այլ ազգային կազմակերպություններու ղեկավարներ կամ համակիրներ:

Քիչ առաջ խոսողներեն պրն. Շելեֆյան ընդգծեց այն պարագան, որ արտասահմանի հայությունը կներշնչվի և կոգևորվի կաթողիկոսով, էջմիածնով, մեր հայրենի հառաջդիմություններով, վերազարթոնքով, ինչ որ անշուշտ ճշմարիտ է: Բայց ձեզի ըսենք նաև, թե Հայաստանի ձեր եղբայրներն ու քույրերը նույնպես կոգևորվին, կներշնչվին և ավելի լավատես կդառնան դեպի հայոց ապագան, արտասահմանի հայության կենդանությունը:

Կյանքի պայմանները բոլորովին տարբեր են, բայց հայոց հոգին նույնն է այնտեղ՝ ի Հայաստան, և այստեղ՝ սփյուռքի մեջ, նույնը՝ իր քրիստոնեական հավատքով, իր մայրենի լեզվով, իր մշակույթով և իր տեսիլքներով: Հետևաբար, դուք, սիրելիներ, և ամբողջ արտասահմանի հայությունը, հայ ժողովուրդի անբաժանելի մասն եք, մարմինն ու արյունն եք Հայաստանի ժողովուրդի:

Վերջացնելով Մեր խոսքը՝ կրկին հույս կհայտնենք, որ ապագայի մեր բոլոր ծրագիրները, սփյուռքի կյանքի պայմաններու մեջ հետզհետե ավելի պիտի պայծառանան և պիտի իրագործվին, առավել ևս նոր հուսո դոներ պիտի բացվին, և վստահ ենք որ պիտի կարողանանք ավելի նպատակաւղաց կերպով ձեռք-ձեռքի տված նվիրվիլ նույն նպատակներու իրագործման:

Վստահ ենք, թե հետևողական աշխատանքով, համբերությամբ, լավատեսությամբ և քիչ մըն ալ քաջությամբ պիտի իրականանան Մեր և ձեր բոլոր սպասումները:

Այս ակնկալությամբ և այս մտղթանքով Մեր հայացքը կողդենք դեպի երկինք՝ աղոթելով. «Տէր Աստուած ամենակալ, տուր աշխարհիս խաղաղություն, սէր, միություն ազգիս հայոց և լեր օգնական սուրբ եկեղեցույս Հայաստանեայց. ամէն»:

Ընդունելության ժամանակ, Հայոց Հայրապետի սույն ոգևորիչ ելույթից հետո, Շրճնում կառուցվելիք հայ եկեղեցու Էկումենիկ կենտրոնի շենքի շինության ի նպատակ տեղի ունեցավ ինքնաբոխ հանգանակություն, և գոյացավ, առաջին իսկ ստիժով, շուրջ հարյուր հիսուն հազար դոլլարի մի գու-



մար՝ չհաշված նույն նպատակի համար Մայր Աթոռի տրամադրած հար-  
յուր հազար դրվարը:

Հրաժեշտի սույն ընդունելությունն ավարտվեց խանդավառ մթնոլոր-  
տում՝ խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի  
«Պահպանիչ»-ով:

#### ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ԺԸՆԵՎԻՆ

Հունիսի 26-ին, երկուշաբթի օրը, ժամը 13-ին, Ժընևի հայոց ս. Հակոբ  
եկեղեցու Եկեղեցասեր տիկնանց օժանդակ հանձնախումբը ճաշկերույթով  
պատվեց Հայոց Հայրապետի ներկայությունը եկեղեցու ներքնասրահում:

Հանուն տիկնանց օժանդակ միության ս. Հակոբ եկեղեցու վարչության  
նախագահ պր. Էժեն Փափազյանը ողջունեց Հայոց Հայրապետի ներկայու-  
թյունը՝ բարձր գնահատելով միաժամանակ Եկեղեցասեր տիկնանց օժան-  
դակ հանձնախմբի բարոյական և նյութական աջակցությունը ի նպաստ  
եկեղեցու բարեգարդման:

Հայոց Հայրապետը գոհունակ սրտով ողջունեց հարգելի տիկիներին,  
գնահատեց նրանց եկեղեցանվեր աշխատանքը և Իր օրհնությունը բաշխեց  
բոլորին:

Այս առթիվ Հայոց Հայրապետը հուշանվերներ բաժանեց նաև տիկ-  
նանց հանձնախմբի անդամներին:

Երեկոյան ժամը 19-ին «Ռիչմոնդ» հյուրանոցում Հայոց Հայրապետը  
հանդիպում ունեցավ «Ծվեյցարիայի հայ երիտասարդաց միության» ան-  
դամների հետ:

Հայոց Հայրապետին ողջունեց միության նախագահ պր. Արտեմ Ծե-  
լեֆյանը: Հայոց Հայրապետը, շրջապատված հայ երիտասարդներով, հե-  
տաքրքրվեց նրանց կյանքով, գործունեությամբ, ապա թելադրեց հպարտ  
զգալ իրենց որպես տաղանդավոր հայ ժողովրդի զավակներ, հա-  
վատարիմ մնալ մեր դարավոր ավանդություններին, լեզվին, գիր ու գրա-  
կանությանը և սերտ կապ պահպանել միաժամանակ վերածնված հայ աշ-  
խարհի հողի վրա ապրող և ստեղծագործող հայ նոր սերնդի հետ, որը հե-  
րոսական ճիգերով կերտում է մեր ժողովրդի պայծառ ապագան:

Հայոց Հայրապետի այցելությունը Ժընև նույնպես անցավ չափազանց  
հետաքրքիր, լի անմոռաց հուշերով և տպավորություններով, և Նորին Սուրբ  
Օծությունը հունիսի 29-ին Մայր Աթոռ վերադարձավ լավատես, խանդա-  
վառ, զորացած սիյուռքի Իր հոգևոր զավակների սիրով և պաշտամունքով՝  
շարունակելու համար Իր գործը Մայր Աթոռում՝ ի պայծառություն ս. Էջ-  
միածնի, ի մխիթարություն հայ ժողովրդի, որ ի հայրենիս և ի սիյուռս աշ-  
խարհի, և ի բարօրություն հայրենյաց:







## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Օգոստոսի 1-ին, երեքշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիլովոդակ, մոտ մեկ ամիս տեղի «Կրասնըն կամնի» առողջարանում հանգստանալու համար:

Նորին Սրբությանը ուղեկցում էր Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ և Մայր Աթոռի միաբան տ. Գարեգին աբեղա Ներսիսյանը:

\* \* \*

**Օգոստոսի 6-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ա. պատարագ է մատուցում տ. Կոմիտաս աբեղա Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երանի որ խորհի գաղքատն և գտնանկն, յատուր չարի փրկէ զնա Տէր» (Սաղմ. Խ 2) բնաբանով:

\* \* \*

**Օգոստոսի 8-ին, երեքշաբթի.**—Այսօր, առավոտյան, Մայր Աթոռի միաբանները և հոգևոր ճեմարանի ուսանողները մեկնում են մեկօրյա շրջապտույտի դեպի Սևան լիճ:

Նույն օրը, երեկոյան, Ամերիկա է մեկնում շուրջ երկու շաբաթ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Սրբազան հորը օղանավակցւյանում ճանապարհեցին Մայր տաճարի յուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթրոյանը և Բյուզանդ արկ. Գալաշյանը:

\* \* \*

**Օգոստոսի 18-ին, կիրակի.**—Վերափոխումն սուրբ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ա. պատարագ է մատուցում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Ս. պատարագի վերջում կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ»:

\* \* \*

**Օգոստոսի 14-ին, երկուշաբթի.**—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ա. պատարագ է մատուցում տ. Նիշե բահանա Բաղրամյանը:



Ս. պատարագի ավարտին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն անշեցելոց»:

\* \* \*

**Օգոստոսի 20-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մովսիկ վարդապետ Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եկաք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնատրք, եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 29) բնաբանով:

\* \* \*

**Օգոստոսի 22-ին, երեքշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողները դարձյալ մեկնեցին մեկօրյա շրջապտույտի դեպի Սեփանա լիճ:

\* \* \*

**Օգոստոսի 25-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան, Կիսովորակում շուրջ մեկ ամիս հանգստանալուց հետո, Մայր Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Օգոստոսի 27-ին, կիրակի.**—Տօն գիտի գոտույ Սրբուհույ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ավատրախայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Աղան Ծ. վրդ. Պալիոզյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ խոսելով ընդհանուր քրիստոնեական եկեղեցիների բարեկամության և էկումենիկ շարժման նշանակության և կարևորության մասին:

\* \* \*

**Օգոստոսի 30-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հավաքույթ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

\* \* \*

**Սեպտեմբերի 1-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

\* \* \*

**Սեպտեմբերի 3-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում Արևմտյան Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ տ. Գարեգին արեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ» (Սաղմ. ԺԸ 2) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

\* \* \*

**Սեպտեմբերի 6-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամսուանոցում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հավաքույթի սկզբում Վեհափառ Հայրապետը խոսում է մեր եկեղեցու ներքին թեմերի գործունեության կարևորության և նշանակության մասին: Իսկ հետո Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռում գրանցվող տ. Հայկազուն արեղա Նաջարյանը ներկայացնում է Վեհափառ Հայրապետի այս տարի հունիսին Ժճնում՝ ԵՂՄ-ի նիստին արտասանած ճառը:

Վերջում կատարվում է մտքերի փոխանակում:

\* \* \*

**Սեպտեմբերի 8-ին, ուրբաթ.**—Այսօր, անվտոյան ժամը 10.30-ին, Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում 1978—1979 ուսումնական տարեշրջանի բացումը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությունը բաց է անում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քին. Մարությանը:

Օրհնության խոսքով հանդես է գալիս Հայոց Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի այս տարվա ուսանողությունը բաղկացած է 33 հոգուց՝ բաժանված 4 դասարանների.

- Ա. դասարան՝ 8 ուսանող.
- Գ. դասարան՝ 12 ուսանող.
- Բ. լսարան՝ 5 ուսանող.
- Գ. լսարան՝ 8 ուսանող:

Սեպտեմբերի 9-ին, շաբաթ օրը, անվտոյան ժամը 9.30-ին, հոգևոր ճեմարանի հարկից ներս հնչում է ուսումնական տարվա սկիզբն ազդարարող ավանդական առաջին զանգը, և կանոնավոր սկսվում են դասավանդությունները:



\*  
\* \*

**Սեպտեմբերի 10-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հայկազուն արքեպիսկոպոստ Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ նյութ ունենալով օրվա սուրբ գրական ընթերցումներից հացի բազմացումը և հինգ հազարի կերակրումը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ տ. Տաճատ արքեպ. Ուրֆայանի և ռուս եկեղեցու բարձրաստիճան հոգևորական Լեմինգրադի տ. Նիկողիմ միսրոպոլիտի համար:

\*  
\* \*

**Սեպտեմբերի 18-ին, չորեքշաբթի.**—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում կատարվում է մրտքերի փոխանակում գիտության և կրոնի փոխհարաբերությունների մասին:

\*  
\* \*

**Սեպտեմբերի 15-ին, ուրբաթ.**—Այսօր, երեկոյան, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի է ունենում դասախոսություն, որի ընթացքում տ. Հայկազուն արքեպիսկոպոստ Նաջարյանը խոսում է Լոնդոնի «Քինգս քոլեջ»-ի ուսումնական ծրագրերի մասին, հատկապես Հին և Նոր Կտակարանների որոշ գրքերի ներածության և մեկնության դասավանդման վրա:

\*  
\* \*

**Սեպտեմբերի 16-ին, շաբաթ.**—Այսօր, կեսօրվա ժամը 12-ին, պաշտոնական այ-

ցով Հայաստանում գտնվող ԱՄՆ-ի մի շարք քաղաքների քաղաքապետներ այցելեցին Վեհափառ Հայրապետին:

Հայոց Հայրապետի և մեծարգո հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ գրույց՝ բարեկամական մթնոլորտում:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Մայր տաճարում տեղի է ունենում տեղադրված նոր երգեհոնի բացմանը նվիրված երգեհոնային հոգևոր համերգ՝ Բոստոնի (ԱՄՆ) սիմֆոնիկ նվագախմբի երգեհոնահար Պերճ ժամկոչյանի կատարմամբ:

Մայր տաճարի նոր երգեհոնի բարերարն է փարիզահայ ժիրայր Մանասյանը:

Վերջերս ս. Սարգիս եկեղեցում ևս տեղադրվեց երգեհոն՝ բարերարությամբ լոնդոնաբնակ Ժորժ և Հովհաննես Քյուրքչյան եղբայրների:

\*  
\* \*

**Սեպտեմբերի 17-ին, կիրակի.**—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերքերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում օրվա տոնի պատմական նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

«Յերեկոյին կատարի թափօր խաչվերացի»:

\*  
\* \*

**Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.**—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մանուկ քհն. Մարգարյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:







Ա. ՀԱՏԻՑՅԱՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1780—1800  
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԱՐՂՈՐԹՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Աթոռի միաբան Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, աշակերտն ու գործակիցը Սիմեոն կաթողիկոս Երևանցու (1763—1780), հայ ազատագրական շարժման ամենակարկառուն և վաստակաշատ գործիչներից մեկն է հանդիսանում 1780—1800 թվականներին:

Նա հետևողականորեն շարունակում է Սիմեոն Երևանցու հայրենասիրական, քաղաքական գործունեությունը, մանավանդ դեպի Ռուսաստան կողմնորոշման ուղղությամբ:

«XVIII դարի 70—80-ական թվականները հայ-ռուսական հարաբերությունների և մեր ազգային-ազատագրական մտքի բուռն վերելքի տարիներ էին» ըստ մասնագետների:

«Մենք խանական բարբարոսությունների տակ ճնշված ստրուկներ էինք: Այդ արյունոտ, ողբալի իրականությունից, խավարի և հուսահատության միջավայրից դուրս է գալիս այսպիսի մի եռանդոտ, գործունյա մարդ, կտրծքը լի բարի ցանկություններով, ազատական, բարեկարգիչ տենչերով:

Ձի պիտի մամոտի նրա գերեզմանը: Որովհետև նա մի ամբողջ պատմական շրջան է ստեղծել... մեկը XVIII դարի հայ հռչակավոր գործիչներից, որոնց թիվը մեզանում, դժբախտաբար, շատ չի եղել»:

գրել է Արղությանի կենսագիր պատմաբան Լեոն<sup>1</sup>:

«Մեծապես կողմնակից էր ռուսաց դեպի արևելք տարածման գաղափարին և դրա վրա էր դնում Հայաստանի ազատագրությունը»<sup>2</sup>:

Արղությանը ծնվել է 1743 թվականի մայիսի 23-ին Սանահին գյուղում, որը Արղությանների իշխանական տոհմի կալվածն է եղել Գուգարաց աշխարհում<sup>3</sup>: Արղությանը իրեն համարում էր «սերեալ ի յարմատոյ և ի շատափղէ սուրբ Լուսաորչիւն մերոյ, յԱրշակունեաց Պահլաւունի»:

Արղությանի հայրը՝ Ծիոշ Բեկը, եղել է «Սանահինի կալվածատեր, վրաց արքունիքի պաշտոնյա<sup>4</sup>, մոր անունը՝ Քեթեվան»: Ունեցել է երեք եղբայր և մի քույր:

Արղությանի մանկության և պատանեկու-

<sup>1</sup> Լեո, Հովսեփ կաթողիկոս Արղության, Թիֆլիս, 1902, «Յառաջաբան», և ապա էջ 228:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երևան, 1946, էջ 725:

<sup>3</sup> Առաքել Առաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հատոր երկրորդ, Երևան, 1964, էջ 92:

<sup>4</sup> Մարաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հատոր Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 3202:



թյան մասին ստույգ տեղեկություններ չը-  
կան, վկայում է նրա կենսագիր Լեոն:

Արդությանն իր նախնական կրթությունը  
ստացել է Սանահինի վանքում, ապա Մայր  
Աթոռ ս. Էջմիածնում, աշակերտել է մե-

հույունն ու համակրանքը:

Արդությանը կուսակրոն քահանայության  
և եպիսկոպոսության եկեղեցական աստի-  
ճանները ստացել է Սիմեոն Երևանցի կա-  
թողիկոսից:



Հովսեփ արքեպիսկոպոս Արդության

ծագործ և ուսումնասեր Սիմեոն Երևանցի  
կաթողիկոսին և մինչև նրա մահը անվե-  
րապահորեն վայելել է կաթողիկոսի վստա-

1769 թվականին, հազիվ 26 տարեկան  
խոստումնալից եկեղեցական, եպիսկոպոս  
է ձեռնադրվել, ապա «Տանկահայոց մեջ



Էջմիածնի շինությանց համար ժողովարարություն կատարեց և 1773 թվականին, միշտ Սիմեոն կաթողիկոսե, Ռուսաստանի առաջնորդ Անանակվեցավ<sup>5</sup>, արժանանալով նաև արքայության պատվին, իր արդյունավետ, եկեղեցաշեն, հայրենակներ գործունեության համար:

Հովսեփ արքեպ. Արղությանը 27 տարի մնաց Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդության մեջ, այդ թեմի վրա «Մինաս եպիսկոպոս Տիգրանյանի հաջորդության հետ, անոր գաղափարներն ալ ժառանգեց, հայկական վերակենդանության գաղափարը սկսավ մշակել, իրեն ծրագիրը հիմնելով ռուսական կայսրության վրա, որ ամեն միջոցներով կշանար դեպի հարավ ընդարձակել յուր տիրապետությունը»<sup>6</sup>:

Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի այս պաշտոնավարությունից էլ սկսվում է Արղությանի բեղմնավոր աշխատանքը մեր ազգային-ազատագրական շարժման մեջ:

Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդահատ քաղաքն էր Աստրախանը: Այդ տարիներին «հարկավոր էր մի լավ հասկացող մարդ ունենալ Ռուսաստանում... Արղությանն հենց այդ մարդն էր... Նրա անխուժ ջանքերով Ռուսաստանի հայոց թեմը մեծացավ նորանոր գաղթականությունների միջոցով»<sup>7</sup>: «Ռուսական կառավարությունն ալ ամեն կերպով կքաջալերեր այդ գաղթականությունները»<sup>8</sup>, մանավանդ Ղրիմից, ընձեռելով բոլոր հնարավորությունները:

1779 թվականի նոյեմբերի 14-ի ցարական հրովարտակով Ղրիմի հայ գաղթականներին տրվում է 12 հազար հեկտար հող Ռուստով քաղաքի մոտ: Հայ գաղթականները 10 տարի ժամանակով ազատվում են բոլոր հարկերից, իրավունք են ստանում պետական երաշխավորությամբ ազատ առևտուր անելու, եկեղեցի, դպրոց, մամուլ ունենալու և կառավարվելու սեփական դատարանով: Ահա այստեղ էլ Արղությանը ծավալում է առաջնորդական, վարչական մեծ գործունեություն: Նա հիմնում է Նոր Նախիջևան քաղաքը, քաղաքի մոտ՝ ս. Խաչ վանքը և հայկական հինգ գյուղեր: Ռուսաստանի «հարավային գավառներու (Ղրիմ) մեջ հայաբնակությանց փոփոխություններ՝ Սիմեոնը հորդորեցին այս կողմերն ալ Հովսեփին հանձնել»<sup>9</sup>:

<sup>5</sup> Նույնը, էջ 3203:

<sup>6</sup> Նույնը, էջ 3203:

<sup>7</sup> Լեո, նույնը, էջ 40:

<sup>8</sup> Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 3204:

<sup>9</sup> Նույնը, էջ 3205: Տես նաև Առաքել Առաքելյան, նույնը, էջ 98:

1779 թվականին Պետերբուրգում, Նևսկո անվան Աշանավոր պողոտայի վրա, մեծահարուստ և հայրենասեր Հովհաննես Լազարյանի բարեարությանը կառուցվում է տեղի հայոց առաջին եկեղեցին՝ ս. Կատարինե անունով:

Լազարյանի հրավերով<sup>10</sup> հայոց եկեղեցու օծումը կատարում է 1780 թվականի հունվարի 13-ին Հովսեփ արքեպ. Արղությանը, որպես Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի, հանդիսավոր, բացառիկ պայմաններում, ի ներկայության նաև ռուսական բարձրաստիճան հոգևորականների և պետական անձնավորությունների: Պետերբուրգում էլ սկսվում է Արղությանի հայրենասիրական-քաղաքական գործունեությունը:

**Արղությանը՝ հայ ազատագրական շարժման մեծ երախտավորը**

Երիտասարդ առաջնորդը կարողանում է իր «շուրջը բոլորել հայ գաղթականության գլխավորները, կոմս Պոտյոմկինին անձնական բարեկամությունը շահիլ, անոր միջնորդությամբ արքունյաց հետ հարաբերություն ունենալ»<sup>11</sup>: Պետերբուրգում Արղությանը հայոց եկեղեցու օծման առիթով կայսրուհուց ստանում է «զպանակ է և զխաչ պարանոցի յոյժ թանկագին» և մայիսի 9-ին արժանանում է կայսրուհու հետ տեսակցության և հաստատվում է նաև որպես Ղրիմի հայոց առաջնորդ:

Պետերբուրգում Արղությանի ամենամեծ խորհրդատուն և գործակիցն է հանդիսանում XVIII դարի վերջին 25-ամյակի մեր ազգային-ազատագրական շարժման ամենաչքի ընկնող գործիչներից մեկը՝ Հովհաննես Լազարյանը, որը որդու պես սիրում և զնահատում էր Արղությանին<sup>12</sup>:

«Հայց Արղությանը լոկ ուրիշների ցուցումները կատարող մի մեքենա չէր, ուներ իր սեփական ձեռներեցությունը, իր հալացքները: Վերին աստիճանի եռանդոտ, դյուրաշարժ, մանավանդ նվիրված իր եկեղեցու և հոտի բարեկեցության շահերին, նա գործում էր մեծ ոգևորությամբ, առաջ

<sup>10</sup> Լազարյան տոհմի մասին տես Լեո, Հայոց պատմություն, հատոր երրորդ, Երևան, 1940, էջ 822: Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 3206: Առաքել Առաքելյան, նույնը, էջ 163—164: Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 712—718:

<sup>11</sup> Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 3205:

<sup>12</sup> Նույնը, էջ 3205:



Էր տանում իր սեփական մտքերն ու ծրագրերը...» (Լեո, նույնը, էջ 823):

Իսկ Հովհաննես Լազարյանը, «այդ պերճ իշխանավորը», թեև «մի խեղճ ու ցիրուցան ազգի զավակ... իր բարձր դիրքով, իր մեծ հարստությամբ աշխատում էր ամեն կերպ օգտակար լինել իր ազգակիցներին» (Լեո, նույնը):

Այսպիսով Պետերբուրգի հայ գաղութը դառնում էր հայ-ռուսական եկեղեցական և քաղաքական հարաբերությունների հիմնական կենտրոնը:

Արդությանը Պետերբուրգում Հովհաննես Լազարյանի հետ համախորհուրդ մտածում են դիմել Եկատերինա կայսրուհուն, հայ ազատագրական շարժման հաջողության համար, խնդրելով նրա օգնությունը: Պետերբուրգում Արդությանը «զաղերս մատույց ի ձեռն ազնու աղա Յովհաննեսին Եղիազարեանց ...»:

Ռուսական արքունիքը «մանրամասն հարց ու փորձ է» անում հայոց «երկրի կացության, Էջմիածնի Աթոռի վերաբերյալ և հուսադրում, որ հայոց իշխանությունը կնորոգվի», վկայում է այս առթիվ Արդությանը:

«Կայսրուհու համար Արդությանը ծառայում է որպես լավագույն գեներ Անդրկովկասի նվաճման քաղաքականության գործում: Այդ ասպարեզում Արդությանը ցուցաբերում է լիակատար հավատարմություն ռուսական արևելյան քաղաքականության և կարողություն այդ քաղաքականությունը կենսագործելու հարցում»<sup>13</sup>:

Արդությանը այդ հարցում որպես հայրենասեր հոգևորական, սակայն, մտածում էր միայն թուրքական և պարսկական տիրապետության տակ տառապող հայության երկու հատվածների և Հայոց աշխարհի ազատագրության մասին:

«Արդությանը իր անձը նվիրել է հայ ժողովրդի դատի պաշտպանության:

Նա խորապես համոզված է եղել, որ հայ ժողովրդի ազատագրումը կարող է իրականություն դառնալ միայն ռուս գեների հատկությամբ և ցարական կառավարության հզոր աջակցությամբ»<sup>14</sup>:

Պետերբուրգում այս ուղղությամբ սկսվում են հանդիպումներն ու խորհրդակցությունները 1780-ական թվականներին, հայերի կողմից Հովհաննես Լազարյանի և Արդությանի, իսկ արքունիքի կողմից կոմս Պատյոմկինի, գեներալ, իշխան Սուվորո-

վի, իշխաններ Չուբով եղբայրների և ուրիշների միջև<sup>15</sup>:

Այս հանդիպումների ընթացքում Արդությանն ու Լազարյանը արքունիքից ստանում են «յուսադրություն յոյժ, որպես թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ»: Կոմս Պոտյոմկինի և գեներալ Սուվորովի հետ մի հանդիպման ժամանակ Արդությանն ու Լազարյանը «կհամարձակին թախանձել, նորոգել ի մեզ զմասնաւոր տէրութիւն ի Մեծն Հայաստան ի քաղաքն Երևան», որին ի պատասխան Պոտյոմկինը պայման «կդնէ, որ Էջմիածնի կաթողիկոսը, քանիօք իշխանօք խնդիր ի գործ ածիցեն»<sup>16</sup>: Իսկ Սուվորովը հավաստիացնում է, թէ «կարելի է»:

Արդությանն ու Լազարյանը պաշտոնական սույն հանդիպումներին գնում էին նախապես լիովին պատրաստված, «նրանք պատրաստել էին Հայաստանի քարտեզը, գեկուցումներ՝ հայերին և Անդրկովկասին վերաբերող զանազան հարցերի մասին» (Լեո, նույնը, էջ 876):

Հետագայում այս հանդիպումների և խորհրդակցությունների իբրև արդյունք մեզ հասել են «Հայ-ռուսական դաշինքի երկու նախագծեր», մին «ի կողմանէ հայոց», երկրորդը՝ «ի կողմանէ ռուսաց», իբրև վավերագիր, որոնք արտահատում են XVIII դարի 80-ական թվականների հայ ժողովրդի և ազգային-ազատագրական շարժումով զբաղվող մեր քաղաքական գործիչների հայրենասիրական-քաղաքական տրամադրությունները, ինչպես նաև ապագա Հայաստանի պետության անկախության և պետական սիստեմին նվիրված նրանց առաջարկները:

Դաշինքի այդ երկու նախագծերը, որոնք համարվում են «մի ամբողջություն» և երկուսն էլ ներկայացվել են հայերի անունից և երկուսն էլ գրվել են Արդությանի և Լազարյանի կողմից, ըստ Լեոյի<sup>17</sup>, «չափազանց կարևոր են մեզ համար, քանի որ պարունակում են հայ քաղաքական մտքի մի ամբողջական կառուցվածք, որ ցույց է տալիս, թե ինչ գաղափարներ ունեին այն ժամանակվա հայ գործիչները, քաղաքական ի՛նչ ձևերով էին ոգևորվում և ինչպե՛ս էին ներկայացվում իրենց վերանորոգված ու ազատված հայրենիքի կերպարնաբը»<sup>18</sup>:

<sup>15</sup> Լեո, նույնը, էջ 822—823:

<sup>16</sup> Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 8207:

<sup>17</sup> Լեո, նույնը, էջ 821:

<sup>18</sup> Նույնը, էջ 826:

<sup>13</sup> Առաքել Առաքելյան, նույնը, էջ 93:

<sup>14</sup> Նույնը, էջ 94:



ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԵՐԿՈՒՆԱԽԱԳԾԵՐԸ

Առաջինը կազմել է 1783 թվականին Հովսեփ արքեպ. Արղությանը<sup>19</sup>, Պետերբուրգում Հովհաննես Լազարյանի հետ:

Հայ-ռուսական դաշինքի մի տարբերակը, սակայն կազմվել է 1779 թվականին Մադրասում, Արղությանի ու Լազարյանի թեղադրությանը Ծահամիր Ծահամիրյանի կողմից, ըստ պատմական վերջին ուսումնասիրությունների: Այդ նախագիծը Հովսեփ արքեպ. Արղությանի և Հովհաննես Լազարյանի կողմից ներկայացվել է կաշարում ուսերեն թարգմանությանը, բայց արքունիքի կողմից չի ընդունվել իր «հանդասպետական դեմոկրատական» բովանդակության պատճառով, որով Արղությանն ու Լազարյանը «հաշվի առնելով ցարիզմի քաղաքական և տնտեսական պահանջները և տիրված պատրաստել են մի նոր նախագիծ՝ համաձայն ռուսական կառավարության միասնական ըմբռնումների և գաղափարախոսության:

1782 թվականի նախագիծը, որը կոչվում էր «Հյուսիսային ծրագիր», կրում է Հովսեփ արքեպ. Արղությանի անունը: Այն կազմվել է կաշարում գիտությանը և Պոտոմկինի թեաղությանը: «Հովսեփ արքեպ. Արղությանը նշել էր Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետության ապագա կառուցվածքի կոնկրետ պլանը» (Գ. Ա. Գալոյան, Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 130): Այդ նախագիծը բաղկանում է 18 հոդվածներից և ունի հետևյալ վերնագիրը.

«ԿԵՐՊ ԴԱՇԻՆԱԴՐՈՒԹԵԱՆ Ի ՄԷՋ ԵՐԿՈՒՆ ԱԶԳԱՑ՝ ՌՈՒՍԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ Ի ԿՈՂՄԱՆԷ ՀԱՅՈՑ»:

Ստորև ներկայացվում է Արղությանի նախագիծը.

Յօրում Ա) Նախքան զամենայն հաստատել գութ և միաբանությունից ի մէջ երկուց ազգացս՝ ըստ այնմ «Դուք ամենեքին եղբարք էք» որք ի մէջ իրեանց չունիցին ամենևին խորություն օրինաց ոչ Ռուսաց առ հաւատս և չեկեղեցիս մեր, և ոչ մեր առ նոսա, «գի ի Քրիստոս ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաւատ սիրով յաշորդեալ» (Գաղատացոց 7 գլուխ 6 համար), այլ համարել զմիմեանս միոյ և նոյնոյ հաւատոյ և

եկեղեցոյ ճմունդ հիմնեալ ի վերայ Փրկչական Բանի թէ «այսու ծանցես զձեզ թէ մի աշակերտ էք, թէ զմիմեանս սիրիցեսք»: Վասն որոյ և համարձակեալ և մուտ առնել չեկեղեցիս իրերաց, որպէս զի մի մնացել նիս խոովութեան վասնզի միապէս դասանիմք զպաշտելի սուրբ Երրորդութիւն և Մարդեղութիւն Բանին Աստուծոյ՝ Աստուած և մարդ կատարեալ, և վասն մեր չարչարեալ, զոր ի Հաւատամքի պաշտից և ի նոցանէ և ի մէջ որ հիմն քրիստոնէական ազգաց են ի վերայ կարծեցեալ դատողութեան մարդկան:

Բ) Չհետեալս դատողութեան յիրաքանչիւր ազգացս չընկալնուլ ի հաղորդութիւն իբր զպղտորիչս և զխոովարարս սիրոյ և խաղաղութեան:

Գ) Ի հաւատս զայ ոմանց տանկաց և հեթանոսաց, որ ազգի կրօն կամիցին ըմբռնել նա նովս մկրտել, թարց գայթակղութեան արգելման լիցին ըստ հաճոյից նոցա որպէս մի և նոյն քրիստոնէական օրինաց պաշտօնէի:

Դ) Կապակցութիւն երկուց թագաւորութեանց մեծ դաշամբ յախտեանականա:

Ե) Ի ինիցին ի Հայաստան չափաւոր զօրք ուսաց երանալս միակ յազգին պահպանութիւն և երկիւղի այլ թագաւորաց՝ պարսից և օսմանցոց և ի ժառանգաց թագաւորութեան մինն դնիցի ի դրունս Կայսեր:

Ձ) Հպատակութիւն մեր այնպէս եղիցի որպէս լինիւր երբեմն Յունաց և Պարսից տալով ի յարքունիս հարկացն և ի հանքաց ոսկւոյ և արծաթոյ, և ի ժամանակի պատերազմի յօգնութիւն միմեանց հասանեն որքան և հարկն պահանջեսցէ:

Է) Մինչ ամենաողորմած և օգոստոսափառ Կայսերութիւն կամի օգնութիւն առնել տարաբախտ աշխարհի մերոյ և կործանեալ թագն նորոգել, ընտրութիւն թագաւորին մերոյ կախեալ լինիցի ի կամաց նորս միայն, եթէ յազգէ մերմէ և եթէ դրան իրոյ հաւատարմաց:

Ը) Որ ոք թագաւոր կացուցի լինիցի հարց օրինօք և ի Վաղարշապատ թագաւորական քաղաքն, ի սուրբ Էջմիածին օձանիցի որպէս նախնի թագաւորքն մեր:

Թ) Զթագաւորական քաղաքն պատրաստեալ ի Վաղարշապատ կամ յԱնի թագաւորական քաղաքն կամ յայլ պատշաճաւոր տեղի յԱյրարատ գաւառի:

Ժ) Սահմանեալ կառայերն (օրտն նշան) լինի տապան Նոյի, և լենտն երեք գոյն՝ կարմիր, կանաչ և կապոյտ ըստ գունոյն աղեղան որ զկնի ջրհեղեղին տուաւ Աստուած Նոյի ի նշան հաշտութեան:

ԺԱ) Եթէ հաւատատեսցի և այլ կառայեր լինիցի յանուն սուրբ Լուսաւորչին օրտն

<sup>19</sup> Աստուր Մնացականյան, 18-րդ դարում գըրվան հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ, Երևան, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 144:



պատկեր նորա և լենոն որպէս հաճոյ լինիցի:

ԺԲ) Հաստատեցի և առաջին նշան մեր դաստատակի Քրիստոսի, զոր և առաքեաց առ Աբգար թագաւորն մեր. տացի այն յաղթանակողացն միայն կարմիր լենտի:

ԺԳ) Յարմարեցի կնիք թագաւորական ըստ սովորութեան առաջնոց թագաւորացն մերոց Արշակունեաց արծիւն միագլխի, որ նախքան զքրիստոնէութիւնն, գառն ի ժամանակի քրիստոնէութեան և երկու առիծն ի փոքր Հայաստան և նոքօք զարդարեցին հանդերձք թագաւորաց մերոց դրօշակքն և դրամքն:

ԺԴ) Յազգէ առաջնոյ նախարարացն մերոց և իշխանաց յայտնեցի որ որքան հայրենիք ունեցեալ իցէ որ վկայութեամբ հաստատեցէ վերադարձուցեալ եղիցի առ նա և պատիւ նախագահութեան ազգին պահպանեցի:

ԺԵ) Ի նորոգել իշխանութեան մերոյ մի՛ լինիցին ծառայք իշխանաց (ստրուկք) որք կարիցեն զմի մի վաճառել ի՛ նոցանէ, այլ լինիցին այնպէս որպէս յառաջ եղեալ են ի ժամանակս թագաւորաց մերոց և Օսմանցոց և Պարսից, որք թագաւորին միայն են ծառայք, և երբ թագաւորն կամիցի ուրուք իշխանի շնորհք ինչ առնել զգիտ ինչ, բնակչացն շնորհեցէ նմա, բայց շնորհընկալ իշխանն կարող է զգիտն ընդ բնակչօք ի միասին ծախել, և ոչ թէ բնակիչսն, այլ գիտն ընդ մէքոյն, այսինքն ընդ հողոյն և քոյն, զոր գործեն մարդիկք: Յոյնք յոր ծամ տիրեցին մեզ զկնի անկման թագաւորութեան Արշակունեաց՝ կամեցաւ զմեզ սեփական ծառայ իշխանաց իրեանց առնել, ուստի ազօ մեր ոչ հաճեցաւ առ նոսա, այլ մտին ընդ իշխանութեամբ Բաղդատու խալիֆային զի ազատ մնացեն:

ԺԶ) Յաղագս վաճառականութեան սահմանեցին օրէնք ի մէջ երկուց թագաւորաց և յատկացուցի մաքս իրաքանչիւր վաճառելի իրաց և տացի մեզ նաւահանգիստ ի Կարսիական ծովուն:

ԺԷ) Փախուցեալ զհնուորաց և հպատակաց սահմանել օրէնք, և վասն որպիսութար ընդունելոյ և ոռոսաց իշխանս, զազնիս և զպատուատր անձինս ազգի մերում:

ԺԸ) Ընտրութիւն Հայրապետին մերոյ լինիցի յառաջարկութեամբ թագաւորին մերոյ, որպէս յայնմ ընտրի ի բոլոր ազգէն: Որովհետև պայծառապիայլ Գրիգոր Ալեքսանդրովիչ Պօտեմկինն ի յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենողորմ կայսերութիւն է կառավարիչ գործու յայսմիկ և ազգի մերում յատուկ խնամակալ և բարեբար, զոր ինչ նա տնօրինեցէ, զի շնորհ ողորմութեան մարդասէր

Կայսերութիւն, նորին միջնորդութեամբ յառաջանայ որպէս յաթոռոյ Աստուածութեան ի հրեշտակաց առ մարդիկ:

Արդոյթանի նախագիծը կայսրութուն է ներկայացրել կոմս Պոտյոմկինը՝ որպէս հայ ժողովրդի «խնամակալ և բարեբար» խնդրելով միաժամանակ այդ նախագծի համաձայն իրեն նշանակել «հայոց թագաւոր»:

Երկրորդ պայմանագիրը, որ իբր թէ Եկատերինա կայսրութուն հրամանով գրվում է ոռոսական կողմից և հանձնվում՝ Արդոյթանին և Հովհաննես Լազարյանին, բաղկանում է 20 հոդվածներից:

Ըստ Լեոյի այս երկու վավերագրերը, ինչպէս նշվեց, մի ամբողջություն են կազմում և երկուսն էլ ներկայացվել են հայերի կողմից և երկուսն էլ գրվել են Հովսէփ Արդոյթանի և Հովհաննես Լազարյանի կողմից<sup>20</sup>:

Իսկ բազմավաստակ բանասեր Թադեոս Ավդարբեկյանը դեռևս 1922 թվականին հաստատում էր «դիպուկ փաստարկումներով, որ ոռոսական կողմին վերագրված նախագիծը ո՛չ ոռուներն են գրել և ո՛չ էլ Հովսէփ Արդոյթանն ու Հովհաննես Լազարյանը, այլ Թահամիր Թահամիրյանը և նրա ընկերները»<sup>21</sup>:

Երկրորդ պայմանագիրը, որը կոչվում է նաև «Հարավային ծրագիր», բաղկանում էր 20 հոդվածներից, ըստ հետևյալի.

Ա) Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակալ՝ ի տանէ հայոց ըստ օրինացն Հայաստանեայց:

Բ) Նախարարն Հայոց լիցի ի բուն ազգէն ի ժառանգութենէ Հայոց և դասնութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ:

Գ) Ի զօրաց կայսերութեան 2000 ձիաւորք, 2000 հետևակք և 2000 ուժքաձիգք (թեղանոթաձիգ) ըստ կարգի պետօք թօփխանայիւք, ճէպխանայիւք և կերակրովք, և այլ ամենայն հարկաւոր գործովք և պիտոյիւք, քսան ամ ժամանակօք կայսերական ծախիւք կալով մնացեն յերեսս երկրին Հայաստանեայց վասն պահպանութեան երկրին և ազգին Հայոց:

Դ) Ամենայն ամրոցք և պատրաստութիւնք զհնուց լինիցին ի ներքոյ հրամանի սպարապետին ոռոսաց, մինչև ելանել նոցա ի Հայաստան աշխարհէ:

Ե) Ի տանէն հայոց հատուցումն լինի կայսերութեան վասն ծախուց 6000 զհնուորաց և պետաց ոռոսաց իրաքանչիւր տարւոյ 60.000 թուման յուրոց 30.000 լիցի ոսկի

<sup>20</sup> Լեո, նույնը, էջ 826:

<sup>21</sup> Ասատուր Մնացականյան, նույնը, էջ 144:



և արծաթ իսկ, մնացեալ 30.000՝ հաց, միս և գինի:

Զ) Վերոյիշեալ 6000 զօրքն ռուսաց անդրէն դառնան առ կայսերութիւն իրեանց այսպիսի կերպիւ. 2000 զօրքն յետ տասն ամաց, 2000 հնգետասաներորդ տարին և 2000 քսաներորդ տարին և իրաքանչիւր ի վերոյիշեալ ժամանակաց ելանողքն լիցին չափաւորութեամբ իրաքանչիւր պաշտօնի զհնուորաց, և նմանապէս պակասեցի ի տանէն Հայոց հատուցումն վասն ծայտոց ևնցին իրաքանչիւր ելանողաց 2000 զօրաց 20.000 թուման տարեկան:

Է) Ի լրանալ քսան ամի վերոյիշեալ հատուցումն ի տանէն հայոց մեծի կայսերութեան, եթէ զբոլորն ոչ լինիցի արարեալ, որ ինչ լինի մնացեալն, այն պարտք լիցի անժխտելի ի վերայ տան հայոց: Զի հատուցէ գանձարանի կայսեր տասն և վեց տարի ժամանակաւ իրաքանչիւր տարւոյն այն պարտք ի տասն բաժնէն մեկն առանց շահի:

Ը) Ի տանէն հայոց իրաքանչիւր տարւոյ մի անգամ ընծայեցուցեալ լինի կայսեր Ռուսաց և ի նշան հնազանդութեան քսակ մտղայ գուտ ոսկի, երէք ձի, և վեց խոյ:

Թ) Տունն հայոց ծանիցէ զկայսերութիւն Ռուսաց զիր ազատիչ ի գերութենէ կալով մնացէ բարեկամ ընդ բարեկամս, և թըշնամի ընդ թշնամիս կայսեր և մեծ կայսրն սիրեացէ զբարեկամս և առեացէ զթշնամիս հայոց:

Ժ) Եթէ հրաման ի կայսերութեան ելանէ ընդունել ի տանէն հայոց զզինուորս տունն հայոց պարտական լիցի տալ մինչև ց6000 զօրս և մինևոյն կերպի ստանալ ծախս ևնցա ի կայսերութենէ, որպէս կայսերութիւն հայոց զխորդ ի վերն ի հինգերորդ պայմանին գրեալ է:

ԺԱ) Ամենայն ոք թէ կարգաւոր և թէ զհնուոր որ ընդ հաւանութեամբ կայսեր և պարտաւոր լիցի ի մէջ աշխարհի ազգի Հայոց, սոյնպէս զկարգաւորս և զզինուորս, որ յազգէն հայոց լիցի պատուելի ի մէջ ազգին Ռուսաց որպէս զազգս իրեանց:

ԺԲ) Զկերպ Աստուածապաշտութեան Ռուսաց պատուեացեն Հայք և Հայք պաշտեացեն զամենայն ըստ սովորութեան իրեանց լեկեղեցուք, և զնոյն պատուեացեն Ռուսք:

ԺԳ) Ընդարձակապէս մտցեն և ելցեն ամենայն արհեստաւորք և վաճառականք յաշխարհ: Ռուսաց, որ և իցէ ամենայն ձեռագործք աշխարհին հայոց հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին հայոց նմանապէս և հայք մտցեն և ելցեն աներկիւղ և անկասկած յաշխարհն ռուսաց, և

ինչևիցէ ձեռագործք հատուցանելով զհարկն, զմաքսն և ըստ սովորութեան և կերպի կառավարութեան ազգին ռուսաց:

ԺԴ) Քրեական մեղապարտք, փախստականք եթէ ի ռուսաց աշխարհն հայոց և ի հայոց յաշխարհն ռուսաց ընկալնուն պահպանութիւն միայն կենաց. բայց զրկեալքն ի պատուոյ և զոր ինչ իցէ, կամ փախստական եթէ լինիցի պարտաւոր ոսկուոյ, և եթէ հայոց, պարտ է նմա դառնել ըստ օրինաց աշխարհին, յորում գտանիցի անձնորս, և փախստականն իցէ եկեղեցական պարտ իցէ դարձուցանել զնա առ առաջնորդն իր:

ԺԵ) Տունն հայոց կառավարեացէ զազգ իր և աշխարհն ըստ օրինի հայոց և զոր ինչ անելին յայնմանէ դիպուած և կառավարեացին և հաստատութեան նոյնոյ օրինաց:

ԺԶ) Կայսերութիւն ռուսաց ծանիցէ զտունն հայոց իբրև զթագաւոր Հայաստանեայց, և որոց զդեպքանն մեծ, բերան հայոց, որ նստիցի ի Պետերբուրգ:

ԺԷ) Որովհետև երկրակցութիւնք և ազգաբնակչութիւնք հայոց, Աղուանից և Վրաց, ի հնոյ ժամանակէ իբրև զմի են, որ և այժմոյս սիրելի են միմեանց, վասնորոյ ի հարկաւոր ժամանակի տալով հայոց 6000 զօրս ռուսաց, ունիցին ևս ազատութիւն օգնական լինելոյ Աղուանից և Վրաց որքան կարող լինիցին:

ԺԸ) Վասն հատուցումն լինելոյ զտարեկան ծախսոց 6000 զօրաց կայսեր գրաւ լիցի չորսն ի տասն մասնէ բոլոր եկամտից Հայաստան աշխարհին, այսպէս տասնէն զչորս մասն Հայրապետին հայոց վասն ծախսոց կրօնաւորաց տնանկաց, աղքատաց և նորոգութեան վանօրէից և այլոց պիտոյից, իսկ մասն գանձարանին ընդհանուր տանն հայոց:

ԺԹ) Հատուցմունք որ ի վերայ պարտին լինի ի չորս եղանակս տարւոյն, այսինքն նախ ի Մարտի 20-րդ, Յունիսի 20-րդ, Սեպտեմբերի 20-րդ և չորրորդ Դեկտեմբերի 20:

Ի) Եթէ հանդիպեացի ինչ սխալանք, յանդիմանութիւնք կամ զանազանութիւնք ի մէջ երկուց ազգաց տէրութեանց՝ Ռուսաց և Հայոց, առ որս խոտովութիւնք բոլորովին արգելեալ է և վրէժխնդրութիւնք փակեալ, պարտ լիցի երկուց կողմանց զգանգատս և զպատասխանիս իրեանց ընծայել առ ի սպաս ամենայն փառաց արժանի կայսերն Հռովմայ, այսինքն Գերմանիոյ. և ի վերայ որոց ի նմանէ լեալ վճիռն լիցի երկու կողմանց արդարութեան. արդ եթէ հաճոյ թուեացի կամաց Հայրապետին և իշխանաց և տանուտերանց հայոց յայնմանէ տպեացի



200 հատ յամի տեսուն 1779»։ Թարգմանեաց դաշանց բանս ի դաշանց մատենէ ուսաց 1786 ամի ի Պետերբուրգ Եղիազար Ծամիրեան Նոր Ջուղայեցի։

Այս երկու դաշնադրությանց առիթով Լեոն անում է հետևյալ խորհրդածությունը.  
«Ռուսաստանը խոստումներ տվել է բայց դաշնադրության հասցնելու միամտություն երբեք ցույց չի տվել»<sup>22</sup>։

Հայ-ռուսական դաշինքի այս երկու նախագծերը մնացին թղթի վրա, «օրի մեջ կախված, և տեղ գրավել գաղափարների պատմության մեջ առանց երբեք իրական վավերագրի արժեք ունենալու»<sup>23</sup>։

1786 թվականին Արդությանը, որը սերտ նամակագրական կապի մեջ էր հնդկահայ մեծահարուստ Ծահաֆիր Ծահաֆիրյանի հետ, այս մասին գրում էր նրան, որ ռուսաց կողմը մերժում է որևէ դաշնագիր կնքել հայերի հետ.

«Մինչ մեք զքան գլուխս դաշանց շտաշադրութեանս արարաք և թարգմանեալ ետուք ի ցոյցս, այժմ պատասխանիցին թէ թագաւորք ընդ թագաւորաց կարեն դնել դաշինս. ազգի ձերում ո՛վ է թագաւորն որ համարձակիցի զդաշն խնդրել... և այսպէս մնա բանն անկատար»<sup>24</sup> (ընդգծումը՝ Ա. Հ.)։

Հայ-ռուսական հարաբերությունները շարունակվում են, Արդությանի միջնորդությամբ, Միմեոն Երևանցի կաթողիկոսի հաշորդ։ Ղուկաս Կարնեցու (1780—1799) օրոք, ռուսաց արքունիքի, պետական ու եկեղեցական բարձրաստիճան անձնավորությունների հետ։

Ղուկաս կաթողիկոսը ևս քաջալերում և հովանավորում էր Արդությանի գործունեությունը։ «Ղուկաս կաթողիկոս ինքն ալ յոր աչքերը դեպի հուսիս կդարձներ»<sup>25</sup>։

1782 թվականի աշնանը Մայր Աթոռ է այցելում, պետական կարևոր հանձնարարությամբ, Ռուսաստանի ներկայացուցիչ Հակոբ Ռայնեզը և Ղուկաս կաթողիկոսին է հանձնում Պոտյոմկինի մասնավոր նամակը՝ ընծաների հետ միասին, ինչպես նաև Արդությանի և Լազարյանի նամակ-

ները «Հայկական հարցի» ընթացքի մասին։

Հայոց կաթողիկոսի և ռուսական արքունիքի բարձրաստիճան ներկայացուցիչների միջև տեղի են ունենում կարևոր հանդիպումներ և խորհրդակցություններ հայկական հարցի վերաբերյալ։ Տրվում են մեծ խոստումներ, թե «հայ ժողովրդին ճշող զագրելի յուծը ծանր է և չար, և թե այն կխորտակվի կայսրուհու միջոցով, որի մեծ և մարդասեր սիրտը պաշտպանելու է ճրճշված Հայաստանը և վերականգնելու՝ այս հոշակավոր ժողովուրդը»։

Ղուկաս կաթողիկոսը նամակներ էր գրում արքունիք, աղոթում ռուսաց զենքի հաջողության համար և կայսրուհուն անվանում «մերոյ խաչապսակ և գթառատ մեծ մայր»<sup>26</sup>։

Ղուկաս կաթողիկոսը հավատում է, որ Արդությանն ու Լազարյանը ռուսական արքունիքի հետ բանակցություններ են վարում հայկական հարցի մասին, ի՛ր թելադրությամբ և հովանավորությամբ։

Պատրաստվում էր ռուսական արշավանքը դեպի Անդրկովկաս։ Արքունիքը հուսադրում էր Ղարաբաղի հայությանն ու մեկիքներին, որոնք ապրում էին խանդավառ ու հուսալից օրեր։

Գանձասարում 1783 թվականի մարտ ամսին գումարվում է գաղտնի ժողով, որին մասնակցում են Հովհաննես կաթողիկոսը Գանձասարի իր վեց եպիսկոպոսներով և վեց մեկիքներով և աղերսագիր են ուղարկում կայսրուհուն, «որի մեջ խնդրում էին փութացնել ազատարար արշավանքը։ Ղուկաս կաթողիկոսն էլ իր ստորագրությունն է դնում աղերսագրի տակ» (Լեո, նույնը, էջ 843)։ Բուրդ դիմումները Արդությանի միջոցով էին լինում... վճռված էր Ղարաբաղից կազմել մի հայկական իշխանություն<sup>27</sup>։ Այս մասին կոմս Պոտյոմկինը զեկուցում է կայսրուհուն. «այսպիսով կվերանորոգվի մի քոհստոնեական պետություն՝ համաձայն ձեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մեկիքներին»<sup>28</sup>։

Ռուսական արշավանքը դեպի Անդրկովկաս, սակայն զանազան պատճառներով հետաձգվում է։ Անդրկովկասում քաղաքական հանգամանքները փոփոխվում են։ Սակայն Արդությանը «հավատքով և նորակնկալություններով» լցված շարունակում էր «վերին աստիճանի իր եռանդուն գոր-

<sup>22</sup> Լեո, նույնը, էջ 826։

<sup>23</sup> Նույնը, էջ 826։ Տես նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, նույնը, էջ 718։

<sup>24</sup> Նամակագրութիւնք Յովսէփ արքեպ. Արդութեանի, կենսագրություն, էջմիածնի մատենադարան, թիվ 274, ինչպես հաստատում է Լեոն, նույնը, էջ 826։

<sup>25</sup> Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 3221։

<sup>26</sup> Լեո, նույնը, էջ 842։

<sup>27</sup> Նույնը, էջ 837—838։

<sup>28</sup> Նույնը, էջ 838։



ծունեությունը<sup>29</sup>, թեև 1785-ի վերջերին նա Ե. Ծահաճիբյանին՝ Մադրաս գրում էր. «Անբախտ ազգի մերոյ բանն մնայ տակաւին անկատար... Աստուած եղիցի օգնական բանից ազգին մերոյ տառապելոց»...

1784 թվականի սեպտեմբերին Արդոյանը կոմս Պոտյոմկինին գրում էր. «Նրանց (հայերին) ազատություն պատճառեցեք, ...եղեք պատճառ որ մեծ կայսրուհու սրբազնագույն պատկերը դրոշմվի Արարատի սրտում իբրև հուշարձան ամբողջ աշխարհի համար և թող անդադար բարբառեն բոլոր ազգերը, թե սա է հայերի փրկիչը...»<sup>30</sup>:

1796 թվականին ի վերջո սկսվում է ռուսական արշավանքը դեպի Անդրկովկաս: Արդոյանը արշավող բանակի մեջ էր, այն հույսով, թե «այս անգամ արդեն կիրականանա, գոնե, Արևելյան Հայաստանի ազատագրությունը և կվերականգնվի հայկական պետությունը»<sup>31</sup>:

«1796 թվականի նոյեմբերին մահացավ Եկատերինա Երկրորդը, և գահ բարձրացավ Պավել Առաջինը, ...որ հրամայեց դադարեցնել ռուսական զորքերի առաջխաղացումը և ետ վերադառնալ Կովկաս»<sup>32</sup>:

Պավել Առաջինի օրով էլ Արդոյանը շարունակում էր «մեծ ծառայություններ մատուցել իր ազգին»: Ստեղծված այս իրադրության մեջ աշխուժացան պարսիկ խաները, և մանավանդ Աղա Մահմեդ խանը: Նոր արշավանքներ կազմակերպեցին դեպի Անդրկովկաս և «փաստորեն վերականգնեցին պարսկական կենտրոնական իշխանության տիրապետությունը Անդրկովկասի խանությունների վրա...

Անդրկովկասի փճակը շարունակեց մնալ անփոփոխ մինչև 19-րդ դ. սկիզբը, երբ Ռուսաստանը վճռականորեն ձեռնամուխ եղավ այդ երկրամասը իրեն միացնելու գործին»<sup>33</sup>:

1799 թվականի դեկտեմբերի 28-ին մահանում էր Ղուկաս կաթողիկոսը: 1800 թվականի ասրիլին Հովսեփ արքեպիսկոպոս Արդոյանն ընտրվում էր կաթողիկոս: Պետերբուրգ, Մոսկվա, Նոր Նախիջևան և ապա Աստրախան, Ղզլար, Մոզդոկ այցելելուց հետո, նա 1801 թվականի փետրվարին ժամանում էր Թիֆլիս «արտակարգ փառավորությամբ և հանդիսական

ցույցերով և շքեղ հանդիսավեհությամբ»<sup>34</sup>:

Արդոյանը մարտի 9-ին հանկարծամահ է լինում Թիֆլիսում, 58 տարեկան հասակում, թեև «տկարացած և վատացած կազմ չունէր, տարիքով առույգ և մարմնով առողջ, կրնար իրեն երկարատև պաշտոնավարություն ալ խոստանալ, և հավանաբար նշանավոր և արդյունավոր գործունեություն ալ ունենալ, որուն երաշխավորություն կրնար ընծայել՝ Ռուսաստանի առաջնորդության 29 տարիներու մեջ ցուցած արդյունավորությունը: Նա իրեն համար ազդեցիկ դիրք մը կազմած էր, պաշտոնական և արքունական շրջանակներու մեջ բարձր տեղ մը գրաված, անձամբ և ընտանոցք հառաչապահ ազնվականության բարձրացած, հայության և հայաբնակչության համար երախտիքներ ընծայած, եկեղեցիներ և վանքեր, և նույն իսկ նոր հայաբնակներ հաստատած, մեծ քախտի և մեծ հարստության տիրացած, և անոնցմով օգտակար և բարեգործ ձեռնարկներ կատարած. մեկ խոսքով հասարակ դասակարգել վեր անձնավորություն մը դարձած էր, թե ձիրքերու և թե արդյունքներու տեսակետեն»<sup>35</sup>:

Արդոյանը թեև ընտրյալ կաթողիկոս, բայց կանոնական տեսակետից չի անցել կաթողիկոսական գավազանագրքի մեջ, որովհետև ինչպես Օրմանյան սրբազանը նշում է, «ընտրյալը օծյալ մը չէ և օծյալ չեղողը կաթողիկոս չէ, այս է մեր եկեղեցական կանոնը և Մաշտոցին կարգադրությունը»<sup>36</sup>: «Լոկ անվամբ միայն կոչվեց կաթողիկոս Հայոց»<sup>37</sup> (ընդգծումը՝ Ա. Հ.):

Այս հանգամանքը պատճառ չի եղել սակայն, որ Լեոն մի առանձին ուսումնասիրություն հրատարակի «Հովսեփ կաթողիկոս Արդոյան» վերնագրով (Թիֆլիս, 1902):

Սույն հոդվածի նպատակից դուրս է խոսել Հովսեփի արքեպ. Արդոյանի մատենագրական, վարչական-առաջնորդական և հրատարակչական գործունեության վրա:

Սակայն «Արդոյանի գործունեության մեջ նշանակալից տեղ է գրավում գրագրությունը, սփյուռքում մի անկյուն չէր մնացել, որտեղ հայեր ապրելիս լինեին և Արդոյանը նրանց հետ գրագրության մեջ մտած չլինեք»<sup>38</sup>:

<sup>29</sup> Նույնը, էջ 849:

<sup>30</sup> Նույնը, էջ 849:

<sup>31</sup> Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 721:

<sup>32</sup> Նույնը, էջ 721:

<sup>33</sup> Նույնը, էջ 721:

<sup>34</sup> Մադաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, նույնը, էջ 3268:

<sup>35</sup> Նույնը, էջ 3276:

<sup>36</sup> Նույնը, էջ 3278:

<sup>37</sup> Հր. Աճառյան, նույնը, էջ 700:

<sup>38</sup> Ծեմարանական, Հովսեփ Արդոյան, «Էջմիածին» ամսագիր, 1949, հունվար-փետրվար, էջ 49: Տես նաև Գևորգյան Պարզև վարդապետ, Հովսեփ



«Հովսեփ կաթողիկոսի մասին գրավոր հիշատակարաններ շատ կան... բայց պետք է խոստովանել, որ այդ տպագրական աղբյուրները շատ քիչ են այդ նշանավոր հայի ամբողջ պատկերը նկարելու համար: Պաշտոնական, չոր ու ցամաք, միակողմանի են հրատարակում եղած տեղեկությունները: Արդությանին մենք դեռ չենք ճանաչում: Եվ կճանաչենք միայն այն ժամանակ, երբ կհրատարակվեն նրա բոլոր գրագրությունները»<sup>39</sup>:

Արդությանի աճյունը Թիֆլիսից փոխադրվում է Մայր Աթոռ և մարտի 9-ին ամփոփվում է, ըստ իր ցանկության, իր մեծ ուսուցչի և վարդապետի՝ Միսեոն Երևանցու շիրմի կողքին, ս. Գայանե վանքի կաթողիկոսական հանգստարանում, վանքի արևմտյան գավթի հարավային կողմում:

Արդությանի տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

«Արդութեան քաջ արհիւն,  
Տէր Յովսէփի պանծալին.  
Կայսրընտիր արժանին.

արքեպիսկոպոս Արդությանի երկու նամակները, «Էջմիածին» ամսագիր, 1962, № 1, էջ 32—39, Նորահայտ վավերագրեր Երուսաղեմի հայոց պատրիարքարանի և ուսաց արքունիքի փոխարարությունների մասին, «Էջմիածին» ամսագիր, 1970, № 4, էջ 26—32:

<sup>39</sup> Լեւոն, Յովսեփ կաթողիկոս Արդութեան, Թիֆլիս, 1902, «Յատազարան»:

Մեծ գահիս Միածնին,  
Այլ տապար ժանտ մահուն,  
Ի սա իսկ հար իսկոյն.  
Որոյ կամք կալ յաթոռ,  
Եմուտ աստ ի քուն խոր:  
1801, յ-9 մարտի»:

Ահա այսպես է վերջանում ԺԸ դարի Մայր Աթոռի մեծավաստակ միաբանի և մեր ազգային-ազատագրական շարժման խանդավառ գործչի կյանքը:


«Բազմակողմանի, զարմանալի եռանդուն էր այս հոգևորականի երկարատև գործունեությունը: Նա մի հասարակ առաջնորդ չէր, լոկ եկեղեցական գործերով հետաքրքրվող, այլ աչքի ընկնող քաղաքական գործիչ:

ԺԸ դարում մենք ունեինք մի քանի հոգևորական քաղաքագետներ, այսպես են՝ Օրբի ընկեր Մինաս վարդապետը և Գանձասարի Եսայի կաթողիկոսը: Սակայն Հովսեփ Արդությանը այս երկուսից էլ շատ նշանավոր հանդիսացավ, և եթե կան մեր հոգևորականության մեջ այնպիսի քաղաքագետներ, որոնք կարող են Արդությանի արժանավոր դասակիցները հանդիսանալ, դրանք միայն երկու հոգի են, ԺԹ դարում՝ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը և Ներսես Վարժապետյան պատրիարքը»<sup>40</sup>:

(Շարունակելի)

<sup>40</sup> Նույնը, էջ 18:






## ՎԱՐԱԶԴԻԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Մայր Աթոռին ստղնիներ ճարտարապետական  
հանձնաժողովի նախագահ)

## ՏԱՂԱՆԴԱՇԱՏ ՈՒ ՀԱՅՐԵՆԱՇՈՒՆՉ

(Ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի ծննդյան 70-ամյակի  
առթիվ)



Այս տարվա սեպտեմբերի 17-ին կլրանա նրա 70 տարին: Սակայն նա կյանքից հեռացավ 5 տարի առաջ, երբ տակավին գտնվում էր իր ստեղծագործական ուժերի հասուն և առավել արգասավոր շրջանում, ուներ բազմաթիվ ծրագրեր, որոնք այդպես էլ մնացին անկատար...

Հայտնի անուն է Ռաֆայել Իսրայելյանը սովետահայ ճարտարապետների գերդաստանում: Մեծ է նրա ավանդը պատմական իր վերածնունդն ապրող հայ ժողովրդի նորոգ ճարտարապետության մեջ: Ընդհանուր և հայաշունչ իր բազմաթիվ ու բազմապիսի գործերով նա դրսևորեց իրեն որպես ինքնատիպ, քարի երաժշտության անկրկնելի վարպետ:

Ավելի քան քառասուն տարի առաջ, 1936 թ., նա Հայաստան եկավ իր արվեստով ծառայելու հարազատ ժողովրդին: Սկսնակ ճարտարապետի աշխարհըմբռնմանը առանձնապես ներդաշնակում էր սովետահայ ճարտարապետության հիմնադիր Ալ. Թամանյանի ստեղծագործական մեթոդը: Դառնալով նրա հետևողական շարունակողն ու զարգացնողը, Ռաֆայել Իսրայելյանը, շնորհիվ իր շողջողուն տաղանդի ու հայ ճարտարապետության հարուստ



գանձարանի վերաիմաստավորման բարձր կարողության, կարողացավ ստեղծել ազգային ինքնատիպության վառ արտահայտության դրոշմը կրող բարձրարվեստ երկեր:

րայելյանին տաղանդավոր կերպով, Ֆիրավի նորարարորեն վերաիմաստավորել ժողովրդի բազմահարուստ ավանդույթները, զարգացնել ու կատարելագործել դրանք, իր կերտած երկերում ներդաշնակորեն



Մայր տաճարի Ավագ սեղանը


Ստեղծագործական հարուստ երևակայությունը, նյութի և ձևի նուրբ զգացողությունը՝ ճարտարապետին խիստ անհրաժեշտ այդ հատկությունները, որոնցով նա օժտված էր շոալյորեն, օգնեցին Ռաֆայել Իս-

միահյուսելով ավանդականն ու արդիականը: Նրա ստեղծագործության ակտիվ մեթոդին խորապես խորթ էր սպառողական վերաբերմունքը հանդեպ անցյալի ժառանգությանը, ոճամոլությունը: Նա չէր սիրում



ընթանալ տրորված ճանապարհով, կրկնել նախնիներին, ժամանակակիցներին, նույնիսկ՝ իրեն: Հայ ժողովրդի անապատ ու հարուստ ճարտարապետական ժառանգությու-

երանգը, ստանում էապես նոր մեկնաբանում: Իր արվեստում նա անդադրում մտածում էր հայերեն, ստեղծում գործեր, որոնք հարազատ են հայրենի լեռնաշխարհին,



Նահատակաց հուշարձան. ս. Էջմիածին

նը վերարտադրվելով Ռաֆայել Իսրայելյանի շեշտված անհատականության ու գեղարվեստական ըմբռումների բովով, մըշտապես պահպանում էր ազգային ցայտուն


նրա հողին ու ջրին, բազմերանգ քարանույթին, համապատասխանում են ժողովրդի գեղարվեստական պատկերացումների:



Այդ սկզբունքը նրա հաստատուն հավատամքն էր, ուղեկիցը, երբ, տակավին երիտասարդ, ստեղծագործական կյանք մտավ: Անդալանն այդ սկզբունքներին, նա շարունակեց ստեղծագործել բոլոր տարիներին, յուրաքանչյուր նոր երկում կատարելագործելով ու ավելի բարձր մակարդակի հասցնելով իր վարպետությունը:

ստեղծագործական հավատամքի դրոշմը:

Տաղանդաշատ ճարտարապետի ստեղծագործությունը առավել լայն դրսևորումներ ունեցավ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Սովետական հայրենասիրության թեման իր մարմնավորումը գտավ այն աղբյուր-հուշարձաններում, որ համաժողովրդական նախաձեռնությամբ կառուց-



«Կաթնաղբյուր». ս. Էջմիածին

Ստեղծագործելը Ռաֆայել Իսրայելյանի տարերքն էր, անհատնում սպահանջը: Ըստ իր նախասիրությունների էր նա ընտրում թեմաներ, յուրաքանչյուրի համար իր ստեղծագործական անսպառ շտեմարանից գլտնում դրանց մարմնավորման նոր ձևեր ու արտահայտչամիջոցներ, բոլորն էլ համապատասխան ավանդական շինանյութին՝ քարին, բոլորն էլ հայաշունչ, թարմ ու հետաքրքիր:

Շատ չեն Իսրայելյանի նախապատերազմյան շրջանի գործերը: «Արարատ» տրեստի գինեգործարանի առաջին հերթը, ծերանոցի շենքը Նոր-Խարբերդում, բնակելի տուն Երևանում: Սակայն դրանք արդեն պարզորոշ կերպով կրում են նրա


վում էին հանրապետության շատ գյուղերում՝ գոհված հայ ռազմիկների պայծառ հիշատակը հավերժացնելու համար: Նրա նախագծերով հանրապետության բազմաթիվ գյուղերում և շրջանային կենտրոններում կառուցվեցին աղբյուր-հուշարձաններ՝ բազմազան իրենց հորինվածքային լուծմամբ, սակայն յուրաքանչյուրը դրանցից հետաքրքիր ու ավարտուն, ճարտարապետական փոքր ձևերի անզուգական օրինակ:

Պատերազմի տարիներին նա ստեղծում է նաև մեծ կտավի գործեր: Առաջինը դրանցից «Արարատ» տրեստի գինու գործարանի շենքի շարունակությունն է: Արտադրական բնույթի այս կառուցվածքի հզոր և խուլ պատերը պլաստիկական



մշակման ենթացիկում միջոցով հեղինակը, քաղաքաշինական նկատառումներով, նրան ճարտարապետական ակտիվ դեր է հաղորդել: Պահպանելով հանդերձ ոճական միասնությունը նախորդի հետ, նա կիրառել է պլաստիկական նոր ձևեր ու մանրամասներ, թեմատիկ քանդակ:

ձևավորումն ու բնակելի մենասները, Հրազդան գետի գեղատեսիլ կիրճին ներդաշնակված ջրանցույցը և այլն: Հեղինակային մի խմբի կազմում (որը գլխավորում էր պրոֆ. Ս. Սաֆարյանը) նա մասնակցեց Լենինի հրապարակում կառուցված կառավարական երկրորդ շենքի նախագծմանը:



«Հայկաշեն» հայրապետական ամստանոցը. Բյուրական

Ռաֆայել Իսրայելյանի հասուն վարպետության կնիքն է կրում «Հաղթանակ» մոնումենտը, որը կոչված է ճարտարապետության ու քանդակի միջոցով պանծացնել սովետական ժողովրդի պատմական մեծ հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ ու հայ ժողովրդի մասնակցությունը դրանում: Այդ նշանակալից երկն արժանացավ ՍՍՀՄ Պետական մրցանակի: Այնուհետև, ետպատերազմյան տարիներին, բազմաքանքար Իսրայելյանի ինքնատիպ տաղանդը բացահայտվեց ու վառ արտահայտություններ ստացավ տարբեր բնույթի շենքերում: Դրանց թվին են պատկանում Օշականի գինեգործարանի համալիրը, Երևանի այլումինի գործարանի արտադրական շենքի ճարտարապետական

Հավատարիմ հորինվածքի բազմազանությանը և անկրկնելիությանը, ինչպես նաև ազգային ավանդույթների ստեղծագործական վերարտադրության իր սկզբունքին, հետագա տարիներին Ռ. Իսրայելյանն ստեղծում է հատակագծմամբ ու ծավալատարածական լուծումներով իրարից տարբեր մի քանի շենքեր ու կոթողներ: Երևանի Կիրովի անվան գործարանի պանսիոնատի շենքում (Արզակյան), «Արգաիլ» ռեստորանում (Երևան), լաբորատոր համալիրում ու հանգստի տնում (Նոր Ամբերդ) ու «Ծովհնար» ռեստորանում (Հրազդան քաղաքի մոտի լճափին) հեղինակը խնդիր է դրել ու հաջողությամբ լուծել ճարտարապետական երկի ու բնական միջավայրի ներդաշնակ կապը:



Կոթողային հուշարձանները՝ Չարենցի կամարը Գեղարդիում (Գառնի տանող ճանապարհին), հուշարձաններ Գեղարդավանքի ճանապարհին ու Զվարթնոցի մուտքի մոտ, աղբյուր-հուշարձան Երևանի օդակամուսնու գրասպասում, Բարեկամության կոթողը Քանաքեռում, զոհված հայ ռազմիկների հուշարձանները Կամոյում, Եղեգնաձորում, Ապարանում և այլն, Մուսա լեռան մարտերի հերոս Եսայի Յաղոբյանի մահարձանը և շատ ուրիշ գործեր վկայում են Ռ. Իսրայելյանի ստեղծագործական մեծ հնարավորությունների, ճրատարապետության մեջ սինթետիկ միջոցների՝ զարդարված տի ու քանդակի (գլխավորապես Ա. Հարությունյանի) կիրառության բարձր վարպետության մասին:

Ռաֆայել Իսրայելյանին և նրան հեղինակակից քանդակագործներին (Ա. Հարությունյան, Ս. Մանասյան, Ա. Ծահիճյան) համաժողովրդական ճանաչում բերեց Սարդարապատի հերոսամարտի պատվին կանգնեցրած հուշակառույցը, որը ճարտարապետության ու քանդակի լեզվով մարմնավորում է հայ ժողովրդի հերոսական սխրանքը՝ հանուն գոյատևման, հանուն լուսավոր ապագայի:

Լայն էր Ռաֆայել Իսրայելյանի ստեղծագործական թոփչքի շրջանակը, ընդարձակ էին նրա շողշողուն տաղանդի փայլատակումները, հետաքրքրությունների սահմանները:

Երկար տարիներ նա մանկավարժական աշխատանք է կատարել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, մասնակցելով երիտասարդ ճարտարապետների մի քանի սերունդ դաստիարակելու գործին: Որոշ տարիներ աշխատելով Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում, հաջողությամբ իր ուժերը փորձեց կիրառական արվեստի բնագավառում՝ ստեղծելով նույնչափ հայաշունչ ու բարձրարվեստ գործեր կերամիկայից ու մետաղից: Օժտված նկարչական բարձր ձիրքով, նա ստեղծեց հայրենի բնապատկերների ու ճարտարապետական հուշարձանների ջրաներկ նկարների մի հարուստ հավաքածու, գրքի գրաֆիկական ձևավորման ուղագրավ գործեր: Սուր էր ու դիպուկ շնորհաշատ ճարտարապետի ոչ միայն մատիտն ու վրձինը, այլև գրիչը: Նա հանդիսանում է պրոֆեսիոնալ հմտությամբ շարադրված գիտական, մասնագիտական, հրապարակախոսական շատ հողվածների ու գեղարվեստական ակնարկների հեղինակ:

Իսրայելյան-ճարտարապետը, արվեստագետը, գիտնականն ու մանկավարժը միևնույն ժամանակ օժտված էր քաղաքացիա-

կան բարձր գիտակցությամբ, զուգակցում էր իր անձի մեջ ստեղծագործողին ու հայրենասերին: Նա ակտիվ մասնակցում էր հուշարձանների պահպանության ու վերականգնման ուղղությամբ իրականացվող միջոցառումներին, ճարտարապետության պետական մարմիններում ու ստեղծագործական կազմակերպություններում տեղի ունեցող քննարկումներին, իր գրավոր ու բանավոր կրթոս ելույթներով նպատակամղում արվեստակից ընկերներին ճարտարապետական արվեստի քաղաքացիական ու գեղարվեստական առաքելության սկզբունքների ճիշտ պահպանմանն ու զարգացմանը:

Թերի կլիմի բազմաբանքար ճարտարապետի ստեղծագործական կենսագրությունը, եթե չնշվի այն մեծ ներդրումը, որ նա կատարեց որպես ս. Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնաժողովի անդամ՝ ի նպաստ հիմնվորց տաճարների վերաշինության ու բարեզարդման, Վազգեն Ա կաթողիկոսի շինարարական ծրագրերի իրականացման:

Ծորջ 18 տարի (սկսած 1956 թվականից մինչև իր մահը՝ 1972 թ.) Ռաֆայել Իսրայելյանը գործունե մասնակցություն ունեցավ հանձնաժողովի աշխատանքներին, կազմեց 20-ից ավելի բազմաբնույթ նախագծեր, որոնց մեծ մասը իրականացում ստացան: Դրանց թվին են պատկանում ս. Էջմիածնի Մայր տաճարի Ավագ խորանի մարմարակերտ սեղանը և Իջման սեղանի զարդաքանդակ դրվագումը, դասը առյանից անջատող մարմարյա ճաղերն ու բրոնզաձույլ դռները, նահատակաց հուշարձանը Մայրավանքի քակում (քանդակագործ Ա. Հարությունյանի հեղինակակցությամբ), Մայր տաճարի, Գեղարդավանքի, ս. Հռիփսիմե և ս. Գայանե եկեղեցիների քակումը կառուցված աղբյուր-հուշարձանները, Ավագ սեղանները ս. Հռիփսիմեի տաճարում և Երևանի ս. Զորավոր եկեղեցում:

Նրա մշակած կարևոր նախագծերից առանձնապես հիշատակելի են Նյու Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցու նախագիծը (որը որոշ փոփոխություններով իրականացվեց տեղում), Երևանի ս. Սարգիս եկեղեցու հիմնական վերակառուցման նախագիծը (ճարտ. Ա. Գալիկյանի հեղինակակցությամբ) և, վերջապես, Բյուրականի «Հայկաշեն» ամառանոցի նախագիծը:


Մեկ ուրիշ առիթի թողնելով վերը հիշատակված գործերի մասնագիտական արժեքավորումը (այդ հատուկ լուսաբանման առարկա դարձնելու մտադրությամբ), կուզենայինք բավարարվել նշելով, որ ս. Էջմիածնի Մայր Աթոռի համար կատարված





Ս. Սարգիս եկեղեցի. Երևան





Ս. Սարգիս եկեղեցու կամարագաղղ մուտքը. Երևան  
(Քանդակագործ՝ Արտաշես Հովսեփյան)



նրա գործերը<sup>1</sup>, ընդհանուր առմամբ, նույն-  
քան հայաշունչ են ու կրում են բարձր վար-  
պետության կնիքը, ինչը հատուկ է նրա  
ողջ ստեղծագործությանը:

ՍՍՀՄ ժողովրդական ճարտարապետ և  
պետական մրցանակի դափնեկիր, Հայկա-  
կան ՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ  
և վաստակավոր ճարտարապետ Ռաֆայել  
Իսրայելյանը սովետահայ ճարտարապե-  
տության և արվեստի մեջ կատարած իր  
ծանրակշիռ ավանդով դարձավ դրանց մեծ  
երախտավորներից մեկը, մեծատաղանդ  
ստեղծագործությամբ առհավետ անմահաց-  
րեց իր անունը, բարի հիշատակներ թողնե-  
լով նաև ս. Էջմիածնի Մայր Աթոռի վերա-  
շինական գործերում:

Ց Ո Ւ Ց Ա Կ

ԾԱՐՏ. ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ  
ԿՈՂՄԻՑ Ա. ԷԶՄԻԱՇՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ  
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի Ավագ  
խորանի մարմարակերտ սեղանը  
(1958):
2. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի դասը  
ատյանից անջատող մարմարյա ճաղե-  
րը և բրոնզաձուլյ դռները (1959):
3. Ա. Էջմիածնի Մայր տաճարի Իջման  
նոր մարմարակերտ սեղանի զարդա-  
քանդակումը և մարմարյա խաչը  
(1962):
4. Նոր Վեհարանի գահասրահի գահի եր-  
կու կողմերի և արևելյան պատի լուսա-  
մուտների միջև ամփոփված շրջանաձև  
հարթաքանդակները (գահասրահի ընդ-  
հանուր ձևավորման հեղինակ՝ Ա. Գա-  
լիկյան, գահինը՝ Բ. Արզումանյան,  
1963):


<sup>1</sup> Ստորև բերվում է լրիվ ցուցակը՝ կազմված  
Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանի  
կողմից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. փակագծերում բերված են  
իրականացման տարեթվերը:

5. Աղբյուր-հուշարձան ս. Հոփիսիմե եկե-  
ղեցու բակում (1958):
6. Ա. Հոփիսիմե եկեղեցու Ավագ խորանի  
սեղանը (1960):
7. Ա. Հոփիսիմե եկեղեցու մետաղակու-  
ջահը (1967):
8. Ա. Էջմիածնի բակի «Կաթնաղբյուրը»  
(1967):
9. Աղբյուր-հուշարձան ս. Գայանե եկեղե-  
ցու բակում (1972):
10. Նահատակաց հուշարձան ս. Էջմիածնի  
Մայր տաճարի բակում. հեղինակակից՝  
քանդակագործ Ա. Հարությունյան  
(1965):
11. Երևանի ս. Ջորավոր եկեղեցու Ավագ  
խորանի սեղանը (1958):
12. Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղե-  
ցու դամբարանից դեպի եկեղեցի նայող  
պատուհանի բրոնզաձուլյ ցանցաճաղը  
(1961):
13. Նյու Յորքի ս. Վարդան եկեղեցու Լս-  
քիզային նախագիծը (նախագծված է  
1961-ի փետրվարի 15-ին, իրականաց-  
ված է փոփոխություններով):
14. Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղե-  
ցու երկաթակուռ ջահը (1968):
15. «Հայկաշեն» ամառանոցը Բյուրակա-  
նում (1969—1974 թթ.):
16. Երևանի ս. Սարգիս եկեղեցու արտա-  
քին ճարտարապետական ձևավորման  
նախագիծ (1969, չի իրականացվել):
17. Երևանի ս. Սարգիս եկեղեցու արմա-  
տական վերակառուցումը. հեղինակա-  
կիցներ՝ ճարտ. Ա. Գալիկյան, կոնս-  
տրուկտոր Ռ. Մանուկյան (1970—  
1976 թթ.):
18. Աղբյուր-հուշարձան ս. Գեղարդ վանքի  
բակում (1958):
19. Երևանի ս. Հովհաննես եկեղեցու վե-  
րակառուցման նախագիծ (1973, չի  
իրականացված):
20. Միլանի հայկական եկեղեցու նախագիծ  
(չի իրականացված):
21. Մոնտեվիդեոյի հայկական եկեղեցու  
նախագիծ. Վ. Հարությունյանի հեղի-  
նակակցությամբ (չի իրականացված):







ԱՎԵՏԻՍ ԱՔԵՂԱ ՄԱՆԴԱԼՅԱՆ

### ՇՈՒՂՐ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՐՄԻՐ ՎՃՆՔԸ\*

Կիլիկիայի Հայկական Թագավորության եկեղեցական կյանքում Շուղը անապատի Կարմիր վանքը կարևոր դեր է կատարել, որպես կաթողիկոսական աթոռանիստ և մանկավարժական կենտրոն՝ լինելով ժամանակի ամենահայտնի վանական դպրոցներից մեկը:

Այս վանքի կամարների ներքո դաստիարակվել է և հոգեկան սննդով լցվել Սարգիս վրդ. Շնորհալին՝ հեղինակն ավարտաճառիս համար նյութ դարձած «Մեկնություն եօթանց թղթոց կաթողիկեայց» վերնագիրը կրող հայտնի գործի:

ԺՍ. դարի սկզբում հայերը դիմում են դեպի արևմուտք՝ հույների և սելջուկների հալածանքներից ազատվելու համար: Դատարկվում է այսպես Մեծ Հայաստանը, բայց շուտով սկսում է ծաղկել Կիլիկիայում հայկական մի նոր թագավորություն, որը, գոյատևելով 1080 թվականից մինչև 1375

թվականը, բարձրացնում է հայ ժողովրդի քաղաքական հեղինակությունը՝ անմիջական հարաբերության մեջ մտնելով Եվրոպայի հետ: Այս հարաբերությունները նպաստավոր ազդեցություն են գործում նաև հայ մշակույթի վրա:

Կիլիկիայի հայ մշակույթը պահպանում է իր ինքնուրույնությունը և շարունակում իր գաղափարական ընթացքը՝ տեղական առանձնահատկությունների ու պայմանների համաձայն: «Կիլիկիան, որպես Հայաստանի անբաժանելի մի մասը, շարունակեց պահպանել ու զարգացնել հայոց մշակույթը, գիրն ու գրականությունը, երգն ու երաժշտությունը, նկարչությունն ու մանրանկարչությունը և այլ բազմաթիվ գիտություններ», որովհետև «Մայր երկրից հեռու լինելով հանդերձ՝ չկտրվեց նրանից, չկորցրեց իր ժողովրդի դարավոր ավանդությունները, կենցաղն ու սովորությունները, գիրն ու գրականությունը, գիտությունն ու արվեստը»:

Մշակութային, կրթական, կրոնական-վանական կապերը Կիլիկիո և Արևելյան

\* «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հոգևոր անձարանի 1977 թվականի շրջանավարտ տ. Ավետիս արեղա Մանդալյանի (նախկին Սորին սարկավագ) «Սարգիս վրդ. Շնորհալին և նրա՝ ս. Հովհաննես առաքյալի կաթողիկե երեք թղթերի մեկնությունը» սարկավագական ավարտաճառից մի հատված:

Ս. Խ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (Ժ—ԺԵ դարեր), Երևան, 1958, էջ 320:



Հայաստանի միջև նպաստավոր դեր խաղացին Կիլիկիայի հայ մշակույթի զարգացման ընթացքում, զարգացում, որը տեղի է ունենում նորից վանականների ստեղծագործող մտքի շնորհիվ:

Հայտնի են մանավանդ Սև լեռան անապատներում գտնվող նորաշեն վանքերը, որոնք մնում են մեր պատմության մեջ հայտնի մշակույթի ու կրթության երկարատև ծիսացող, ամենամեծ օջախներ բուն Հայաստանից հեռու:

Սև լեռ ընդհանուր առմամբ էր՝ Կիլիկիայի և Ասորիքի միջև հարավից դեպի հյուսիս ձգվող Ամանու լեռնաշղթայի այն ճյուղերի, որոնք խառնվում էին Կիլիկիայի հյուսիսային կողմերով դեպի արևելք պարզված Տավրոս մեծ լեռնաշղթայի ճյուղերի հետ<sup>2</sup>:

Այս լեռներում վաղուց ապրում էին հույն և ասորի կրոնավորներ ու ճգնավորներ: ԺԱ դարի երկրորդ կեսում սկսում են հայտնի դառնալ նաև Սև լեռան հայկական վանքերը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի (1065—1105) ջանքերով հիմնված: Եգիպտոսից վերադառնալիս՝ Գրիգոր վկայասերը

«Զօթևանօք զանց արարեալ,  
Մինչ ի Տարոս լեառն հասեալ,  
Անդ որ սրբոցն բնակք եղեալ...  
Ի վայելուչ յայն վայր եկեալ  
Հովուապետին զգօնացեալ,  
Ի Սեա մըթին լեառն անուանեալ  
Որ են հոգիք լուստորեալ...  
Զբանի սիրողն հաւաքեալ  
Եւ առ ինքեան բնակեցուցեալ  
Զգիրս Հոգւոյն միշտ ընթերցեալ  
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ»<sup>3</sup>:

Կաթողիկոսը հիմնում է այնտեղ ոչ միայն վանքեր, այլ նաև վանական դպրոցներ: Շուտով տարածվում է մանավանդ Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքի համբավը, ոչ միայն որպես կաթողիկոսական աթոռանիստ (1065—1116), այլ նաև որպես հայրապետական ճեմարան, որ նույն ինքն կաթողիկոսը «նստէր ի յամբիոն... և խօսէր ընդ վարդապետացն հոռոմոց և ի կարգին վարդապետացն էր յաղագս հայոց» (Ուոհայեցի, 220)<sup>4</sup>:

1064 թվակիր Ավետարանի մի ձեռագրի

<sup>2</sup> Մանուկ Աբեղյան, Երկեր, Երևան, 1970, Դ, էջ 97:  
<sup>3</sup> Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1880, էջ 548:  
<sup>4</sup> Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն հայ դպրոցի, Կահիրե, 1946 թ., Ա, էջ 193:

հիման վրա (գրված «ի վանքս կոչեցեալ Շուխր խանդառիա»)՝ կարելի է ենթադրել, որ Շուխրի (Շուխրի) վանքերն այդ վաղ ժամանակից գոյություն ունեին: Բայց այս անապատի վանքերը, մանավանդ Կարմիր վանքը, ապրում է իր փայլուն շրջանը ԺԱ դարի վերջին տասնամյակում և ԺԲ դարի առաջին երկու տասնամյակներում: Այս տարիներին է, որ Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքը համբավվում է դառնում՝ վայելելով հայտնի Գող Վասիլ հայ իշխանի հովանավորությունը և Ստեփանոս Մանուկ վարդապետի մանկավարժական դեկավորությունը:

Ստեփանոս Մանուկը՝ «մանուկ մի քահանայ»<sup>5</sup>, գաղթում է Կիլիկիա, որտեղ արդեն «իշխեր Մեծն Ռուբէն» (1080-ից հետո)<sup>6</sup>, բազում այլ կրոնավորների հետ՝ սելջուկների հալածանքներից ազատվելու համար: Այս երիտասարդ վարդապետը «որպէս թէ ոյթ և տասն ամաց... հասեալ ի գաւառն Քեսուն, ի մեծահոշակ սուրբ ովստըն, որ Կարմիր վանք կոչիր... և ի նոյն տեղի բնակեցաւ»<sup>8</sup>: Բայց շուտով «ես համբաւ նորա ընդ բազում գաւառս, եթէ ուսեալ է զհին և զնոր կտակարանս լիով»<sup>9</sup>: Ծերունի վարդապետները նույնիսկ զանգատվել էին հարստեղ կաթողիկոսին երիտասարդ վարդապետի վերատեսուչ նշանակվելու համար: Այցելելով Կիլիկիա 1093 թ.<sup>10</sup>, հարստեղ կաթողիկոսը ցանկանում է տեսնել Ստեփանոսին: Լսելով նրա իմաստալի խոսքերը՝ կաթողիկոսը նրան նշանակում է Կարմիր վանքի առաջնորդ՝ եպիսկոպոս ձեռնադրելով նրան և նվիրելով իր գալագանն ու մատանին: Այսպիսով սկսվում է Ստեփանոս եպիսկոպոսի մանկավարժական գործունեությունը. «Իսկ նա ոչ վարդապետարէն ուսուցանէր, այլ առաքելաշնորհ եղեալ՝ փչէր... զբանն կենաց»<sup>11</sup>:

Այդ օրերին Կարմիր վանքի դպրոցը ապրում է իր ծաղկման շրջանը: Դպրոցում

<sup>5</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, Ա, հատոր, Հիշատակարան, հ. 112:  
<sup>6</sup> Անդ, Հիշատակարան, հ. 143:  
<sup>7</sup> Հ. Մ. Չամչյան, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1786, Գ հտր., էջ 14:  
<sup>8</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, Ա, Հիշատակարան, հ. 143, երես 300:  
<sup>9</sup> Նույն տեղ:  
<sup>10</sup> Հ. Մ. Չամչյան, նույնը, էջ 15:  
<sup>11</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, Ա, հիշատակարան, հ. 143, երես 302:



դասավանդվում էին ոչ միայն կրոնական, աստվածաբանական առարկաներ, այլ նաև արտաքին, իմաստասիրական գիտություններ:

Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսի մոտ հավաքվում են բազում աշակերտներ:

1105 թվականին, Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի մահից հետո, Բարսեղ կաթողիկոսը նույնպես մնում է այնտեղ «ի յանապատ իմրն բնակեալ, ի մէջ լեռանց՝ Շուրր անուանեալ»<sup>12</sup>:

Նույն թվականին՝ Վկայասերի կարգադրությամբ նրա երկու թոռները՝ Գրիգոր և Ներսես եղբայրները (ապագայում Գրիգոր Գ. Պահլավունի և Ներսես Կլայեցի կաթողիկոսները), ուսում են առնում Կարմիր վանքում՝ ուսումնակից ունենալով ապագայում, որպես հմուտ մեկնիչներ ս. Գրոց, Սարգիս, Իգնատիոս Շնորհալիները: «Շնորհալի» մականունը պատվանուն էր Կարմիր վանքի աշակերտության մեջ, ինչպես «Քերթող» պատվանունը Այուճաց դպրոցի և «Իմաստասեր» պատվանունը Արագածոտնի (Շիրակ) դպրոցին:

Եվ իրապես Կարմիր վանքի շնորհալի շրջանավարտները արդարացրեցին իրենց պատվանունը ոչ միայն վարքով, այլ նաև գործունեությամբ:

Թեև Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսից չի հասել մեզ ոչ մի գրական երկ, իրենց մեկնողական գործերով (Ներսեսի՝ Մեկնություն Մատթեոսի Ավետարանի, Իգնատիոսի՝ Մեկնություն Ղուկասի Ավետարանի, Բարսեղի՝ Մեկնություն Մարկոսի Ավետարանի, և Սարգիսի՝ Մեկնություն ընդհանրական թղթերի) այս մատենագիրները ապացուցում են, որ նա եղել է իմաստուն և հմուտ մի անձ, մեթոդ ունեցող մի ուսուցիչ: Նա կարողացել է բավարարել իր աշակերտների հոգեկան պահանջները, հեշտացնելով այսպես՝ իր ծրագրի համաձայն կատարված նրանց մեկնողական աշխատանքը: Նրանք փառավորվեցին իրենց գործերով՝ փառավորելով միևնույն ժամանակ և Կարմիր վանքի ճեմարանի հիշատակը:

Վանքը շարունակում է իր գոյությունը՝ աննպաստ պայմաններով հանդերձ: 1113 թվականին վախճանվում են Բարսեղ կաթողիկոսը և Գող Վասիլ իշխանը, և վանքը գրկվում է կաթողիկոսի օրհնությունից և իշխանի հովանավորությունից: 1116 թ. Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը փոխադրում է կաթողիկոսական Աթոռը Մոփք՝ քաղաքական պայմանների հետևանքով:

<sup>12</sup> Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1880, էջ 548:

Կարմիր վանքը դադարում է այսպես եկեղեցական նվիրապետության կենտրոնը լինելուց, բայց մնում է Կիլիկիայի ամենահարուստի դպրեվանքը մինչև ԺԳ դարի սկիզբը: Նույնիսկ ԺԲ դարի երկրորդ կեսում Կարմիր վանքի դպրոցի և վարդապետների համբավը այնքա՛ն էր տարածվել, որ հենց Մխիթար Գոշը՝ արևելահայ առաջին իրավաբանը և խոշոր գիտնականը, թաքցնելով վարդապետական իր ստիճանը, եղավ այնտեղ՝ «որ կոչի Սև լեռըն, առ վարդապետսն՝ որք էին անդ ուսուցիչք»<sup>13</sup> կառարելագործելու համար իր ուսումը:

Նույն վանքի կամարների մերքո որոշ ժամանակ մնաց և ուսում առավ ԺԲ դարի մի ուրիշ նշանավոր մեկնիչ և մատենագիր՝ Ներսես Լամբրոնացի (1153—1198), Ներսես Շնորհալու թելադրությամբ՝ Կարմիր վանքում նա «տեսողականին կրթութեամբ յառաջէր»<sup>14</sup>:

ԺԳ դարի սկզբում վանքի դերը եկեղեցական և կրթական-մանկավարժական ապարեզներում սկսում է նվազել, բայց վանքի հարուստի աշակերտները անմահացրել են նրա հիշատակը:

### Սարգիս վրդ. Շնորհալու կյանքը ու մատենագրական վաստակը

Կարմիր վանքի դպրոցի հիշատակարժան դեմքերից մեկն է Սարգիս վրդ. Շնորհալին:

«Մեկնությունն եօթանց թղթոց կաթուղիկեայց» գործի հեղինակը մեծացել է, ուսում առել ու որոշ ժամանակ մնացել այս վանքում, բայց նրա կյանքի ու գործունեության մասին մանրամասն տեղեկություններ չկան:

Պետք է ենթադրենք, որ Սարգիս վրդ. Շնորհալին, լինելով Ստեփանոս Մանուկ վարդապետի աշակերտն ու Գրիգոր Գ Պահլավունի ու Ներսես Դ Շնորհալի կաթողիկոսների աշակերտակիցը՝ Կարմիր վանքում, մինչև 1105 թ. (Ստեփանոս Մանուկ վարդապետի մահվան թվականը)<sup>2</sup>, մոտ նույն տարիքի մի երիտասարդ էր, որը, մինչև իր ուսուցչի մահը, ստացել է

<sup>13</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 196:

<sup>14</sup> Լ. Ղևոնդ Այիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 407:

<sup>1</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիսս, 1951, Ա, հիշատակարան 143, երես 302:

<sup>2</sup> Ա. Ալաջաճեան, Պատմ. հայ դպրոցի, 1946, Կահիրե, Ա. հար., էջ 195:



անհրաժեշտ հոգեկան սնունդը՝ ընտրած ասպարեզում իր գործունեությունը աստվածահաճո ու օգտակար կերպով կատարելու համար: Նա ծնվել է մոտավորապես 1090 թ., սակայն ծննդյան տեղը հայտնի չէ (հավանաբար Սև լեռան գյուղերից մեկում, որտեղ Ստեփանոս Մանուկ «առաքինահրաշ» վարդապետի համբավը գրավում ու հրապուրում էր բոլորին, գուցե և երիտասարդ Սարգսի ծնողներին):

Կարմիր վանքում նա ընդունեց «գիտրն կենդանի առաքելական», իսկ հետո, իր որջ կյանքի ընթացքում, «զնոյն կենդանաբար հուր իբրև զանապառ աղբեր մշտնջենատր՝ ետ յարքումն Հայաստանեայցս եկեղեցոյ»<sup>3</sup>:

Սարգիս վարդապետի սրբակրոն կյանքի ու քերտն գործունեության շնորհիվ տարածվում է նրա համբավը: Թեև «Սեա Սարգիս անուանեցաւ, վասնզի մթնատես էր և իրթնահալեաց»<sup>4</sup>, նա «Եղև ջախ երթնատեղեան անշիջանելի՝ յաւետ լուսատու հայաստանեայց եկեղեցոյ... որ զառաքելական բանս... ի յայտ և ի տեսիլ ածեալ ամենեցունս»<sup>5</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալին սկսեց ծավալել իր գործունեությունը նախ Կարմիր վանքում: Ստույգ չէ, մինչև որ թվականը նա մնաց այնտեղ<sup>6</sup> (1150), սակայն իր գործերի ձեռագրերի հիշատակարաններում նշվում է, որ, ընտրվելով Քարաշիրում վանքի վանահայր, այնտեղ է անցկացնում իր կյանքի վերջին տարիները «ի սուրբ ոխատրն ճգնաւորաց... ի խոկումն սուրբ գրոց»<sup>7</sup>:

Քարաշիրու (Քարաշիրա)<sup>8</sup> վանքում Սարգիս վրդ. Ծնորհալին ավարտեց ընդհանրական թղթերի ընդարձակ մեկնությունը ու մի քանի տարի հետո համառոտեց այն՝ 1166 թ. (ՌԺԵ)<sup>9</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալու մահվան թվականը չի նշվում ոչ մի հիշատակարանում, նույնիսկ իր վարքի հեղինակը՝ Կարապետ վարդապետը (ԺԳ դար), չի հիշում այն: Վախճանվել է (հավանաբար 1170-ական թթ.) խոր ծերության մեջ, Քարաշիրու

վանքում, և «ի նոյն տեղի կան սուրբ նըշխարք ոսկերաց նորս»<sup>10</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալու գրչին վերագրվում են բազմաթիվ գործեր: Դժբախտաբար, սակայն, իր աշխատություններից մի մասը միայն պահպանվել է մինչև այսօր տարբեր ձեռագրերում:

Երևանի Մատենադարանում գտնվում են Սարգիս վրդ. Ծնորհալու գործերը պարունակող 91 ձեռագրեր: Այս ձեռագրերում ընդգրկված են նրա հետևյալ աշխատությունները՝ «Մեկնություն եօթանց թղթոց կաթողիկեայց» (ամբողջությամբ կամ միայն հատվածներ), «Յորդորակ», «Ծառք», «Խրատք», «Աղօթք», «Մաղթանք», «Բնաբանք քարոզից», «Աղերս առ ամենասուրբ Երրորդություն», «Յաղագս մարդեղութեան Քրիստոսի», «Վկայություն»: Երեք ձեռագրերում կա նաև հեղինակի վարքը, իսկ մի ձեռագրում՝ նրա մանրանկարը<sup>11</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալուն վերագրվում են նաև ալ գործեր, որոնք չեն պահպանվել, բայց մնում են միայն որոշ հեղինակների մոտ վկայությունները դրանց մասին: Այս գործերն են՝ «Մեկնություն աղօթից Նարեկացուն», «որպէս աաանդի ի յիշատակարանս ինչ, գոր այժմ չունիմք ի ձեռին»<sup>12</sup>, «Մեկնություն Եսայեայ», «յորմէ բերէ վկայութիւն Գևորգ վրդ.»<sup>13</sup>, «Մեկնություն Դուկասու Աւետարանի», «Դրուստ ի յիշատակի սուրբ մարգարէին Դաթի և Յակոբայ առաքելոյն», «Ղևոնդեանց» ու «Հրեշտակապետաց» շարականները (վերջին շարականի՝ «Սարսափելի որոտմամբ»-ի, ծայրանունը Սարգիս է)<sup>14</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալու «Մեկնություն եօթանց թղթոց կաթողիկեայց» աշխատությունը գրավում է, անկասկած, առաջնային տեղ նրա գործերի շարքում: Դժբախտաբար, նրա ուրիշ կարևոր աշխատությունների կորստի պատճառով, հնարավորություն չկա համեմատել դրանք այս մեկնության հետ: Բայց և այնպես սխալ չլինի ասել, որ այս մեկնողական աշխատությունը միայն բավական կլիներ հեղինակի հիշատակը անմահ դարձնելու համար:

<sup>3</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, Յիշատակարանք ձեռագրաց, հ. 143, երես 302:

<sup>4</sup> Անդ, Հիշատակարան 175, երես 365:

<sup>5</sup> Անդ, Հիշատակարան 143, երես 299:

<sup>6</sup> Հրաչյա Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, Դ, էջ 413:

<sup>7</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 143, երես 303:

<sup>8</sup> Հ. Մ. Չամչյան, նույնը, էջ 57: Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վեներտիկ, 1885, էջ 408:

<sup>9</sup> Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 191, երես 398:

<sup>10</sup> Անդ, հիշատակարան 143, երես 303:

<sup>11</sup> Լևոն Խաչիկյան, Ցուցակ ձեռագրաց, Երևան, 1965:

<sup>12</sup> Հ. Մ. Չամչյան, Պատմություն Հայոց, Վեներտիկ, 1784, Գ հատոր, էջ 57: Սարգիս վրդ. Ծնորհալի, Մեկնություն եօթանց թղթոց կաթողիկեայց, Կ. Պոլիս, 1826, էջ 3:

<sup>13</sup> Նույն տեղերը: Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վեներտիկ, 1885, էջ 103: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան Դ, էջ 413:

<sup>14</sup> Հ. Աճառյան, նույն տեղ:



Թե՛ ծավալով, թե՛ բովանդակությամբ և թե՛ մեկնիչի հմտությամբ ու ինքնուրույնությամբ՝ «Մեկնությունն եօթանց թղթոց կաթողիկեայց» աշխատությունը հանդիսանում է ԺԲ դարի մեր բազմաթիվ հիշարժան մատենագիրների գրիչների արժեքավորագույն արդյունքներից մեկը: Իրապես «Չնորհալի»՝ այս Սարգիս վարդապետը կարողացավ իր այս աշխատությամբ կենտրոնական մի տեղ գրավել ԺԲ դարի հայ մատենագիրների լուսավոր համաստեղության մեջ՝ մյուսների հետ միասին մնալով որպես հավերժ լուսատու աստղեր և արժանի ներկայացուցիչներ մեր մշակույթի պատմության:

«Մեկնությունն եօթանց թղթոց կաթողիկեայց» գործը, լինելով աշխատությանն նյութը, կարոտ է մանրամասն բացատրության: Դժբախտաբար շատ աղբյուրներ չըկան, որոնցից հնարավոր լինի օգտվել վերոհիշյալ բացատրության համար, բայց և այնպես, որոշ ձեռագրերից, ինչպես նաև գործի երկրորդ տպագրությունից (1826 թ. Կ. Պոլիս), հնարավորություն ունեցա որոշ տեղեկություններ քաղել, որոնց հիման վրա կարելի է լուսաբանել գործի գրության վերաբերյալ եղած հարցերը:

ԺԲ դարի կեսին, երբ Դրագարկ վանքի վանահայրը՝ տ. Բարսեղ եպիսկոպոսը, «տունեալ քերել ի Կ. Պոլսոյ զմեկնութիւն կաթողիկեայց»<sup>15</sup> թարգմանելու նպատակով, «զուգածամանակ գտանի մեկնութիւնն Սարգսի Ծնորհալոյ»<sup>16</sup>: Հայ վանականները զգում էին այս մեկնության կարիքը, բայց ո՛չ մեկը չէր համարձակվում հանձն առնել այսպիսի մի դժվար աշխատություն: Սարգիս վրդ. Ծնորհալին միակն էրավ, որ, հավանաբար հետևելով իր ուսուցչի՝ Ստեփանոս Մանուկ վարդապետի ծրագրին, հանձն է առել «ո՛չ զստանց տեսութան այլոց, և ո՛չ ամենևին ի վերայ այլոց հիման»<sup>17</sup> գրել այս մեկնությունը: Այսպիսի մի ընդարձակ աշխատության (673 էջ Կ. Պոլսի տպագրության համաձայն) գրելը երկար ժամանակ պահանջելով՝ նա սկսել է գրել այդ Կարմիր վանքում (հավանաբար 1140—1145 թթ.): Աշխատությունն ավարտվել է Բարաշիթու վանքում<sup>18</sup> 1150—1156 թթ.: Ծգրիտ թվականը դժվար է որոշել, որովհետև տարբեր աղբյուրների մեջ տարբեր տվյալներ կան դրա մասին:

ա. Հ. Միքայել Զամչյանի վկայության համաձայն Սարգիս վրդ. Ծնորհալին «ա-

րար զմեկնութիւնն եօթանց թղթոց կաթողիկեայց... ի թուին հայոց «ԾՂԹ» (599)<sup>19</sup>, այսինքն 1150 թ.:

բ. Մի ուրիշ վկայության համաձայն գործը ավարտվել է «ի թուականս հայոց ի Ո և Գ ամին» 551+603=1154 թ.<sup>20</sup>:

գ. Ա.վելի հավանական է, որ աշխատությունը ավարտվել է 1156 թ., Սարգիս վարդապետի կենսագրի՝ Կարապետ վարդապետի վկայության հիման վրա: Թեև Կարապետ վարդապետը չի նշում այս թվականը, բայց նա գրում է, որ մեկնությունը ավարտելուց 10 տարի հետո հեղինակը՝ Սարգիս վրդ. Ծնորհալին, «արարեալ է զհամառոտութիւնն գրոցն»՝ այս թվականը և չհիշելով հանդերձ<sup>21</sup>: Բայց հեղինակի վկայության համաձայն գործի համառոտությունը կատարվեց ՌԺԵ (1166 թ.) թվականին<sup>22</sup>: Ուրեմն ընդարձակ աշխատությունը պետք է ավարտված լիներ 1166 թվականից 10 տարի առաջ, 1156 թ.:

Այն կարծիքը, որի համաձայն մեկնությունը համառոտվեց 1166 թ. ո՛չ թե հեղինակի, այլ ուրիշի կողմից<sup>23</sup>, հերքված է թե՛ հեղինակի<sup>24</sup> և թե՛ նրա կենսագրի՝ Կարապետ վարդապետի<sup>25</sup> վկայությունների հիման վրա:

Ընդհանրական թղթերի մեկնությունն ընդունվեց մեծ ուրախությամբ և հետաքրքրությամբ հայ հոգևորականների կողմից: Նույնիսկ «արագամիտ և հանճարեղ ազգն ֆռանկաց... ի լսել զգարմանալի համբաւ տրայս գեղեցկութեան... վաղվաղակի անյապաղ փութով տարեալ թարգմանութեամբ ի Հոռն, և իբրև զպարգևս երկնաորս ընկաւեալք ետանդնոտ սիրով, գոհանալով ըզտուօղէն քարեաց»<sup>26</sup>:

Դժբախտաբար ուրիշ վկայություն չկա այս աշխատության թարգմանության մասին: Դարերի ընթացքում Սարգիս վրդ. Ծնորհալու «Մեկնությունն»-ը ապացուցեց իր արժեքն ու կարևորությունը՝ մնալով հայ մեկնողական գրականության ամենափայլուն գործերից մեկը: Այսպես է բացա-

15 Հ. Ղևոնդ Ալիշան, նույնը, էջ 516:

16 Նույն տեղ:

17 Տպագրված մեկնությունը, Կ. Պոլիս, 1826, էջ 3:

18 Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 143, երես 308:

19 Հ. Մ. Զամչյան, նույնը, էջ 56: Տպագրված մեկնությունն, Կ. Պոլիս, 1826, էջ 2:

20 Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 175, երես 365:

21 Հ. Ղևոնդ Ալիշան, նույնը, էջ 409:

22 Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 191, երես 398:

23 Հ. Մ. Զամչյան, նույնը, էջ 57:

24 Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 191, երես 398:

25 Հ. Ղևոնդ Ալիշան, նույնը, էջ 409:

26 Գարեգին կաթողիկոս Հովսեփյանց, նույնը, հիշատակարան 175, երես 365:



տրոփում այն իրողությունը, որ հայ տպագրության երկունքից քիչ հետո, 1743 թ., Կ. Պոլսում ուրիշ գործերի հետ միասին տպագրվում է նաև և ա՛յս աշխատությունը՝ Աբրահամ Թրակացու կողմից:

Քրիստոնեական վեհագույն, համամարդկային գաղափարների պարզ, բայց հմուտ բացատրություններով, հայ եկեղեցու դավանանքը պաշտպանելու ձգտումով, մեղավոր մարդու հոգուց ու մարդասեր հոգևորականի արտից քիսած անկեղծ զգացումներով լեցուն այս գործը հրատարում էր բոլորին: Այդ դժվար ժամանակներին այսպիսի մի գործի տպագրությունն ու նրա տարածումը ժողովրդի մեջ հույս էր ներշնչում բոլորին:

Հայ ժողովուրդը կարիքն էր զգում քաջալերանքի խոսքերի և օրհնակի:

Սարգիս վարդապետի գործի տպագրությանը տրվեց բոլորին աստվածային քաջալերական խոսքերի բացատրությունը, տրվեց բոլորին օրհնակն այն մարդու, որը իր ամբողջ կյանքի ընթացքում աշխատել է «զխոր անդունդս աստուածային իմաստից... ի յօգուտ այլոց մատակարարել՝ և տալ զբանն» բոլորին խրատելով «չայսպիսի գործս պարապել՝ և ի սոյն դեգերել, և ինքեանց վայելչութիւն և պսակ պարծանաց զսոյն համարել»<sup>27</sup>:

1784 թ. տպագրության մեջ, սակայն, գտնվում են քավական շատ սխալներ, որոնք փոխում են բուն գրության իմաստը, խանգարում են վարդապետության ուղղությունն ու հեղինակի ուղղափառությունը<sup>28</sup>:

Սարգիս վրդ. Ծնորհալու գործը տպագրվում է երկրորդ անգամ 1826 թ. նույնպես Կ. Պոլսում, Անդրեաս վրդ. Նարինյանի աշխատասիրությանը և «արդեամբ գերապատիւ Թերզեանց մահտեսի Աբրահամ Աստուածաւեր Ամիրայի Ակնեցոյ»: Գործի տպագրությունը սկսվում է 1826 թ. սեպտեմբերին և ավարտվում 1828 թ. մարտի 24-ին<sup>29</sup>:

Տպագրված մեկնությունը բաղկացած է 702 երկայուն, մեծադիր էջերից: Տպագրությունը կատարվել է Երուսաղեմի հայոց վանքի երկու ընտիր և հնագույն ձեռագրերի բնագրերի հիման վրա, որոնցից մեկը գրված է «ի թիւ հայոց 291» (1438), իսկ մյուսը՝ «ի թիւ հայոց ՊԽԸ» (1499)<sup>30</sup>:

<sup>27</sup> Տպագրված մեկնություն, Կ. Պոլիս, 1826, էջ 10—11:

<sup>28</sup> Լ. Մ. Չամչյան, նույնը, էջ 397:

<sup>29</sup> Տպագրված մեկնություն, Կ. Պոլիս, 1826, էջ 1: Տես նաև «Հայ գիրքը 1801—1850 թթ.», Երևան, 1967, էջ 137:

<sup>30</sup> Անդ, էջ 1:

Տպագրությունը ընթացավ մանավանդ առաջին և հնագույն ձեռագրի բնագրի հիման վրա, պահելով «մինչև անգամ զհասարակութիւն միոյ բառի կամ տառի»<sup>31</sup>: Ինչպես երևում է, այս բոլոր մանրամասնությունները տպագրության մասին տրվում են առաջին առաջաբանում, որի հեղինակն է ակնեցի Անդրեաս վրդ. Նարինյանը (էջ 3—4):

Առաջաբանում Անդրեաս վարդապետը խոսում է նաև Սարգիս վարդապետի մասին՝ «Ծնորհալի» կոչված, «քանզի և բանք տրա... քաղցր յոյծ և յի իմաստութեամբ»<sup>32</sup> էին, ինչպես նաև նրա մատենագրական վաստակի մասին: Այս առաջաբանի հեղինակը չի մոռանում նաև հիշել տպագրության մեկենասին՝ մահտեսի Աբրահամ ամիրա Թերզյանին:

Տպագրությունն ունի նաև այլ երկու առաջաբաններ: Սրանցից առաջինը (էջ 5—8) գրված է «վասն սուրբ վարդապետի Սարգիս, (զեօթն թուղթս կաթողիկեայց լուսաւոր մտօք մեկնողի)» Կարապետ վարդապետի կողմից: Այս Կարապետ վարդապետը ապրել է ԺԳ դարում և եղել է Սարգիս վարդապետի համառոտ կենսագրության հեղինակը: Կարապետ վարդապետը խոսում է «կատարելալ պուետիկոս» Սարգիս վրդ. Ծնորհալու մասին, վարքագրական բնութիւն համառոտ տեղեկություններ տալով, ինչպես նաև նրա մեկնության հոգևոր, բարոյական ու մանավանդ լեզվական, ոճական առանձնահատկությունների մասին:

«Յառաջաբանութիւն հեղինակին» (Գ առաջաբանը) գրվում է 10—11 էջերը: Այստեղ Սարգիս վարդապետը հանգամանորեն խոսում է մեկնիչ վարդապետի անհրաժեշտ առանձնահատկությունների, ինչպես նաև նրա մեկնության գրության ու նպատակի մասին:

9-րդ էջի վրա գտնվում է մի բանաստեղծություն, որի ծայրանունն է՝ Սարգիս գիրք գովելի: Դրա բովանդակությունը հետևյալն է:

«Սուրբ վարդապետս Սարգիս՝ իմաստաւեր մեր ազգիս, Արար ըզգիրքս անըմման՝ կաթողիկեայց մեկնութեան: Բապուն խորին նըրբամիտ՝ քարոզ բանին ճմարիտ, Գանձ մեզ եթող զգիրքս զայս՝ լապտեր անշէջ եղ ի հայս,

<sup>31</sup> Անդ, էջ 2:

<sup>32</sup> Անդ, էջ 8:



Ի սոյն գանձէս որք շահին՝ իբրու պայծառ լոյս շահին, Սա չէ յայոց թարգմանած՝ և յետամուտ մեզ եկած Գիրք գեղեցիկ սա գովեալ՝ ի մեր ազգէն յօրինեալ ի սա թէ նորք նայիցիս՝ և ակն հառեալ հայիցիս ըստեալ գրոցես քեզ անթիս՝ ակունս պայծառ և ազնիս, Բառից սրբոց ասացեալ՝ եօթնն թուղթքնն խօսեցեալ, Գերասպայծառ իմաստից՝ անօթ կազմեալ մեզ յերկնից, Որք ճաշակեն լիանան՝ քաղցեալ բնա ոչ մնան, Վերին շնորհաց սա աղբիս՝ որ յառաքեալսն բոլորսն, Երջանիկ և շնորհալից՝ Սարգիս անօթն իմաստից, Լի գայս սեղան շնորհալի՝ եղ մեզ հայոցս առաջի Ի սոյն սեղան որք հրպին՝ ճաշակք նոցին գօրասցին»:

Այս տողերում մի անգամ ևս ընդօժվում է այն իրողությունը, որ Սարգիս վարդապետի մեկնությունը «ի մեր ազգէն յօրինեալ» է, բարձրացնում է աշխատության արժեքը: «Կարևոր է դիտել տալ, որ վարդապետը իր գործին համար օտար կամ ազգային որ և է առաջնորդ մը չէ ունեցած նախնաց աշխատություններու մեջ»<sup>33</sup>:

Բուն մեկնությունը գրավում է գրքի 10—668 էջերը: Տրված են հերթականությամբ Նոր Կտակարանի կաթողիկե յոթ, այդ թըվում՝ Հակոբոսի՝ 1, Պետրոսի՝ 2, Հովհաննեսի՝ 3, և Հուդա Հակոբյանի՝ 1, թղթերի մեկնությունները:

Թղթերը մեկնված են համար առ համար: Մեկնիչը մանրամասնորեն փնտրել է աստվածային ներշնչումով գրված խոսքերի ամենաթաքուն իմաստը: Բայց որովհետև Սարգիս վարդապետի գրչի արդյունքը եղավ շատ ընդարձակ մի գործ, ընթերցումը հեշտացնելու համար Կարապետ վարդապետը բաժանում է ամեն մի թղթի մեկնությունը գլուխների ու ճառերի: Ամբողջ մեկնությունը բաղկացած է ԽԳ (43) ճառերից՝ ըստ հետևյալ ցանկի:

ա. Հակոբոս առաքյալի թղթի մեկնությունը (էջ 13—179), Ե գլուխ, ԺԱ ճառ:

Բ. Պետրոս առաքյալի առաջին թղթի մեկնությունը (էջ 180—397), Ե գլուխ, ԺԲ ճառ:

Գ. Պետրոս առաքյալի Բ թղթի մեկնությունը (էջ 398—486), Գ գլուխ, Զ ճառ:

Դ. Հովհաննես առաքյալի Ա թղթի մեկնությունը (էջ 487—598), Ե գլուխ, Թ ճառ:

Ե. Հովհաննես առաքյալի Բ թղթի մեկնությունը (էջ 599—613), Ա գլուխ, Ա ճառ:

Զ. Հովհաննես առաքյալի Գ թղթի մեկնությունը (էջ 614/627), Ա գլուխ, Ա ճառ:

Է. Հուդա Հակոբյան առաքյալի թղթի մեկնությունը (էջ 628—667), Ա գլուխ, Գ ճառ:

Կարապետ վարդապետի կողմից սահմանված բաժանումների ցանկը, ամեն ճանի վերաբերյալ անհրաժեշտ համառոտ բացատրություններով հանդերձ, գրավում է գրքի 673—691 էջերը: Իսկ 692—701 էջերի վրա եղած այբբենական ցանկի միջոցով ավելի հեշտ է իմանալ, «թէ ո՞ր բան թղթոյն կաթողիկեայց՝ ո՞ր արդեօք կան եղեալ կամ թէ ա՛յլ գլխատր բանք՝ խնդրոյ արժանիք»<sup>34</sup>:

Գրքի 667—673 էջերի վրա գտնվում են երկու կարևոր գրություններ՝ Սարգիս վարդապետի գրչին վերագրված:

ա. «Աղերս մաղթանաց՝ նորին Սարգսի վարդապետի՝ առ ամենատրք Երրորդութիւն Հայր և Որդի և սուրբ Հոգի, վերջաբանական եղանակաւ», որով հեղինակը, իր աշխատության ավարտին, Աստծուն փառաբանելով և գոհություն տալով հանդերձ, աղաչում է Նրան. «Ընկալ զսա (աշխատությունը) ողորմութեամբ քով ի ձեռաց իմոց՝ որպէս զերկուս լումայս այրույն յանկարօս գանձանակ փառաց քոց... և տուր ամենեցուն մանկանց եկեղեցոյ՝ ուրախութեամբ հանդիպիլ սմա և ընդունել զսա ըստ հաճոյից կամաց քոց: Եւ տուր նոցա միտս բարիս և աննախանձս, յիշել և զիմ աղկաղկութիւնս արտօսաբարոյիս մաղթանօք առ սիրեցեալ Տէրոյ»<sup>35</sup>:

բ. «Պատճառք եօթնեցունց թղթոցն կաթողիկեայց՝ չորից սրբոց Առաքելոցն: Նորին Սարգսի վարդապետի համառօտ արարեալ», որի նպատակն է բացատրել՝ «Եթէ է՞ր՝ և վասն է՞ր կաթողիկեայք անուանին, և վասն է՞ր ի քառից արանց գրեցան, և վասն է՞ր եօթն, ո՛չ անելի և ո՛չ նուագ»<sup>36</sup>:

Սրանով Սարգիս վրդ. Ծնորհալին ավարտում է իր երկար աշխատությունը, որի ընթացքում հեղինակը «շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», գնաց «զհետ վարդապետութեան աստուածային գրոց՝ անմոլորապէս ի նոսա հայելով և տեսանելով զի-

<sup>34</sup> Տպագրված մեկնություն, Կ. Պոլիս, 1826, էջ 692:

<sup>35</sup> Ա.Ն. էջ 667:

<sup>36</sup> Ա.Ն. էջ 668:

<sup>33</sup> Եղիշե արքեպ. Գորյան, Հայ մատենագրություն, Երուսաղեմ, 1938, էջ 200:



մասուն որ ի նոսա»<sup>37</sup>: Ավարտվում է այսպես այս հոգեւից մեկնությունը, գրված ո՛չ «դժուարապատում և երազանանական» բառերի կիրարկումով և ո՛չ էլ «գեղջուկ բանիք»<sup>38</sup>, որը հեղինակի գիտության ու հմտության ամենափայլուն արտահայտությունն է:

Գրքի վերջին (702) էջի վրա հիշատակարանն է, որի մեջ հիշվում է նորից մեկնության տպագրության մեկեմասը՝ ակնեցի Աբրահամ ամիրա Թերզյանը, սրբագրող Անդրեաս վրդ. Նարինյանի, տպագրիչ Խաչատուր, Մարտիրոս և Մանվել տիրացուների հետ միասին: Բոլորն էլ ջանք չըխնայեցին այս մեկնությունը տպագրելու համար՝ գիտակցելով, թե սույն մեկնության «բազմահանձար իմաստիցն յոլովութիւն գովացուցանէ ընթերցողին և իբրև զլատեր վառ՝ ջահատրեալ սլայծառացուցանէ զմիտս և զհոգիս»<sup>39</sup>:

<sup>37</sup> Անդ, էջ 678:

<sup>38</sup> Եղիշե արքեպ. Գուրյան, նույնը, էջ 204:


<sup>39</sup> Տպագրված մեկնություն, Կ. Պոլիս, 1826, էջ 702:

**Ծանոթագրություն.**—Սույն աշխատության Բ և Գ գլուխներում Գարեգին կաթողիկոսի «Յիշատակարանք Ձեռագրաց» ժողովածուից հիշված 143, 144, 175 և 191 համար հիշատակարանները գտնվում են Երևանի Մատենադարանի որոշ ձեռագրերում՝ Լևոն Խաչիկյանի «Ցուցակ Ձեռագրաց» ուսումնասիրության համաձայն, ըստ հետևյալ ցուցակի.


ա. համար 143 հիշատակարանը (Գր. Կաթող. Յիշատակարանք Ձեռագրաց) գտնվում է համար 7473 ձեռագրում:

բ. համար 144 և 175 հիշատակարանները (Գր. Կաթող.) գտնվում են համար 3276 ձեռագրում:

գ. համար 191 հիշատակարանը գտնվում է համար 1372 ձեռագրում:







ԾՆՈՐՀԱԼԻ ՆԿԱՐԻՉ-ՓՈՐԱԳՐՈՂ

«ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ՄԿՐՏՉԻ»

«Գրիգոր որդի Մկրտչի». այս ստորագրությունն է դրված Հայաստանի պետական պատկերասրահում պահպանվող չորս փորագիր անկարների տակ<sup>1</sup>:

Նկարներից մեկը պատկերում է «Քրիստոսի Ծնունդը» (№ 44/45, 33,7×21): Բազմաֆիգուր տեսարանը բաղկացած է առանձին խմբերից, որոնք պատկերում են մոզերի գալուստը, և գրավում են թերթի ողջ տարածքը: Թերթի աջի մեջտեղում անարիչը շրջանակով եզրագծում է սուրբ ընտանիքը:

Չկարողանալով լուծել հեռանկարի հարցերը, փորագրողը անբնից վերև գնացող ուրրապտույտ հատվածներ է ստեղծում, որոնց շնորհիվ լայն տարածք է ընդգրկում և հասնում շարժման ուղիով:

Նկարում հատկապես գրավում են տարբեր ազգությունների պատկանող մարդկանց տարազների, ինչպես նաև տաճարի (Բեթղեհեմի այլը խորհրդանշող), տների ու քարերի, կենդանիների (ծիեր, փղեր) նուրբակալն ու իրական վերարտադրումը:

Նկարի հարթապատկերային լուծումները, մանրանկարչության ոճի սահմաններում տեղադրված մեկնաբանումները միջնադարի գրքային անարչության հետ ունեցած սերտ կապերի վկայություններն են:

Մյուս կողմից, կառուցման ազատությունն

<sup>1</sup> Գնվել են Հայաստանի Լուսծողկոմատի միջոցով՝ 1921 թ., բաքվեցի բժիշկ Զ. Նաբաթովից:

ու ֆիգուրների ծավալային պատկերումները մեծ աղերս ունեն եվրոպական անարչությունից թեղադրված ազդեցությունների հետ: Թերթի որոշ հատվածներ ունեն բացատրական գրություններ. «ԲԵԹՂԵՀԷՄ», «ԵՒ ՀՐԵԾՏԱԿՔ ԵՐԳԷԻՆ. ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ»: Նկարի ցածում տեղադրված է տեսարանի բացատրությունը, որն ավարտվում է «Գրիգոր Մկրտչի անարող 1154 [1705]» ստորագրությամբ:

Քրիստոսի «Խաչելությունը» (№ 46/47, 30,5×20,5) ստեղծելիս անարիչն օգտվել է եվրոպական փորագրություններից (կոմպոզիցիայի դասական դարձած կառուցումը, առանձին տարրեր, ֆիգուրների դասավորությունը), միաժամանակ, հանդես է բերում գծանկարի բարձր զգացողություն: Ցածի գրության սկզբում կարդում ենք. «Գրիգոր որդի Մկրտչի անարող սպող պատկերիս. թվին ՌԾԾԵ [1706]»:

Երրորդ անարը Քրիստոսի «Հարությունն» է (№ 47/48, 33,8×20), բազմաֆիգուր մի տեսարան, որը ծանրաբեռնված է զանազան իրերի ու զգեստների ճշգրիտ, մանրակրկիտ պատկերումներով: Նկարի վերելում դարձյալ տեղադրված է բացատրական գրություն, իսկ վերջում՝ «ՌԾԾԵ. ՆԿԱՐԵԱԼ ԵՒ ՓՈՐԵԱԼ ԶԵՌԱՄԲ ԳՐԻԳՈՐ ՏՊԱԳՐԻ ԱՆԱՐԺԱՆ ԴՊՐԻՍ»: Նշանակում է, նույն վարպետի գործն է և կատարված դարձյալ 1706 թ.:



Մյուս փորագրությունը դուրս է Քրիստոսի կյանքին նվիրված կանոնիկ պուժեների շարքից: Այն նվիրված է Գրիգոր Լուսավորչին (№ 45/46, 36×21): Այստեղ գործ ունենք դասական դարձած նույն թեմայի սրատկերման տարբերակի հետ<sup>2</sup>: Թեր-



Գրիգոր Մարզվանցի.—Խաչելություն, 1706 թ.

<sup>2</sup> «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին, Աշխենին ու Խոսրովիդուխտին» պուժեն լայն տարածում ուներ XVII—XVIII դդ. հայ կերպարվեստում: Դասական օրինակներ են պահպանվել Նոր Ջուղայի եկեղեցիներում, Էջմիածնի վանքի թանգարանում, Ժվանցիի և Պողոսիի հայկական եկեղեցիներում (տես՝ Լ. Մազիրյանց, Հայոց մեծ գաղթականությունը ԺԲ դարում և նրա վիճակը Լեհաստանում, «Արաքս», ս. Պետերբուրգ, 1899, գիրք Ա): Նույն, կոմպոզիցիայի ընտիր փորագիր օրինակ հրատարակվել է 1782 թ. Վիեննայում, Էրզրումցի Հակոբի միջոցներով (70×100) (տես՝ Ս. Եփրիկյան, Ս. Էջմիածին: Վեներտիկ, 1903, էջ 2): Պղնձի վրա XVII դ. դրվագված մի օրինակ պահպանվում է Լվովի պետական պատմության թանգարանում: Գոյություն ունեն նույն թեմայի դաջի վարագույրների օրինակներ (Էջմիածնի վանքի Վեհարանի թանգարան), իսկ XVIII դ. այն տեղ է գտել Էջմիածնի կաթողիկոսական կոնդակների ձեվավորումներում:

թի կենտրոնում տեղադրված է Գրիգոր Լուսավորչի կողմից Տրդատ թագավորին ու Խոսրովիդուխտին մկրտելու տեսարանը: Չորս կողմում պատկերված են Լուսավորչի չարչարանքները (15 պուժե)<sup>3</sup> համապատասխան մակագրություններով:

Այս թերթը ուշագրավ է երկու տեսակետից: Կենտրոնական մասին շատ ավելի շքեղ ու հանդիսավոր տեսք տալու նպատակով նկարիչը ներմուծում է ծաղկազարդ պուժեր և ողջ տեսարանը մեկնաբանում շատ ավելի գեղանկարչության սկզբունքներով, որն արդարացված է փորագրական արվեստի վրա գեղանկարչության ուժեղ ազդեցությամբ: Մյուս կողմից, Գրիգոր Լուսավորչի չարչարանքների տեսարաններում հեղինակը չի կարողանում կտրվել մանրանկարչության սկզբունքներից և որոշակի պարզամտություն է դրսևորում: Թերթի ցածի տեսարաններից մեկի (Լուսավորչի հարցաքննությունը) կողքին նկարիչը թողնում է իր ստորագրությունը. «Գրիգոր որդի Մկրտչի նկարող եւ փորող պատկերիս. 1154 [1705]»:

Ինչպես տեսնում ենք, չորս թերթերի հեղինակը, Մկրտչի որդի Գրիգորն է<sup>3</sup>, որը նկարիչ է, նկարը փորագրողը և նկարը սպողը, այսինքն՝ երեք մասնագիտության տեր անձնավորություն: Մենք գործ ունենք բազմակողմանի զարգացած մի մարդու հետ, որի երեք մասնագիտությունները XVIII դ. շատ տարածված չէին, պատվավոր էին ու վայելում էին հասարակության հարգանքը:

Գրիգորի անունը հիմնավորապես մուտք է գործել հայ գրքի տպագրության պատմության մեջ<sup>4</sup>, բայց որպես նկարիչ ու փորագրող արժանի գնահատություն չի ստացել<sup>5</sup>:

<sup>3</sup> 1780 թ. տպագրված «Յայսմավորքի» հիշատակարանում ունի բացառիկ ստորագրություն. «Նուսաստ ծառայիցն Աստուծոյ, Գրիգոր դպիր Մերանսն գառե՛ Մարզուանցի»:

<sup>4</sup> Վ. Գ. Զարդարեան, Յիշատակարան, Երկրորդ հատոր, 1911: Թեոդիկ, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912: Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946: Ն. Ռսկանյան, Նորահայտ մի էջ հայ մատենագիտության պատմությունից, «Էջմիածին», 1963, № 1: Հ. Դավթյան, Մի էջ հայ հին տպագրության պատմությունից, «Էջմիածին», 1963, № 2: Քնարիկ Կորկոտյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964:


<sup>5</sup> Նրա փորագրական գործունեությանը մասնակիորեն անդրադարձել է Ն. Դավթյանը «Մի էջ հայ հին տպագրության պատմությունից» հոդվածում: «Էջմիածին», 1963, № 2, էջ 39—42:



«ԵՆ ՆՈՒԱՍՏ ԱՄԵՆԵՑՈՒՆՑ ՄԱՐՈՒԼ-ԻԱՆԵՑԻ»։ Փոքր Հայքի Մարզվան գյուղաքաղաքից էր։ Մարզվանը հայտնի էր արձաթի հանքերով։ Քաղաքի վրա իշխում էր կղմինդրե շարվածք ունեցող բերդը։ Բնակիչները վարպետ ներկարարներ էին։ Հատկապես մեծ համարում ուներ նրանց պատրաստած կապույտ ներկը։ Չարգացած էր բեզագործությունը։ Բամբակի թելից գործված չթե բեզի ծաղկավոր կտորները ստեղծվում էին ներքնակների, բարձերի, վարագույրների ու վերմակների երիզների համար։ Բնակչության մասին հիշատակվում է, որ նրանք «բարեպաշտ և ուղղամիտ մարդիկ են»<sup>6</sup>։ Բարեպաշտ Մկրտչի և Թուրվատենի ընտանիքում ծնվում է Գրիգորը։ Իր ընտանիքի մասին նա հետագայում կգրի. «Իարձեալ յիշեցէք զհանգուցեալ առ Քրիստոս զհայրն Մկրտիչն. և զմայրն իմ Թուրվատեն. և զսպայն իմ զԱբրահամն և զԵսայեայն և զմամն Մարթան։ Եւ եղբայրքն իմ զքրիստոսատուրն և զՄիքայելն. և զԵսային և զի քոյրքն իմ Խանըմն և այլքն, որ հանգուցեալ են առ Քս. և եղեալ են ՚ի շիրիմս հարցն մերոց ՚ի քաղաքն Մարսամն՝ որ և իսկ ծնեալ և սնեալ ՚ի նոյն»<sup>7</sup>։

«ԳՐԻԳՈՐ ԴՊԻՐՍ, ՈՐ ԵՄ ՁԵՆՆԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԾԱՂԻԿ ԵՐԱԺԻՇՏ ՍԱՐԳԻՍ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ...»։ Գրիգորը աշակերտում է Բաղեշի Ամրդոյու վանքի դպրոցի սաներից մեկին՝ Սարգիս վարդապետին։ Ամրդոյուն գրչության հայտնի դպրոց էր դեռևս XV դարից, որի ուսման ծրագիրը որոշակի կանոնիկ բնույթ ստացավ հատկապես Բարսեղ Աղբակեցու օրոք (մահ. 1615 թ.)։ Ամրդոյու վանքի դպրոցի հեղինակությանը նպաստել են Ներսես Մոկացին, ինչպես նաև Վարդան Բաղիշեցին (մահ. 1704 թ.)։ Վերջինիս ժամանակ դպրոցը վերանվանվեց համալսարանի, կարգավորվեց Մատենադարանը և համալրվեց նոր ձեռագրերով։ Վարդան Բաղիշեցու ժամանակ (45 միաբան և 40 աշակերտ կար) վերանորոգվում և ընդօրինակվում են մի շարք ձեռագրեր, իսկ դասավանդվող առարկաների շարքում առաջնակարգ մասնագիտություն են դառնում նաև մանրանկարչության, որմնանկարչության և գրչության արվեստները։ Ահա, այսօրինակ դա-

սական կրթություն ստացած դիարբեքիցի («ի քաղաքս Յամթայ եկեալ աստ» «քաշերածիշտ եւ զարդագիր գրչապետ եւ նկարողն» Սարգսի մոտ, հավանաբար Սղեղիի ս. Կոնոնոսի վանքում (Սարգիսն այստեղ վանահայր էր)<sup>8</sup>, ընթերցանության և ծաղկարարության դասեր է ստանում Գրիգորը։



Գրիգոր Մարզվանեցի.—Հարություն, 1706 թ.

«ԵՒ ԶԿՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՑ ԵԿԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՀԱՆԴԵՐՁ ՎԱՐԴԱՊԵՏԻՆՍ, ՈՐ ԷՐ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ ՌՇԼԳ»։ 1684 թ. Սարգիս վարդապետը, քարոզներ կարդալու նպատակով, գալիս է Կ. Պոլիս, իր հետ բերելով նաև իր աշակերտ Գրիգորին։ Գործն ավարտելով, ուսուցիչը վերադառնում է սր. Կոնոնոսի վանքը<sup>9</sup>, իսկ աշակերտը մնում է Կ. Պոլսում։

<sup>8</sup> Հ. Ներսես Վ. Ալիկյան, Բաղեշի դպրոցը։ 1500—1704։ Վիեննա, 1952, էջ 819։


<sup>9</sup> Հովհաննես Կոլոտը Աշում է, որ 1706 թ. «պղխոհան յոյժ ու քաղցրաքարոզ» Սարգիս վարդապետը սրբատաշ քարերով նորոգել է Սղեղոսի վանքի կառույցները։ Նույն տեղում, էջ 820։

<sup>6</sup> Էվիլյա Չելեքիի ուղեգրությունը։ «Թուրքական աղբյուրներ», Երևան, 1987, հատոր Գ, էջ 138—140։

<sup>7</sup> «Յայամատրք» Կ. Պոլիս, 1706, էջ 896։



«ԵՒ ԵՍ ՏԵՍԵԱԼ ԶԱԶԳՍ, ՈՐ Ի ԳՐՈՑ ՍՐԲՈՑ ՍՏԵՐԶ ԵՒ ՍԱԿԱՒՈՒԿ ԳՏԱՆԻՒՐ ԳՐԶԱԳԻՐ ԳՐԵԱՆՔ»։ Ժողովրդի լուսավորության գաղափարը դառնում է Գրիգոր Մարզվանեցու կյանքի և գործի հիմքը, որը ոգևորում է նրան հաղթահարելու դժվարությունները։ Տպագրական գործին տիրապետում է ինքնուրույն։ «Ես իմ ներմտածման բանիս սկիզբն եղի արհեստ կաղապարաց տպարանիս։ Ո՛չ ումեմնէ տեսանելով իմ,



Գրիգոր Մարզվանեցի.—Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին ու Խոսրովիդուխտին, 1706 թ.

և ո՛չ ի Հոռոմ գնալով. Ե ո՛չ ի յայլմէ արհեստաւորաց տեսեալ. և կամ ի նմանէ ուսեալ»։ Սովորելու օջախ էլ չկար այն ժամանակ Կ. Պոլսում։ Երեմիա Չելեպի Քչոմորճյանի տպարանն իր երկամյա կյանքն ավարտեց 1678 թ.։ Գնելով Երեմիա Չելեպու տպարանի կայքն ու տառերը, որոնք, ըստ Մարզվանեցու, «զգիր նորին էր նուազ և միհար», նա ձեռնարկում է իր մեծ գործը, սկիզբը խարսխելով իր արտակարգ ընդունակությունների վրա։ Նկարում և ձուլում է գեղեցիկ տառեր («Չպողպատն հարդարքեալ նկարեցի զգիրս, այբէն մինչ ի ֆէն՝ հայրն պողպատն և գիր ի գլուխն,

որ դրատըպի ի վերայ պղնձի, և լինի գեղեցիկ կաղապար մինչ այբէն ֆէն, գլխագրովն, որ նույն պղինձն ասի մայր։ Ես ի ամանէ ցուլացմամբ ծնցի որդիք բազումք արճճեա պնտագոյնս։ Որով շարաբարդի գիրք զինչ և կամիս»), ընկերանում է նույն այդ գործով տարված Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հետ։ 1698 տ. նրանք միասին հրատարակում են «Տաղարանը», բաժանվում են իրարից և մինչև 1706 թ. Գրիգոր Մարզվանեցու տպարանը չի գործում, այն դեպքում, երբ Աստվածատուր դպրի տպարանից դուրս է գալիս տասը անուն գիրք (Ծարակնոց, Նարեկացու «Գիրք աղօթիցը», Ժամագիրք, Մաշտոց, Տոնացոյց և այլն)։ Հավանական մեկնությունն են տվել հնատիպ գրքի մասնագետները Գրիգոր Մարզվանեցու 1706 թ. հրատարակված «Յայտմաւորքի» ընդարձակ հիշատակարանում տեղ գտած դառը տողերին. «Ես ի աստմանէ ոգոյն դառնուցելոյ պատահեաց ինձ երկուց ոմանց բազում վնասս զոր ոչ գրեցից զանուանէ նոցին. զի մի յամօք կրեցեմ ի լսողաց ի ասղէն. և կամ վատանուն ընկալցին ի մէջ ազգացս. զի յաղագս բազում ազահութեանց իրեանց յափշտակեալ դարանագործութեամբ ի ձեռաց իմոց զամենայն տպագրութեանս իմ ծաղկագրով և այլն ամենայն, և ոչ մի ինչ մաս մի բնա ոչ ընկալայ»։ Մարզվանեցու տպարանն ու տառերը ոչ ազնիվ ճանապարհով դարձել են Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու սեփականությունը<sup>10</sup>։ Մարզվանեցին ստեղծում է նոր տպարան («Նոյնպէս և հաստատեցեր կրկնապատիկ տպարանս քո ատաւել քան զյափշտակեալն ի ձեռաց տառապելոյս։ Թէպէտ երկու տասան ամ աշխատեալ իմ, զի չորացեալ ի չքաորութենէ գոյից ըստ պիտոյից մարմնոյ։ Եւ եղեւ որպէս խեցի. և կամ ճրճողով, միայն ի տանիս որդովք իմովք»)։ Այս տասը տարիների արձագանքը երկար կմնա նրա սրտում, որին հետագայում կապելանա նաև նույնանման մեկ այլ անհաջողություն։ Այդ մասին Մարզվանեցին կակնարկի 1730 թ. հրատարակած «Յայտմաւորք»-ում. «Եւ ի ՌԺԾԵ թվին կարողութեամբն Աստուծոյ նախ տպեցի... այամաւորս, զորս յետոյ ազահեցան ընկերացեալքն իմ, և ոչ կացին յառաջին պայմանին և գրկեցին զիս անխնայ, և զիմ բաժինս ափշտակեցին յինէն. զոր ի շինէն և

<sup>10</sup> Ն. Ռսկանցան, Նորահայտ մի էջ հայ մատենագիտության պատմությունից, «Էջմիածին», 1968, № 1, էջ 61, Բ. Կորկոտյան, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, էջ 84;



ի թափելն զգաղափար արճճէ գրեթացն մինչ ԺԲ ամ աշխատեցայ:

1706-ից մինչև 1784 թվականը՝ 28 տարիների ընթացքում Գրիգոր Մարզվանեցին հրատարակել է մեկ տասնչափից ավելի առնու գիրք, որը հսկայական աշխատանք է XVIII դ. առաջին կեսի հայ տպագրական գործում<sup>11</sup>: Նրա տպարանի աշխատակիցների թվում հիշատակվում են Բաղդասար դպիրը (սրբագրող), Մարզվանեցու ավագ որդի տիրացու Ներսեսը (օրինակները հարմարեցնող, շարող և արճիճը ցրող), կրտսեր որդին՝ տիրացու Թազվորը (շարող և արճիճը ցրող), կեսարացի Հակոբ դպիրը («տպարանագարկ»), Սահակը (թանաք եփող), ինչպես նաև՝ Եսային, Աղվանը, Մակարը, Լեհացի Գրիգորը, թիֆլիսեցի Տեր-Գևորգը, տիրացու Դեվլեթը, «զգանջացի Հովհաննեսը» (թղթի աշխատանքները):

Վերածնելով Կ. Պոլսի առաջին տպագրիչ Աբգար դպրի և շարունակելով Երեմիա Չեղեպի Քեոմորճյանի նախածնունդունը, ինչպես շեշտում է Հակոբ Ծ. Սիրունին, Գրիգոր Մարզվանեցին կարողացավ տեղի տպագրական գործի երկու շրջանները կապել իրար<sup>12</sup>:

Գրիգոր Մարզվանեցին իր ժամանակի ծնունդն էր:

XVIII դ. առաջին երեք տասնամյակներում Կ. Պոլսում ծավալված աշխույժ տպագրական գործը (Աստվածատուր դպրի, ս. Էջմիածնի և ս. Սարգսի, Սարգիս դպրի, Սարգիս Եվդոկիացու, Պետրոս Լատինացու, Գրիգոր Ստամբուլցու, Էտկար Գնդեվան-

ցու, Մարտիրոս Մարգարյանի, Բարսեղի ու Հակոբի, Աբրահամ Թրակացու հրատարակությունները) վկայում է ոչ միայն տեղացիների, այլև բոլոր հայկական գաղթօջախների հասարակության հետաքրքրությունը դեպի գիրքը: Ընդ որում, ընդգրկվում են կրոնական, դավանաբանական, պատմական, փիլիսոփայական, գեղարվես-



Գրիգոր Մարզվանեցի.—Գրիգոր Լուսավորիչ, 1706 թ.

տական (քանաստեղծություններ), քերականական, ուսումնական և այլ բնույթի հրատարակություններ<sup>13</sup>: Այսօրինակ գրափրությունը թելադրված էր Կ. Պոլսի հայ

<sup>11</sup> Խորհրդատետր սրբազան պատրագի... 1706, 43 էջ: Ծառ սրբոյ վկայիցն ճշմարտին Աստուծոյ ազգաց և ազանց՝ հանուրց Քրիստոնէից... որ կոչի Յազմատուրք, 1706, 1043 էջ, Գիրք վիպասանական որ կոչի համանունակի Ագաթանգեղոս, 1708, 440 էջ: Աստուծով հանդերձ գիրք այբուբենանց, յաղագս վարժման մանկանց տղայոց (Այբբենարան Հոհան Ակնեցու), 1712, 163 էջ: Յովհաննէս Ջուղայեցի (Մրգուզ), կրթութիւն հաւատոյ: 1713, 251 էջ Յովհաննէս Ոսկեբերան, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին..., 1717, 982 էջ: Գիրք պատմութեանց երկրին Տարօնոյ, որ կոչի Ջեներ, 1719, 268 էջ: Սուրբ գիրքս հարցմանց երիցս երանեալ սուրբ հօրն մերօյ Գրիգորի Տաթևացոյն, 1720, 28 էջ, Գիրք տօմարաց հայոց, հոսմեացոց եւ պարզատօմար..., 1723: Գիրք Աղօթից սրբոյն Գրիգոր Նարեկացոյ Հոգեկիր հուտորի, 1726, 481 էջ, Ծառ Սրբոց վկայիցն... (Յազմատուրք): 1730, 729 էջ: Ներթողեանք Ասացեալ այրն Աստուծոյ Ոհան Ոսկեբերան... 1784, 132 էջ:


<sup>12</sup> Հակոբ Ծ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, առաջին հատոր, Պելրուք, 1965, էջ 660:

<sup>13</sup> Կ. Պոլսի հայկական տպագրական գործի այսօրինակ աշխուժությունը նպաստեց, որպեսզի սուլթան Ահմեդ Գ (1703—1730) հատուկ հրովարտակով վերականգնի Մելիմ Ա-ի (1417—1520) կողմից տպագրական գործը թուլլատրելու իրավունքները: Բալագիդ Բ (1447—1512) մահվան դատաւճռով արգելել էր տպագրության գործը Թուրքիայում:



հասարակության մշակութային կյանքի զարգացման ընդհանուր իրավիճակից:

XVIII դ. Կ. Պոլսում բանաստեղծություններ էր տպագրում Բաղտասար դպիրը (1683—1768): Ծարտարապետության բնագավառում լայն համարում ունեւ Պալյան ընտանիքը: Պալի Պալյանը (1682—1725) շենքեր վերանորոգողից հասավ «Արքունի



Գրիգոր Մարզվանցի.—Գրիգոր Լուսավորիչ, 1705 թ.

ճարտարապետի» աստիճանի՝ երկու դար անընդմեջ տոհմին ժառանգելով այն: XVII դ. սկիզբ է առնում Ակարիչ Մանասենների տոհմը (տաղանդավոր էր հատկապես Ռաֆայելը՝ իտալական կրթությանը)՝ պալատական Ակարիչներ, որոնք թուրքական իրականության մեջ հիմնավորեցին հաստոցային Ակարչությունը, բարձրացրին գեղանկարի դերը հասարակական կյանքում: Անվանի Ակարիչների համբավ ունեին նաև կեսարացի եղբայրներ Եսային ու Բարսեղը: Նոր, պրոֆեսիոնալ երանգ է

ստանում ժողովրդական կիրառական արվեստի բազմաբնագավառ զարգացումը, որի փայլուն վկայություններից է Տյուզյան ոսկերչական գերդաստանի մեծ համարումը հասարակական կյանքում: Փայտի գեղարվեստական փորագրման վարպետի անուն ուներ Մարտիրոս Բյուզանդյանը: Ահա, այսօրինակ միջավայրում գրքեր է հրատարակում Գրիգոր Մարզվանցին: Նրա հրատարակչական գործում առաջնահերթ նշանակություն ունեւ գրքի տպագրական վարպետությունը: Ինչպես տեսանք վերևում, նրա ուշադրության կենտրոնում են եղել տառեր Ակարելը, ձուլելը, նրանց շարվածքը, գլխագրերը: Մարզվանցու համար ոչ պակաս արժեքավոր էր տպագրական գործի մեկ այլ կողմը՝ գրքի Ակարագարդումը:

«ՆԿԱՐԵԱԼ ԵՒ ՓՈՐԵԱԼ ՁԵՌԱՄԲ ԳՐԻԳՈՐ ՏՊԱԳՐԻ...»:

Գրքի Ակարագարդման բնագավառում Մարզվանցու համար օրինակ կարող էին հանդիսանալ այն բազմաթիվ հայկական Ակարագարդ գրքերը, որոնք լույս էին տեսել Վենետիկի ու Ամստերդամի տպարաններում: Նրա գործունեության ուղեմիջն էր հատկապես Ոսկան Երևանցու տպագրության արվեստը, որի մասին ունի հիշատակություն. «Երանելի Ոսկան վարդապետն հրամանա տեսուն Յակոբ սրբազան կաթողիկոսին ՌՄԸ (1658)<sup>14</sup> թվին գնացեալ Ամստերդամ բազում դրամով վասն տպարանի և գտեալ անդ շինող գրերաց գեղեցիկ և յոյժ որպէս և տեսանէքդ զԱստուածաշունչ և զշարական զայլսն»: Բնական է Մարզվանցու հիացմունքը Ոսկան Երևանցու «Աստվածաշնչից» (1666 թ., Ամստերդամ): Դա ոչ միայն առաջին հայերեն տպագիր Աստվածաշունչն էր, այլև հիրավի գեղարվեստական ընտիր ձևավորմամբ առաջին հայերեն գիրքը. ընտիր տառատեսակներ, զարդագրեր, գլխատառեր, էջային Ակարներ, որոնք զգալի նշանակություն ունեցան հայկական գրքային արվեստի հետագա զարգացման համար: Աստվածաշնչի Ակարների (159 հատ) մի մասը եվրոպայում մեծ համարում ունեցող անվանի արվեստագետների ստեղծագործությունների փորագրություններն էին (Ռաֆայել, Հենրիկ Հոլցհուս): Իսկ գրքի վերջում տեղադրված էին Ալֆրեդ Դյուրերի փորագրությունների «Ապոկալիպսիսի» շարքը (1498 թ., հրատարակվել է 1511 թ.):

<sup>14</sup> Ոսկան Երևանցին Էջմիածնից Եվրոպա է մեկնել 1662 թ. սեպտեմբերի 27-ին: Տես՝ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. Ա., Երևան, 1977, էջ 481:



Փորագրություններն ունեն միացագիրը: XVI դարի վերջում և XVII դ. սկզբին հայտնի են չորս Քրիստոֆ վան Զիհեններ և երկու Կոռնելիս Կարելս վան Զիհեններ, որոնք զբաղվել են փորագրությամբ<sup>15</sup>: Սըրանց փորագրությունները, հատկապես Քրիստոֆ վան Զիհեն երկրորդի աշխատանքները (1582, Բագել—1652, Ամստերդամ) լայն տարածում են ունեցել և տեղ են գտել բազմաթիվ հրատարակություններում: Հայկական գրքերի նկարազարդումներում ևս հանդիպում ենք այսպես կոչված «թափատող» փորագրությունների, որոնք պարբերաբար տեղ են գրավում Ծարակնոցներում, Տաղարաններում, Սաղմուններում, ինչպես նաև պատմա-փիլիսոփայական աշխատություններում: Առաջնությունը գրավում են Ոսկան Երևանցու «Աստվածաշունչի» նկարները: Ավելին. նույն նկարները շատ հաճախ հանդիպում են նույն ժամանակ, բայց աշխարհագրական տեսակետից իրարից շատ հեռու տպագրական կենտրոնների հրատարակություններում: Հնարավոր է հետևյալ եզրակացությունը. հիմքը՝ Մատթեոս Ծարեցու կողմից Ամստերդամում ձեռք բերած փորագրություններն են, որոնք օգտագործվել են ինչպես նրա, նույնպես և հաջորդի՝ Ոսկան Երևանցու հրատարակած գրքերում. «Յիսուս Որդի» (1660), «Ծարակնոց» (1665), «Աստուածաշունչ» (1666) և հաջորդաբար վերափորագրվել տարբեր հրատարակիչների տպարաններում: Այնքան սովորական է եղել փորագրությունների այսօրինակ գործածությունը, որ նույնիսկ նույն դիմանկարը տարբեր գրքերում ստանում է տարբեր անվանում: Օրինակ. «Կրթություն հասարակ» (1713, Կ. Պոլիս) գրքի հեղինակ Հովհաննես Մրքուզը տպագիր հմայիլներում հանդես է գալիս որպես Նարեկացի, Գրիգոր Տաթևացի, Ղազար Զահկեցի: Գավազանն ու Ավետարանը ձեռքին, կաթողիկոսական զգեստով կրծքից պատկերված դիմանկարը, որը ձեռք Գլակ է Գ. Մարգվանեցու 1708 թ. հրատարակության մեջ, Ներսես Ծնորհալի է «Յիսուս Որդի»-ում (1682), Նարեկացի «Գիրք Աղօթից»-ում (1726), Հովհաննես Ոսկեբերան «Ներբողանք»-ում (1734):

Գրիգոր Մարգվանեցին ևս օգտագործում է Ոսկան Երևանցու Աստվածաշունչի փորագրությունները: Նա կրկնօրինակել է «Կենաց ծառը» (Մատթեոսի Ավետարանի

սկզբնազարդը), «Խաչելությունը», «Հարությունը», «Մուտք Երուսաղեմը», որոնց վրայից հանում է Քրիստոֆ վան Զիհենի միացագրերն ու փոխարինում իրենով՝ «ԳԲ»: Մարգվանեցին օգտագործում է նաև անհայտ փորագրողների գործերը, ինչպես օրինակ՝ «Աետունը» («Համառոտ պատմություն տնօրինականաց» գրքից, Վենետիկ, 1700, էջ 2), «Աստուածամայրը» (Ստեփանոս Լեհացու թարգմանած «Բուրաստան աղօթից» գրքից, Վենետիկ, 1685, էջ 212), տիտղոսաթերթը («Յիսուս Որդի» գրքից, Ամստերդամ, 1660) և այլն:

Ուշագրավ է մեկ օրինակաչափություն. օտար փորագրություններից կատարված ընդօրինակությունները իր հրատարակած գրքերում նա չի տեղադրում: Վերոհիշյալ կոմպոզիցիաները, ինչպես նաև «Մկրտություն», «Արրահամի զոհաբերությունը», «Քրիստոսի տաճար մտնելը», որոնք նույնպես ունեն «ԳԲ» ստորագրությունը, բացակայում են նրա հրատարակություններում: Դրանք օգտագործված են Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հրատարակած «Յայսմաուրք»-ում (1708), «Աետարան»-ում (1729), Ղազար Զահկեցու «Գիրք Աղօթոյս, որ կոչի երգարան»-ում (1737), Կ. Պոլսի մի շարք այլ տպարանների գրքերում, ինչպես նաև տեղի չունումնասիրված տպարաններից մեկի հրատարակած հմայիլներում:

Հմայիլները, որոնք Ուրբաթագրքի զգալի մասն են կազմում, ժողովրդի մեջ լայն տարածում ունեին<sup>16</sup>: Նրանք պարունակում են աղոթքի ու չարից փրկելու տողեր: Դեռևս ձեռագիր հմայիլներում կազմավորվել է նրանց կանոնիկ կառուցվածքը, որտեղ բնագրային մասերն իրարից բաժանվում են մանրանկարներով: Տպագիր հմայիլներում ևս պահպանվում է ավանդական ձևը, երկար (երբեմն 8 մետրի հասնող), նեղ (հիմնականում 10 սմ), միագույն, իսկ երբեմն՝ տպագրությունից հետո ներկված (հատկապես կարմիր): Կ. Պոլսում լույս տեսած հմայիլները տպագրվել են 1709—1747 թթ. «ի տպարանումն Գնդեվանցի Վարդանի որդի Արահասակ և ծաղկածաւալ բարեպաշտ Էտկարին» (1709 թ. հմայիլի հիշատակարանը, Մատենադարան, № 50):

Բանասիրության մեջ հայտնի է միայն Էտկար Գնդեվանցու տպարանից դուրս ե-

<sup>15</sup> G. Waller, Biographisch Woorden bock van Woord nederlandsche Graveurs. S. Graveha-ge, 1938, p. 300.

<sup>16</sup> А. А. Одабашян, Народные верования армян (По материалам рукописны далисманов XV—XIX вв.). «Кавказский Этнографический сборник», Москва, 1976, вып. VI, стр. 107—130.



կած «Ավետարանը» (1740)<sup>17</sup>: Հմայիլների մի մասի հիշատակությունները, ինչպես նաև նրանց գեղարվեստա-տպագրական համեմատությունը հնարավոր է դարձնում որոշակի խումբ առանձնացնել, որոնց տպագրիչը Գնդեվանցի Վարդանի որդի էտկարն է. «Այլ և յիշեցէք ՚ի բարին ձեզ և ամենեցուն ծառայ ՚ի տպարանումն Գրնդեվանցի Վարդանի որդի նորահասակ և ծաղկածառ պարեպաշտ էտկարին. եւ հոգևոր եղբորըն իրում սպասաորոդ և գործող Շուտութեցի Բարաքիասի որդի Մահտեսի դրպիր Մինասին. խնդրեմք ի ձեզ, ոյ սիրելիք մեր ՚ի տեր զայս վայելուչ և ընտիր օրինակ է առեալ հեմայիլս զարդանալով կամ օրինակելով աղօթիք ձերովք զմեզ և զմեր ծնօղքն յիշեցիք...»: Այսպիսին է էտկար Գնդեվանցու հմայիլների ամենամեծ հիշատակարանը<sup>18</sup>:

Տպագրիչը հիմնականում օգտագործում է Գրիգոր Մարզվանցու փորագրությունները: Կան նաև Մարզվանցու ինքնուրույն կոմպոզիցիաները. Սբ. Գևորգ, Սբ. Սարգիս, Սբ. Ստեփանոս, ինչպես նաև, պարզունակ մտածողությամբ արված «Աքրահամի զոհաբերությունը», «Աստուած և Քրիստոս»-ը (ամպերի վրա, երկրագունդը ձեռքին, Քրիստոսը՝ խաչափայտով, իսկ վերևից ճառագայթում է սբ. Հոգին) և այլն:

Այս աշխատանքները ստեղծված են բավական ինքնատիպ մտածողությամբ, առանձին մանրամասների ճշգրիտ պատկերումներով, շարժուն են, լուսուսովերի մի փոքր պայմանական զգացողությամբ, որը թելադրված էր փայտի փորագրության տեխնիկայից: Դրա հետ միասին, այն աշխատանքներում Մարզվանցին չունի ստեղծագործական ազատության այն զգացողությունը, որը բնորոշ է նրա ինքնուրույն և հիմնական աշխատանքներին: Գրքերի սկզբնագարդերի, գլխատառերի և լուսանցազարդերի նախշերը փոխառնված են հայկական ձեռագրերի մանրանկարներից և «հարմարեցված» փորագրական արվեստի պահանջներին:

Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հետ ունեցած վեճից և տպարանից զրկվելուց հետո, Գրիգոր Մարզվանցին ձեռնամուխ է լինում նոր տպարանի ստեղծ-

ման և պատրաստում է նկարների կլիշեներ, որոնք ինքնուրույն նկարների փորագրություններ են:

Առաջին գործը՝ 1706 թ. հրատարակված «խորհրդատետր»-ի տիտղոսաթերթն է: Պահպանելով մինչ այդ հրատարակված գրքերի կանոնիկ տիտղոսաթերթերի կառուցվածքը (չորս անկյուններում՝ Ավետարանիչներն իրենց խորհրդանիշերով վերելում՝ Աստծո կամ Քրիստոսի հետ կազմված կոմպոզիցիա, մեջտեղի կողային մասերում՝ Գրիգոր Լուսավորիչն ու սրբերի դասը դրված որևէ պատմիչ), Գրիգոր Մարզվանցին աննշան փոփոխություններ է կատարում, տեղափոխում է Դուկասի և Հովհաննեսի պատկերման տեղերը, վերեվում տեղադրում է «Խորհրդատու ընթրիք»-ի տեսարանը, որով և տարբերում է տվյալ պատկերը 1686 թ. Վենետիկում տպագրված «Խորհրդատետր»-ի տիտղոսաթերթից: Այս աշխատանքի տակ ևս նա չի ստորագրում: Հետագայում նա շքեղ տիտղոսաթերթ կատեղծի Զենոբ Գլակի, Հովհան Ոսկեբերանի, Նարեկացու և Ազաթանգեղոսի հրատարակությունների համար, որտեղ նույն կոմպոզիցիան հանդես է գալիս աննշան փոփոխություններով. կորածն ամպերի քույաների մեջ խաչն ու երկրագունդը ձեռքին Քրիստոսն է (XVII—XVIII դդ. հայ գեղանկարչությանը մոտեցող ոճով), իսկ ցածում՝ Կ. Պոլսի Մայր եկեղեցին հիշեցնող ճարտարապետական կոթողի պատկերում (փորձելով լուծել հեռանկարի հարցերը): Նկարի ներքևում ստորագրում է. «1157 ԳրԳ» [1708, Գրիգոր]: Մարզվանցին ունի նկարչի և փորագրողի բարոյական իրավունքների գիտակցությունը:

Նույն թվականին լույս տեսած «Յայսմատուրք»-ը հեղաշրջող նշանակություն պետք է ունենար հայ տպագիր գրքի ձեվավորման պատմության մեջ:

«Յայսմատուրք»-ի համար Գրիգոր Մարզվանցին փորագրում է վեց մեծ թերթ. «Գրիգոր Լուսավորիչ», «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին ու Խոսրովիդուխտին», «Մոզերի երկրպագությունը», «Խաչելություն», «Հարություն», «Գրիգոր Լուսավորչի չարչարանքը Տրդատի կողմից», որոնք բոլորովին ինքնուրույն ստեղծագործություններ են: Դրանց ստեղծման ժամանակ Մարզվանցին օգտագործում է եվրոպական փորագրությունների կերպարները, ճարտարապետական որոշակի մանրամասներ, բայց սյուժեների մեկնաբանումները, զանազան ստորոգելիների ու զգեստների պատկերումները ինքնուրույն են: Ավելին, դրանք գեղանկարչության մտածո-

<sup>17</sup> Հայ հնագիտական գրքի մատենագիտական ցուցակ, Երևան, 1968, էջ 68:

<sup>18</sup> Մատենադարան, № 63: Ոսկանի «Աստվածաշնչի» և Գրիգոր Մարզվանցու փորագրած նկարներով է զարդարված նաև 1727 թ. մայիսի 1-ին տպագրված հմայիլը, որը 1968 թ. Վազգեն Ա կաթողիկոսը հանձնել է Մատենադարանին (Փարիզից):



դրության սկզբունքներով ստեղծված նկարներ չեն, առանձնահատկություն, որը բնորոշ չէ XVII և XVIII դդ. սկզբի փորագրություններին, այլ կատարված են ժամանակի հաստոցային գրաֆիկայի ըմբռնումների մակարդակով:

Ինքնուրույն նկարների փորագրության աշխատանքը դժվարին ու բարդ գործ էր Մարզվանեցու համար: Այդ մասին նա գրում է գրքի հիշատակարանում. «Եւ ամենայն զանազան ձագագրերով փառքերով, և գեղեցիկ կանոններով և մեծամեծ խորանիւք փատեալ զարդարանօք զարդալեցի և պատկերս ըստ իւրոյ պիտոյից՝ նկարել իմով և քանդակել փորուածով. երբեմն և երբեմն նուաղէր սիրտ իմ. և ցընդէր միտքն իմ. նեղանայր սիրտ իմ. ցամաքէր զօրութիւն իմ. եւ լոյս աչացս երբեմն նուագիր՝ ... Եւ իմ միայն արհեստաւորութեամբ ըստ միջի սեաւ գրոյն յամենայն զարդարանօք. խառնեալ միմիւրք»:

Դժվարության և ծանր աշխատանքի հետևանք է նաև այն, որ երբեմն Մարզվանեցին շփոթում է և նկարը նույն տեսքով փոխադրում ու փորագրում փայտի վրա, որի հետևանքով վերատպության ժամանակ սխալ է առաջանում. արյան շիթը Քրիստոսի աջ կողից է լցվում ավազանի մեջ («Եւ աչելոյություն»): «Յայսմաւորք»-ի թերթային նկարների առանձնահատկություններից են հայկական թեմաների (Գրիգոր Լուսավորչի հետ կապված) մուտքը գրքային գրաֆիկա և նրանց վարպետ մեկնաբանումները: Միաժամանակ կարևոր է փայտի փորագրության այսօրինակ արվեստը, որից և այդ թերթերը ստանում են յուրատիպ արժեքավորում<sup>19</sup>:

Փայտափորագրության արվեստը վաղուց հայտնի էր Եվրոպային (IX դարից: Հայրենիքը Չինաստանն է: Քսիլոգրաֆիան կազմված է հունական Xylon= փայտ և grapho= գրում եմ բառերից): Օգտագործվում էր հիմնականում տանձենու, խնձորենու, լորենու փայտը, որը կտրում էին դանակով, հեռացնելով նիստի տարածքի ազատ մասերը: Տպագրության ժամանակ ներկը նստում էր բարձր մնացած հատվածների վրա, որից և տպագրության այս տեսակը ստացել է իր անվանումը՝ բարձր տպագրություն:

<sup>19</sup> 1708 թ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին ևս հրատարակում է «Յայսմաւորք» (նախաձեռնել էր 1706 թ.), բայց նկարների անկանոն դասավորությունով, վատ ընդօրինակված փորագրություններով և ընտրված աշխատանքների զգալի մասի բազմաթիվ կրկնություններով:

Նախնական շրջանում փայտի փորագրության արվեստն ուներ իր սահմանափակումները. փորագրությունը կատարվում էր փայտի հյուսվածքների երկայնակի դասավորության ուղղությամբ: Փայտի փորագրության բնագավառում են աշխատել Ա.



Գրիգոր Մարզվանեցի.—Մոգերի երկրպագությունը, 1705 թ.

Դյուրերը, Հանս Հոլբեյն կրտսերը և այլք<sup>20</sup>: Փայտի փորագրության արվեստի նոր փուլը մասնագետները համարում են XVIII դ. վերջը, երբ փորագրիչները դադարում են աշխատել միայն փայտի-ուղղահայաց շերտերով, այլ՝ լայնակի կտրվածքով՝ բոլոր ուղղություններով, որից և տեխ-

<sup>20</sup> Գունավոր փորագրության համար 1516 թ. վենետիկի հանրապետությունից պատենտ ստացավ Ուգո դա Կարպին (1480—1582), որը գրավյուրի այս տեսակը ներմուծեց «լույսուսովեր» հասկացությունը: Մրա հիման վրա համաշխարհային համարում ստացավ առավել կատարելագործված նապոնական «Կյարո Սկուրո»-ն (լուսաստվեր)՝ մի քանի տախտակներով տպագրության տեխնիկան:



նիկայի այս տեսակը ստանում է «տոնա-  
լին» կամ «գլխահատային փորագրություն»  
անունը:

1922 թ. Փարիզում բացված փայտի փոր-  
ագրական արվեստին նվիրված իր հող-  
վածում արվեստի այդ տեսակի մեծ գիտակ  
Պիեռ Հյուսմանը ուշադրություն դարձրեց  
այն հանգամանքի վրա, որ այսօրինակ  
տեխնիկան («տոնալին») Ֆրանսիայում և  
Անգլիայում սկսվեց կիրառվել 1780-ական  
թվականներից<sup>21</sup>, այնինչ իրեն հայտնի ա-  
մենահին օրինակը՝ հայ արվեստագետ  
Գրիգոր դպրի աշխատանքն է: Պ. Հյուս-  
մանն այս եզրակացության է հանգում ծա-  
նոթանալով Գրիգոր Մարզվանեցու տպա-  
գրած «Գիրք վիպասանական, որ կոչի  
համանունակի Ագաթանգեղոս» (1709)  
գրքի նկարներին («Գրիգոր Լուսավորիչ»,  
«Գրիգոր Լուսավորչի չարչարանքը Տըր-  
դաստի կողմից»):

Արևելյան արվեստի քաջ գիտակ Արմե-  
նակ Սազրզյանը (1872—1944), Ստամբու-  
լի «Մշակոյթ» տարեգրքի գրատանը ծա-  
նոթանալով հայ հնատիպ գրքերի, ոգևոր-  
ված հողված է գրում Գրիգոր Մարզվա-  
նեցու մասին, շեշտը դնելով հարցի այս  
կողմի վրա<sup>22</sup>:

Վկայակոչելով Պ. Հյուսմանի հողվածի  
տեսակետները («L'illustration», Փարիզ,  
1922, 11 փետրվարի), Ա. Սազրզյանը տա-  
րակումում է, թե ինչպե՞ս կարող էր տեխ-  
նիկայի այս գյուտը Պարսկաստանից ներ-  
մուծվել (ըստ Հյուսմանի): Ա. Սազրզյանն  
անդրադառնում է Նոր Ջուղայի տպարանի  
պատմությանը և անհավանական է համար-  
ում XVII դ. կեսերին սկզբնավորվող  
տպարանի համար տեխնիկայի այդօրինակ  
կատարելություն: Ա. Սազրզյանն իրավա-  
ցի է: Նոր Ջուղայի տպարանը սկզբնական  
շրջանում «ինքնուս», «ինքնագործ» տպա-  
րան էր, խարսխված գործը նախաձեռնող-  
ների եռանդի, ձեռներեցության և տրամա-  
բանության վրա, և փայտի փորագրման

կատարելության մասին խոսք չէր կարող  
լինել<sup>23</sup>:

Փայտի փորագրության այս տեսակը լայն  
տարածում ուներ Պարսկաստանի և Հընդ-  
կաստանի կիրառական արվեստի ամենա-  
կարող ճյուղերից մեկում՝ դաջարվեստում:  
Եկեղեցական դաջե վարագույրների ընտիր  
օրինակները (Էջմիածնի վանքի հավաքա-  
ծու) դրա վկայություններն են: Հիշենք, որ  
Մարզվանում առաջնակարգ տեղ էր գրա-  
վում չթի ծաղկավոր քեզը (քեհեզը):

Կ. Պոլսի Սկյուտարում կենտրոնացած  
Լին հայտնի հայ յազմածիները, որոնց  
փայտափորագրական արվեստին չէր կար-  
ող ծանոթ չլինել Գրիգոր Մարզվանեցին:  
Նա ոչ միայն ինքնուրույն տպագրական  
գործ սկսեց, այլև նկարչության և փորա-  
գրության աշխատանք: Սկսեց պարզ ու  
միամիտ պատկերացումներով: Փայտի վրա  
ընդօրինակում էր այլ հրատարակություն-  
ների վերատպությունները: Աշխատում էր  
մետաղի փորագրությանը նման, ձգտում էր  
հարազատ մնալ իր իսկ ստեղծած նկար-  
ների արտահայտչականությանը: Այստե-  
ղից էլ՝ այդ մեծ տեխնիկական կատարելա-  
գործումը<sup>24</sup>:

Գ. Մարզվանեցին ծանոթ չէր եվրոպա-  
կան փայտափորագրության անվանների  
գործերին, չգիտեր գրքի և հաստոցային  
գրաֆիկայում գոյություն ունեցող նշանա-  
վոր դպրոցներն ու ուղղությունները, չգի-  
տեր, որ ինքը հեղաշրջում է կատարել  
փայտափորագրության արվեստում: Նա  
նկարում ու փորագրում էր ներքին մղում-  
ներով: «Ցայմամուրք»-ում, Ագաթանգեղո-  
սի ու Զենոբ Գլակի գրքերում տեղադրված  
Գրիգոր Մարզվանեցու նկարները կատար-  
ված են 1705—1708 թվականներին:

Առաջին աշխատանքներից «Մոզերի եր-  
կըրպագությունը» (1705) կատարված է  
փայտի փորագրության արվեստի ավան-  
դական ձևերով, որոնք ավելի են խորաց-

<sup>21</sup> Նկատի ունի Տ. Բյուրիկին (1753—1828), որը  
փայտը սկսեց փորել մետաղի փորագրության գոր-  
ծիքներով (շտիխներով), օգտագործում էր կով-  
կասյան սամշիտը կամ հաճարենին՝ փայտի թելերին  
հակառակ ուղղությամբ:

<sup>22</sup> Հողվածի բնագիրը պահպանվում է Ե. Չա-  
րենցի անվան գրականության և արվեստի թան-  
գարանում: Թ. Ազատյանի ֆոնդ. № 32/3: Այն  
տպագրվել է «Մշակոյթ»-ում (Իրախանյու, 1948),  
որի առաջաբանում, խմբագիր Թ. Ազատյանը նշում  
է (էջ 24), որ այս հողվածը «կարասի երգը եղավ  
միջազգային գեղարվեստական գրականության մեջ  
նախանձելի համբավի մը տիրացող բազմահմուտ  
ողբ. բանասերին»:

<sup>23</sup> 1638 թ. հրատարակած «Սաղմոսի» հիշատա-  
կարանում կարդում ենք. «Զի ոչ եմք տեսել ի  
վարպետե եւ ոչ ունիմք ուսուցիչ, քայց միայն գին-  
գին սուրբ. եւ զիղծս եւ զկեղանի աղօթս հոգե-  
ւոր Հօրն մերոյ գնացելոյ առ Տէր»: Լ. Գ. Միսա-  
յան, Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած  
գրքերը: Նոր Ջուղա, 1972, էջ 16:

<sup>24</sup> Թեոդիկը գգում էր Կ. Պոլսի գրքի տպա-  
գրության համար փայտե կլիշեների արժեքը, երբ  
«Տիպ ու տառ»-ում (Կ. Պոլիս, 1912, էջ 59) տե-  
ղադրում էր Մարտիրոս Բյուզանդյանի տպարա-  
նում 1722 թ. հրատարակված «Գիրք եւ ճան հո-  
գեշահ» գրքից վեց նկար ու գրում, որ սրանց մի-  
ջոցով «եիրին է գաղափար կազմել նոյն ատենի  
Կ. Պոլսոյ փայտագործութեան արուեստի մասին»:



րել նկարի հարթապատկերային լուծումները: Նույն առանձնահատկությունը բնորոշ է նաև «Գրիգոր Լուսավորչի չարչարանքը Տրդատի կողմից» (1705) թերթին: Մյուս աշխատանքներում արդեն տեսնում ենք փայտափորագրման տեխնիկայի խառը օգտագործում, որտեղ փորագրողը կարողանում է պահպանել օֆորտի մետաղի վրա (փորագրման նուրբ տեխնիկա) գծերին բնորոշ փափկություն, կիսատոների լուծումներ: Օր.՝ «Խաչելություն» թերթում (1706), որտեղ «Քրիստոսի ֆիգուրը, Աստվածամոր թիկնոցը լուծված են օֆորտի ֆակտուրայի սահմաններում, «Հարություն» թերթում (1706) նույնիսկ առկա են ակվատինոսայի տպավորություն, գծի ազատ լուծումներ, ցանցկեն հատվածներ: Նույն հնարներին հանդիպում ենք նաև մյուս թերթերում: Այսօրինակ աշխատանքը պահանջում էր փորող գործիքների կատարելագործում, որը և արել է Մարգվանեցին: Անհրաժեշտ էր հատուկ տեսակի փայտ, որի մասին նա նաև նշում է հիշատակարանում. «Եւ ևս յիշեալ լիջի զբարերարոյ իշխանն Սահայիար Մահտեսի Խաչուկն, որ և իսկ նա շնորհեաց ինձ յիշատակ ըրախագն թափազարկի ութ և ճիղեանս յոյժ գեղեցիկ՝ որով տպագրեալ է զամենայն գիրս որոյ յիշատակն օրհնութք եղիցի»: Հավանաբար կիշեները փչացել էին, եթե 1730 թ. վերահրատարակված «Յայսմաւորք»-ում նա կարողանում է տեղադրել միայն «Գրիգոր Լուսավորչի» նկարը:

Հայաստանի պետական պատկերասրահում պահպանվող «Քրիստոսի Ծնունդը» («Մոգերի երկրպագությունը»), «Խաչելությունը», «Հարությունը» և «Գրիգոր Լուսավորչի չարչարանքը Տրդատի կողմից» (որը «Խորհրդատետր»-ի տիտղոսաթերթն է) Գրիգոր Մարգվանեցու նկարներն ու փայտափորագրություններն են, բայց առանձնացված են նրա՝ 1706 թ. «Յայսմաւորք»-ից: Թանգարանային հավաքածուում նրանք հետաքրքիր են միայն որպես ավելի քան 270 տարվա կյանք ունեցող տպաքանակային վերատպություններ:

Բարձր գնահատելով Գրիգոր Մարգվանեցու կատարածը փայտափորագրության բնագավառում, Ա. Սազրզյանն իր վերոհիշյալ հոդվածում իրավացիորեն քննադատում է Հարություն Քյուրդյանին, որը գրում է, թե «Հայ տպագրական փայտափորագրական մանրանկարչության արուեստը... ստեղծագործական ոչինչ ունեցած է»<sup>25</sup>: Սազրզյանը, իրավացիորեն, սխալ է համարում նաև Հ. Քյուրդյանի կողմից փայտի փորագրության արվեստը մանրանկարչություն համարելը: Դրանք մանրանկարիչներ են, այլ գրքի նկարագրողման կարևորագույն օղակը կազմող թերթային նկարներ, որոնք, ճիշտ է, գեղարվեստական մտածություններն որոշակի կապեր ունեն մանրանկարչական արվեստի հետ, բայց որպես արվեստի տեսակ՝ գրքի նկարագրողումներ են:


Հիրավի, XVII դ. վերջում և XVIII դ. սկզբում հայ իրականության մեջ ձևավորվում է մի նոր մասնագիտություն՝ գիրք նկարագրող: Մինչ այդ հրատարակիչներն օգտվել են օտար նկարիչների փորագրություններից (կիշեներից), և առաջինը Գրիգոր Մարգվանեցին էր, որ ազգային թեմաներով բնագիր նկարներ ստեղծեց հայկական տպագիր գրքի համար: Նրա հրատարակած «Յայսմաւորք»-ը իր ծավալով և տպագրական կուլտուրայով շարունակեց Ոսկան Երևանցու Աստվածաշունչի ավանդները, բայց ուներ մեկ առանձնահատկություն՝ գրքի ձևավորման հայկական հենքը:

Հետագայում կգան շնորհալի նկարիչ-փորագրողներ Բարսեղ և Հակոբ Սեբաստացիները, Հարություն Վաղարշապատցին, որոնք նոր որակ ու նոր իմաստավորում կտան գրքի ձևավորման արվեստին, սակայն նրա կազմավորման ակունքներում պատվավոր տեղ կգրավի Մկրտչի որդի Մարգվանեցի Գրիգորը:

<sup>25</sup> Փայտափորագրական մանրանկարչությունը եւ մանրանկարիչները հայ տպագրութեան մէջ: «Բագմաւեպ», Վենետիկ, 1937, էջ 899:







ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱԾՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԾԱԿԱՏԱՄԱՐՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ**

**ՏԵՐ ԴԱՆԻԵԼ ՂԵՎՈՆԴԻ ՏԵՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

1918 թվականի մայիսի 22-ին տաճկական քանակի անապատելի հարձակումը Բաշապարանի ուղղությամբ, չնայած հայ զորքի բացակայությանը, Ապարանի շրջանի ժողովրդին խուճապի չմատնեց: Առաջին հերթին յուրաքանչյուր գյուղի քահանա եկեղեցու տազնապալի զանգահարությամբ յուր հովված ժողովրդին ուտքի հանեց և ուղարկեց ռազմաճակատ, իսկ զինվորական գործին շատ թե քիչ տիրապետած խիզախ քահանաները այդ օրերին խաչի հետ միասին և զենք վերցրած կուլի են տարել իրենց համագյուղացիներին և անձամբ էլ դիրքերը մտած կուլել՝ օրինակ ծառայելով կուլի դաշտ եկած հողագործ ժողովրդին, որոնցից մեկն էլ հանդիսանում է Ապարանի շրջանի Ղաղնաֆար (ներկայումս՝ Արագած) գյուղի տեր Դանիել Ղեվոնդի Տեր-Դանիելյան քահանան:

Տեր Դանիելը ծնվել է 1873 թվականին Ղաղնաֆար գյուղում: Պապերը գաղթել են Մշո գավառի Հասան փաշա գյուղից մոտ 180 տարի առաջ: Տոհմով եղել են քահանաներ:

Սկզբնական կրթությունը ստացել է տնային պայմաններում, հոր՝ տեր Ղևոնդի միջոցով: Այնուհետև ընդունվել է Ներսիսյան դպրոց: Այն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Բազմակողմանի պատրաստված վերադառնում է գյուղ, ամուսնանում: Հոր վախճանվելուց հետո, 1908 թվականին, ձեռնադրվում է քահանա:

Նախկինում Ապարանը ետ ընկած շրջան էր, խարխափում էր խավարի մեջ: Տեր

Դանիելի առաջնահերթ խնդիրն է լինում դպրոց բացել տալ, մանուկներին ընդգրկել այնտեղ: Թիֆլիսից «Մշակ» և «Հորիզոն» թերթերը ստանալ, ընթերցել ժողովրդի մեջ, հաղորդակից դարձնել երկրի անց ու դարձերին: Նա քահանայական իր պարտականությունները կատարելու հետ միասին զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շատ հոգսեր են ավելանում: Արևմտյան Հայաստանից, զազանի երախից փրկվածների համար նա պայմաններ է ստեղծում՝ վերքերը բուժելու, տնտեսականը ապահովելու համար:

1918 թվականի գարնանից Հայաստանի երկինքը պատեց շանթաքեր սև ամպերով: Որպես կրթված, բազմամյա փորձ ունեցող հոգևորական, նա գալիք արհավիրքներին դիմագրավելու համար ժողովրդին պատրաստում է զինվելու: Մայիսի 20-ից Ծիրակի դաշտավայրի ժողովրդի գաղթը Ապարանի վրայով դեպի Երևան և Սևան սկսվել էր, իսկ մայիսի 21-ին թուրքերը գրավեցին Հաջիխայի (ներկայումս՝ Ծաղկահովիտ) գյուղը: Առաջանում էին դեպի Ապարան: Ծրջանի բոլոր քահանաները եկեղեցիների տազնապալի զանգահարություններով ժողովրդին ոտքի հանեցին: Ժողովուրդը առանձին ջոկատներ կազմած և զինված՝ մեկնեցին առաջացող թշնամուն դիմադրելու: Մի քանի խիզախ քահանաներ իրենց հերթին ևս առանձին ջոկատներ կազմած նույնպես մեկնեցին ճակատ, որոնց թվում նաև տեր Դանիել Ղևոնդի Տեր-Դանիել-



յան քահանան, որը չբավականացավ տագնապալի զանգահարություններով: Իր դրսիքներին վերցրած ընկել էր գյուղի փողոցները, տուն առ տուն ծեծում էր դռները, դուրս կանչում, բացատրում և ոտքի հանում: Բողոքին հավաքեց գյուղի հրապարակը, եկեղեցու մոտ, միաժամանակ իր առաջարկությամբ Լաղնաֆար եկան և մտան իր դրոշի տակ մոտիկ հարևան Ծիրաղալա (ներկայումս՝ Վարդենուտ), Բլլխեր և Թաքառլու գյուղերի ժողովուրդները: Ինքը զգեստափոխվեց, հագավ զինվորական զգեստ, գլխին՝ փափախ, զինված մսփն հրացանով, մատուցեց ատրճառակով և փամփուշտների մեծ պաշարով, մարտաշունչ ճառով դիմեց նրանց. «Միրելի ժողովուրդ, մեր դարավոր թշնամին չի հագեցել արևմտահայությանը բնաջնջելուց և արյունը խնելուց, հիմա էլ հերթը մեզ է հասել, ցանկանում է մի փոքր հողակտորի վրա ծվարած մի բուն հայերիս երկրի երեսից իսպառ ջնջել: Չորս կողմից շրջապատված ենք թշնամիներով: Մեր փրկությունը կախված է միայն մեզանից, զգաստացեք, երկրորդ Ավարայրն է կրկնվում: Միթե դուք Մշո և Սասունի քաջ պապերի հետևորդները չեք: Գազանը գալիս է նախ մեր երեխաներին մեր աչքի առաջ կոտորելու, հետո մեզ մեր դուսն շենին մորթելու: Հիմա մենք արևմտահայերի նման զինաթափված ու կապտոված չենք: Ձեռքներս ազատ են, զինված ենք և պատրաստ ինքնապաշտպանության: Եթե մեռնելու լինենք, թող գեներ ձեռքերիս մեռնենք, ապագա սերունդների նգովքին չարժանանանք»:

Աշխարհագրայինները գոչեցին. «Երդվում ենք, կմեռնենք, բայց դիրքերից դուրս չենք գա»: Տեր Դանիել քահանան 150 աշխարհագրայինների հետ ոտքով գնացին Բառասարան:

Տեղ հասնելով, ներկայացան աշխարհագրայինների հրամանատար, Բաֆֆու «Խենթ»-ի որդի Առսենին (Տեր-Պողոսյան) և նրա օգնական Սեդրակ Չալայյանին, որոնք դիմավորեցին եկողներին և գոչեցին. «Կեցցե մեր խիզախ տեր Դանիել քահանան՝ իր աշխարհագրային ջոկատով»:

Աշխարհագրայինները անմիջապես դիրքեր մտան և ծաղի նման կործանեցին դեմ տված թշնամու կատաղի գրոհներին, տեր Դանիել քահանայի ղեկավարությամբ և ընդհանուր հրամանատարության կարգադրությամբ, անհուն վրիժառության մոլուցքով մարտնչեցին և հերոսաբար պաշտպանեցին իրենց բնագիծը:

Չնայած թշնամու ունեցած գերազանց ուժերին և տեխնիկային, աշխարհագրա-

յինները միայն հրացաններով զինված, թշնամուն չէին թողնում առաջ շարժվել: Միրաքի կամուրջի տակ աշխարհագրայինները թուրք զորքին աքցանի մեջ առան ու շարդ տվեցին:

Աշխարհագրայինները և տեր Դանիելի ջոկատը թշնամուն թույլ չտվեցին Բառասարանից և Բյուլլուջայից դեպի առաջ շարժվելու, մինչև 2-րդ օրվա վերջին Սարդարապատի ճակատից 6-րդ և Կորովուլի պարտիզանական գնդերն ու տասը հայդուկային հին խմբապետեր իրենց ջոկատներով, թնդանոթներով ու գնդացիներով տեղ հասնելը: Կոխը նոր թափ է ստանում, ռազմաճակատի աջ կողմը կոպում են աշխարհագրայինները և խմբապետները հրամանատար Արսենի ղեկավարությամբ, իսկ ձախ թևը՝ կանոնավոր գնդերը՝ գնդապետ Դոյուխանյանի հրամանատարությամբ: Ապարանի ռազմաճակատում իրենց աշխարհագրային ջոկատներով կոպում էին նաև չորս քահանաներ՝ Բյուլլուջա գյուղի տեր Հովհաննես քահանան, Լաղնաֆար գյուղի տեր Դանիել քահանան, Փարսի գյուղի տեր Գևորգ քահանան և Դովրի գյուղի տեր Գրիգոր քահանան: Բայց 1500—2000 աշխարհագրայիններ քաջության հրաշքներ էին գործում, վիրավորվում, բայց դիրքերից դուրս չէին գալիս, անհավասար կռիվը շարունակում մինչև մահ: Կոպում էին և կանաք՝ գեներ ձեռքերին, պատանիները, իսկ ավելի փոքրերը փամփուշտ, ջուր, ուտելիք էին հասցնում: Տեղտեղ ճակատները այնքան էին մոտենում, որ սվինամարտի էին դիմում, իրար կոկորդ կրծոտում:

Վերջապես մի քանի օրվա համառ մարտերից հետո թշնամին չդիմացավ հայերի հոժկու գրոհներին, առաջիախախտի դիմեցին մինչև Հաջիխալի, բայց ստիպված սպիտակ դրոշ բարձրագրին, զինատաղարի առաջարկ արեցին: Տեր Դանիելի ջոկատը նույնպես մյուս աշխարհագրայինների հետ փառավոր հաղթանակ տարած տուն վերադարձավ, բայց գեներ միշտ պատրաստ պահած:

Տեր Դանիելը Լաղնաֆար գյուղը հովվեց մինչև 1929 թվականը, որից հետո Մայր Աթոռի կողմից նշանակվեց Օշական գյուղի քահանա: Նա մի քանի տարուց հետո ընտանիքով տեղափոխվեց Երևան, ապրեց մինչև 1952 թվականը: Վախճանվել է 1954 թվականին և թաղվել Լաղնաֆարի (ներկայումս՝ Արագած) գյուղի գերեզմանատանը: Նրա հայրենասիրական գործունեությունը հավերժ կհիշվի:





## Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՎԱՆ ԾՔԱՆԾԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. հուլիսի 8-ին, ժամը 18-ին, Ռուսի-  
նիայի հայոց առաջնորդարանի թանգարա-  
նի սրահում տեղի ունեցավ հանդիսություն,  
որի ընթացքում, հանուն Վեհափառ Հայ-  
րապետի, ս. Ներսես Ծնորհալու անվան  
շքանշան շնորհվեց թեմական խորհրդի  
նախագահ պրոֆ., դոկտ. Գրիգոր Փամ-  
բուքչյանին՝ նրա երկարամյա թեմական  
ծառայության համար:

Հայոց Հայրապետը պրոֆ. Գրիգոր Փամ-  
բուքչյանին ուղղյալ էր 6 մայիս 1978 թվա-  
կիր կոնդակով գրում էր.

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԲՐՈՑԵՍՈՐ-ՏՈՔԹՈՐ  
ԳՐԻԳՈՐ ԲԱՄՊՈՒՔԾԵԱՆԻՆ  
ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՐՅՆ ԵՒ  
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պուրեշ

Մեզի համար մխիթարական է, որ մեր  
հաւատարո ժողովուրդի ծոցին մէջ փոքր  
չէ թիւը Մեր հարազատ զաւակներուն, ո-  
րոնք իրենց կենդանի ու եռանդուն գոր-  
ծունէութեամբ նեցուկ կը հանդիսանան մեր  
սուրբ եկեղեցւոյն, մեր նուիրական աւան-  
դութեանց ու հայ ոգեկանութեան պահպան-  
ման, աննահանջ հաւատարմութեամբ ամե-  
նայն հայոց սուրբ Էջմիածնի հանդէպ:

Այդ հոյլին պատկանող Մեր հարազատ-  
ներէն եղաք անս Դուք, Ձեր երկարամեայ  
հանրօգուտ գործունէութեամբ: Մեզի քաջ  
ծանօթ է երկար տարիներէ ի վեր Ձեր  
յարգարժան անձնատրոսութիւնը, որպէս ու-  
մանահայ Թեմական խորհուրդի ատենա-  
պետ, որպէս պետական երեսփոխան, որ-  
պէս գիտնական-բժիշկ և բրոֆեսոր Պուր-  
բէշի բժշկական համալսարանի, բոլոր

մարզերու մէջ մատուցելով յոյժ օգտաշատ  
ծառայութիւններ ուսէն և հայ հասարա-  
կութեանց, միշտ նուիրումով, միշտ անյոգ-  
նաբեկ:

Որով ի գնահատումն աւելի քան քառա-  
սուն տարիներու Ձեր մարդասէր բազմար-  
դին հասարակական և գիտական գործու-  
նէութեան, այլև ընդառայելով ումանահա-  
յոց թեմիդ բարեխնամ առաջնորդ գերա-  
շնորհ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկ-  
եանի միջնորդութեան, այսու Մեր հայրա-  
պետական կոնդակով կը պարգևատրենք  
Ձեզի ս. Ներսես Ծնորհալիի շքանշանով,  
լղելով Մեր օրհնութիւնը Ձեզի և Ձեր հա-  
րազատներուն Փրկչի հջման սուրբ Սեղա-  
նէն, աղօթքով ջերմ, որ Տէրը Ձեզի բոլո-  
րիդ պարգևէ արևշատ երկար տարիներ  
քաջառողջութեամբ ու ընտանեկան երջան-  
կութեամբ:

Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով և  
յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

ՎԱԶԳԻՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ  
ՎԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 6 մայիսի  
1978 փրկչական ամի,  
և ի տումարիս հայոց ՌՆԻԷ  
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի  
Հմր. 906


Հանդիսութեանը նախագահում էր Ռու-  
սիանիայի և Բուլղարիայի միացյալ թեմերի  
հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մար-  
տիկյանը: Ներկա էին նաև Ռուսիանիայի  
հայոց եկեղեցիներում ծառայող հոգևորա-  
կաններ, հայ և ումիմ գիտնականներ, ար-



վեստագետներ և թաղական խորհուրդների ներկայացուցիչներ:

Վեհափառ Հայրապետի անունից առաջնորդ սրբազանը խոսեց՝ վերջերս Մայր Աթոռում հաստատված սույն շքանշանի կարեվորության մասին: Ապա ամփոփ կերպով ներկայացրեց պրոֆ., դոկտ. Փամ-

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղյալ հուզիչ և անկեղծ շնորհակալական խոսքով հանդես եկավ պրն. Փամբուքչյանը՝ իրեն շնորհված պարգևի կապակցությամբ՝ մեկ անգամ ևս վերանորոգելով իր ուխտը՝ հավատարիմ մնալու իր Մայր եկեղեցու և ազգի ծառայության նվիրական գործին:



Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը պրոֆ. Գրիգոր Փամբուքչյանի կուրծքը զարդարում է  
 ա. Ներսես Ծնորհալու շքանշանով


բուքչյանի կենսագրությունը՝ կանգ առնելով վերջինիս եկեղեցանվեր, գիտական և ազգօգուտ գործունեության վրա:

Ապա հարգելի պրոֆեսորի կուրծքը զարդարեց «Ս. Ներսես Ծնորհալի» շքանշանով՝ հայտնելով նրան իր լավագույն ցանկությունները նրա ապագա եկեղեցանվեր, հասարակական գործունեության ճանապարհին:

Հանդիսության ավարտին թաղական և թեմական խորհուրդների կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում տ. Տիրայր եպիսկոպոսը, բաժակ բարձրացնելով Վեհափառ Հայրապետի կենացը, ցանկացավ Նրան երկար և արևատտ տարիներ, որպես հովվապետ Հայաստանյայց եկեղեցու:







**ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՊՈՒՐԿԱԶ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ Ս. ԽԱԶ  
ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՆՐՈՂԳՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջերս Պուրկազի հայոց ս. Խաչ եկեղեցու վարչության և մի շարք պատվական ազգայինների նվիրյալ ջանքերով վերանորոգվել է այդ եկեղեցին, որը և օժտվել է արտաքին գեղեցիկ մի զանգակատնով: Այս սույթիվ Մայր Աթոռում ստացված մի գրություն Գամիր Ծիրինի ստորագրությամբ հաղորդում էր հետևյալը, որից քաղվածա-



Պուրկազի հայոց վերանորոգված ս. Խաչ եկեղեցին իր նոր զանգակատնով

բար ներկայացնում ենք որոշ հատվածներ: «Պուրկազի և Այթոսի գերեզմանաքարերու արձանագրությունները որոնք անադարտ մնացած են մինչև 1901 թվականը, կվկայեն թե, Պուրկազ և Այթոս անցյալի մեջ ունեցած են գաղթականություն մը:

Պուրկազ ունեցած է իր եկեղեցին դեռ 1808 թվականին ս. Աստվածածին անու-  
նով:

Նույնիսկ այդ թվականներում հայություն գոյություն ունեցած է Պուրկազի մեջ, մե-

ծամասանությունը նավամատուցի աշխատավորներե քաղկացած:

Ավելի ուշ, Պոլսո պանքայի դեպքեն հետո, կրկին հայ գաղթականություն մը եկած ու ցրված է երկրին խորերը:

Նույնպես 1922-ին ընդհանուր տարագրութենե հետո հոծ թիվով հայեր եկած-ապաստանած են Պուլկարիո մեջ:

Այսօր Պուլկարիա իր մեջ կհամրե 20000 շունչ հայություն, իսկ Պուրկազ՝ 1400:

Ունի մեկ եկեղեցի մը քաղաքին ճիշտ կեդրոնը ս. Խաչ անունով:

Ս. Խաչ եկեղեցվո տոմարական արձանագրությունները կսկսին 21 ապրիլ 1853-ի Սահակ վարդապետի հովվության օրով:

Եկեղեցին ունի մեկ քահանա տեր Գարեգին Տյուկերյան անունով, մեկ լուսարար, երեք դպիր և ութը կիներե քաղկացած երգչախումբ մը:

Անցյալ տարի ավարտեցավ մեր եկեղեցվո կից «Պալքան թուրիթ»-ի «Պուլկարիա» նորակառույց քաաներկու հարկանի արդիական շքեղ հյուրանոցը: Այդ հյուրանոցին շինությամբ քաղաքի քաղաքակառուցման պլանին համաձայն եկեղեցին ալ փլցվելու ենթակա էր:

Եկեղեցական վարչությունը անմիջապես նախագուշակյան միջոցներ ձեռք առավ:

Հայ եկեղեցիի մասին պատմական տրվումներ հանձնվեցավ Սոֆիայի հնություններու պետական հաստատության

Սոֆիայի հնություններու պետական հաստատութենեն մասնավոր հանձնախումբի կողմե ստուգելե վերջ մեր եկեղեցին ճանչըցվեցավ որպես հնություն ու արձանագրվեցավ կալվածական հնություններու շարքին, գերծ մնալով որևէ փլուզումե:

Այդ տարված աշխատանքներե քանի մը ամիս հետո պաշտոնական նամակ մը



ստացավ եկեղեցական վարչությունը, որուն մեջ կհրահանգվէր, եկեղեցին իր գոյությունը պահելու համար ներկա տիան փնտրելն որոս բերել ու արտաքին երևույթին գեղեցիկ ձևավորում մը տալ, ներդաշնակելու համար շքեղ հյուրանոցին կողքին, ստանց խախտելու նաև հնության ձևը:

Անմիջապէս սկսան նախապատրաստական տեխնիկական աշխատանքները, և հետո՝ շինարարական գործը:

Նկարվեցան եկեղեցւո ներսի ու դուրսի մասերը:

Եկեղեցւո քարապատման գործին ձեռնարկվեց: Դուրսը, ներսը մարմար քարերով, վերնատունը, ինչպէս նաև կոչնակատունը գեղեցիկ հայկական ոճով, որով ե-

կեղեցին արտաքին վայելուչ երևույթ մը ստացավ:


Ընդհանուր շինարարությունը եկեղեցական վարչության արժեց 26000 լւա, որուն մեկ մասը ապահովելու համար փոխառություն կնքվեցավ քույր եկեղեցիներու հետ:

Եկեղեցւո ներկա վերանորոգումը խոշոր ձեռնարկ մըն էր, որ գլուխ հանվեցավ կարգ մը ազգայիններու զոհաբերության, նվիրումին, ինչպէս նաև վարչության աչալուրջ աշխատանքներուն շնորհիվ:

Փառք ու պատիվ բոլորին: Վերանորոգված եկեղեցին իր նոր զանգակատունով կոթող մը պիտի մնա եկող-գացող սերունդները հիշեցնող»:







ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցական հեռագիրը Նորին Սրբություն Պողոս Զ Պապի մահվան առթիվ	3
Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագիրը Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Ա Պապի ընտրության առթիվ	4
Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Ա Պապի հեռագիրը Ամենայն Հայոց Հայրապետին՝ ի պատասխան Նրա շնորհավորական հեռագրի	4
Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Մեծի Տանն Կիլիկիայի Տ. Տ. Գարեգին Ա աթոռակից կաթողիկոսի միջև փոխանակված հեռագրեր՝ լիբանանահայոց առաջնորդ տ. Տաճատ արքեպիսկոպոս Ուրֆայանցի մահվան առթիվ	5
Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի ողջույնի խոսքը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնի հանդիսությանց դահլիճում	6
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտոր Ֆիլիպ Փոթըրի քարիզալստյան խոսքը Ժընևում, կազմակերպության հանդիսությանց դահլիճում	11
Հաղորդագրություն	14
Հայոց Հայրապետի տասնմեկերորդ ուղևորությունը արտասահման. Լոնդոն	17
Հայոց Հայրապետի պաշտոնական այցելությունը Ժընև	32
Ամենայն Հայոց Հայրապետը թանկագին հյուրն է շվեյցարահայ համայնքի	48
ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր	69
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Հայ ազատագրական շարժումները 1780—1800 թվականներին և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի կյանքն ու գործունեությունը	72
ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Տաղանդաշատ ու հայրենաշունչ (ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)	82
ԱՎԵՏԻՍ ԱՐԵՂԱ ՄԱՆԴԱՅԱՆ—Ծուղր անապատի Կարմիր վանքը	91
ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ—Ծնորհալի նկարիչ-փորագրող «Գրիգոր որդի Մկրտչի»	99
ՄԻՀՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Հայ ժողովրդի ինքնապաշտպանության ճակատամարտերին մասնակցող հոգևորականներ	110
Ս. Ներսես Ծնորհալու անվան շքանշանի տվչություն	112
Բողոքարիայի Պորկազ քաղաքի հայոց ս. Խաչ եկեղեցու վերանորոգությունը	114

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄՍԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».  
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 31.08.1978 թ.: Ստորագրված է տպագրության 28.09.1978 թ.:  
Տպագրական 7/4, մամուլ + 9 ներդիր, թուղք 60x84 1/8, պատվեր 824

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

